



## Հիմնադիր և հրատարակիչ՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## № 110 2019

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Դավիթ Մելքոնյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

**Աշոտ Եսայան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

**Գևորգ Բաղդասարյան** Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

**Արմեն Մարուխյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

**Գևորգ Դանիելյան** Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի անդամ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Հովհաննես Սրբեկանյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Գառնիկ Սաֆարյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Արման Թաթոյան** Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Ռուբեն Մելիքյան** իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

### Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.  
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5  
Հեռախոս՝ 511-640  
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,  
orinakanutyun@prosecutor.am  
www.prosecutor.am  
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 25.04.2019թ.  
Ֆորմատ՝ 60x84 1/8  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 4,5 պայմ. մասով  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»  
հրատարակչության տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2019թ.

# ՔՐԻՄԻՆԱԿՐԻՄԻՆԱԿԱԿՈՒՅԻՆ

89 տարեկան հասակում մահացել է նախկին գլխավոր դատախազ Սուրեն Օսիպյանը ..... 3

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Արթուր Դավթյանն ընդունել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսիին ..... 5  
ԵՆԻՄՎ Հայաստանի հարցով համազեկուցողները հանդիպել են ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին ..... 6

## ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Նելլի Աշրաֆյան** Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի պատմական զարգացումը Հայաստանի քրեական օրենսդրությունում ..... 8  
**Հոփսիմե Խաչատրյան** Անչափահասների խմբային հանցավորությանը նպաստող որոշ գործոնների վերլուծություն ..... 14  
**Հովսեփ Քոչարյան** ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածը նոր օրենսդրական փոփոխությունների լույսի ներքո ..... 21  
**Հայկ Ավետյան** Օրենքի հետադարձ ուժի արգելքը “Nullum Crimen Sine Lege” սկզբունքի համատեքստում ..... 25  
**Արթուր Դամբարյան** Լռությունը և իրավական պայմանականությունները (համատեքստական վերլուծություն) ..... 31

## ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Հայկ Կետյան** «Որոշ նկատառումներ ներման խնդրանքի իրավունքի սահմանադրական բովանդակության վերաբերյալ՝ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության համատեքստում ..... 40

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Лилит Хачатрян** Применение принципа наиболее тесной связи в материальном и процессуальном праве ..... 45

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

**Անահիտ Այվազյան** Իրավունքի սուբյեկտի հիմնական հայեցակարգերը ..... 49  
**Սարգիս Արմենակյան** Հոռմեական դասական և հետդասական օրենսդրության կողիֆիկացիան ..... 58

## ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts ..... 60

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները ..... 72

## 89 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍԱԿՈՒՄ ՄԱՅՆՁԵԼ Է ՆԱԽԿԻՆ ՂԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ՍՈՒՐԵՆ ՕՍԻՊՅԱՆԸ

«Խոր ցավով տեղեկացնում ենք, որ 89 տարեկան հասակում իր մահկանացուն է կնքել Հայաստանի դատախազական համակարգի ամենահեղինակավոր դեմքերից մեկը, ականավոր իրավաբան, իր անձով և տեսակով դատախազության գրեթե երկու տասնամյակի պատմությունն ամփոփող, 1971 թվականից մինչև 1988 թվականը Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության գլխավոր դատախազի պաշտոնն զբաղեցրած Սուրեն Արտաշեսի Օսիպյանը:



Սուրեն Օսիպյանը ծնվել է 1930 թվականին, Ադրբեջանի Նուխի քաղաքում, ծառայողի ընտանիքում:

1947 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որը գերազանցությամբ ավարտելուց հետո ընդունվել է հիշյալ ֆակուլտետի ասպիրանտուրա՝ պետական իրավունքի մասնագիտացմամբ:

1959 թվականին պաշտպանել է թեկնածուական արտենախոսություն, դարձել իրավաբանական գիտությունների թեկնածու: 1960 թվականին սրացել է դոցենտի, իսկ 1998 թվականին՝ պրոֆեսորի կոչում, 1953-1971թթ. դասավանդել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում: Եղել է նույն ֆակուլտետի պետական և վարչական իրավունքի ամբիոնի վարիչ, ապա ֆակուլտետի դեկան:

1969-1990թթ. աշխատել է նաև ՀԽՍՀ գիտությունների ազգային ակադեմիայի Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում, եղել է վերջինիս գիտական խորհրդի անդամ:

Ս. Օսիպյանը եղել է Հայաստանի Կոմունիստական կուսակցության չորս համագումարների պատգամավոր, ընտրվել է ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի անդամ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի չորս գումարումների պատգամավոր:

1989 թվականից աշխատել է ԵՊՀ բարձրագույն դպրոցի գիտահետազոտական կենտրոնում, 1991 թվականից՝ Երևանի Հայկական բաց համալսարանում ղեկավարել է իրավական գիտությունների ամբիոնը:

17 տարի և 10 ամիս Ս. Օսիպյանը զբաղեցրել է Հայկական ԽՍՀ դատախազի պաշտոնը, ինչն աննախադեպ է ընդհանրապես ԽՍՀՄ դատախազների և դատախազությունների պատմության մեջ: Այս հանգամանքը վկայում է Ս. Օսիպյանի՝ ոչ միայն բարձր մասնագիտական հատկանիշներով օժտված անհատականություն լինելու, այլ նաև իբրև այդպիսին Խորհրդային Միության մասշտաբով մեծագույն հարգանք ու պատկառանք վայելելու մասին:

Այդ է վկայում նաև հանգամանքը, որ 1993 թվականից Ս. Օսիպյանն աշխատել է ՌԴ գլխավոր դատախազության ակադեմիայի կազմում գտնվող օրինականության և իրավակարգի ամրապնդման գիտահետազոտական ինստիտուտում, միաժամանակ եղել է ՀՀ գլխավոր դատախազության լիազոր ներկայացուցիչը Մոսկվայում, ԱՊՀ երկրների դատախազությունների կազմակերպչական խորհրդում:

Այդ ինստիտուտի գիտական խորհրդի կողմից Ս. Օսիպյանին շնորհվել է իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և սահմանադրական իրավունքի պրոֆեսորի կոչում:

1971 թվականին ստանձնելով Հայկական ԽՍՀ դատախազի պաշտոնը՝ Ս. Օսիպյանը չի խզել իր կապը ԵՊՀ-ի և ՀԽՍՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի հետ, եղել է դրանց գիտական խորհրդի անդամ, 17 տարի՝ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի պետական քննական հանձնաժողովի նախագահը: Զբաղվել է ակտիվ գիտամանկավարժական գործունեությամբ՝ դառնալով 9 մենագրության և ավելի քան 80 գիտական աշխատանքների հեղինակ: Իր երկարամյա անբասիր գործունեության ընթացքում արժանացել է համամիութենական և հանրապետական բազմաթիվ կոչումների և շքանշանների:

Որպես ՀԽՍՀ դատախազ՝ Ս. Օսիպյանն աչքի է ընկել ընդգծված սկզբունքայնությամբ, դատախազական համակարգի դիրքերը պետական կառավարման համակարգում ամրապնդելուն, դատախազական գործունեության արդյունավետության բարձրացմանը, կառուցվածքային, գործառույթային բարեփոխումներին ուղղված լրջագույն նախաձեռնություններով: Նրա օրոք ՀԽՍՀ դատախազության հեղինակությունը ԽՍՀՄ դատախազության համակարգում էականորեն բարձրացել է, և հատկապես օրենքների կատարման նկատմամբ դատախազական հսկողության, քննչական աշխատանքի, դատարաններում մեղադրանքի պաշտպանության և այլ ուղղություններով լուրջ ցուցանիշներ են արձանագրվել:

Լինելով խստապահանջ ղեկավար՝ մեծ ուշադրություն էր դարձնում կադրերի պարաստմանը, ընտրությանը և առաջխաղացմանը՝ միաժամանակ հոգաբարություն դրսևորելով աշխատակիցների աշխատանքային, կենցաղային պայմանների բարելավման խնդիրների լուծման հարցերում:

Նրա ղեկավարմամբ և անմիջական մասնակցությամբ ընդունված որոշումները ոչ միայն ուղեցույցային և ծրագրային նշանակություն ունեին, այլև վերածվում էին ուսուցման յուրահատուկ միջոցի՝ դատախազության աշխատակիցներին սերմանելով մասնագիտական պարտքի խոր ըմբռնում և նվիրում պետությանն ու աշխատանքին:

Ավանդապաշտությունն ու իրավական մտքի զարգացման միտումները համադրելու, բարդ իրավիճակներում կողմնորոշվելու և լավագույն լուծումները գտնելու նրա ունակությունը, աշխատանքային ձեռագիրը շարերի համար էր ուսանելի:

Անգնահատելի է Ս. Օսիպյանի ներդրումը պետաիրավական համակարգի ամրապնդման, իրավաբանության զարգացման, իրավաբանների սերունդների կրթման ասպարեզում, որոնք առանձնացնում են նրան իբրև պետական մրաժողությամբ օժտված, սկզբունքային, բարեխիղճ և իր գործին ու առաքելությանը նվիրված բարձր պրոֆեսիոնալի:

Ավագ գործընկերոջ, մեծ գիտնական-մանկավարժի, խոշոր անհատականության ծանր կորստի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն իր և ՀՀ դատախազության անունից խորը ցավակցություն է հայտնում նրա ընտանիքի անդամներին, հարազատներին, նրա հետ աշխատած, նրան ճանաչող բոլոր անձանց:



# ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ԴԵՄՊԱՆ ԼԻՆ ԹԵՅՍԻՆ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն այսօր ընդունել է Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան տիկին Լին Թեյսիին:



ՀՀ գլխավոր դատախազը նախ շնորհավորել է տիկին դեսպանին Հայաստանում դիվանագիտական բարձր առաքելությունն ստանձնելու կապակցությամբ՝ վստահություն հայտնելով, որ նրա գործունեությունը մեծապես կնպաստի երկու երկրների միջև բոլոր, այդ թվում նաև՝ իրավական օգնության ոլորտներում հարաբերությունների զարգացմանը: Արթուր Դավթյանը նշել է, որ ՀՀ դատախազության և Հայաստանում ԱՄՆ դեսպանատան միջև ավանդաբար ձևավորվել է փոխադարձ վստահության և համագործակցության այնպիսի բարձր մակարդակ, որը հնարավորություն է տվել անցած տարիներին իրականացնելու ՀՀ դատախազության կարողությունների զարգացմանը, դատաիրավական համակարգի բարեփոխմանը միտված կարևոր նախագծեր, օպերատիվ կերպով լուծելու քրեական վարույթի շրջանակներում միմյանց երկրներում իրավասությունների հետ կապված խնդիրներ:

ՀՀ գլխավոր դատախազն արժևորել է հատկապես անդրազգային հանցագործությունների դեմ պայքարում ԱՄՆ իրավապահ մարմինների հետ գործակցության փորձն ու փոխադարձ վստահությունը՝ նշելով, սակայն, որ ունեցած արդյունքները դեռևս բավարար չեն,

և անհրաժեշտ է ավելի բարձրացնել համագործակցության մակարդակը:

Դեսպան Թեյսիին շնորհակալություն է հայտնել ընդունելության համար և նշել, որ երկու երկրների իրավապահ մարմինների միջև փոխգործակցությունը նպաստում է հատկապես կազմակերպված հանցավորության, փողերի լվացման, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և միջազգային ընդգրկմամբ այլ հանցագործությունների դեմ համատեղ պայքարի արդյունավետության բարձրացմանը: Նա իր հերթին գոհունակություն է հայտնել ՀՀ դատախազության հետ հաստատված հարաբերությունների կապակցությամբ: «Հաճելի է հանդիպել ՀՀ գլխավոր դատախազին և քննարկել, թե ինչպես Միացյալ Նահանգները կարող են աջակից լինել կոռուպցիայի դեմ պայքարում Գլխավոր դատախազության ջանքերին՝ այդ թվում նաև ԱՄՆ իրավապահների հետ համագործակցության ընդլայնման միջոցով», - ասել է տիկին դեսպանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են կոռուպցիայի դեմ պայքարում, ինչպես նաև ՀՀ դատախազության համար առաջնահերթություն հանդիսացող մի քանի այլ ուղղություններով, մասնավորապես՝ թրաֆիկինգի, առանձին այլ



հանցատեսակների դեմ պայքարում, մարդու հիմնարար իրավունքների քրեաիրավական և քրեադատավարական պաշտպանության ոլորտներում Հայաստանում իրականացվող աշխատանքներն ու արդյունքները, դրանց շրջա-

նակներում համագործակցության հնարավորություններն ու հեռանկարները:

Արթուր Դավթյանը նշել է, որ կոռուպցիայի դեմ պայքարը շարունակում է մնալ ՀՀ դատախազության բացարձակ առաջնահերթություններից: Նախորդ տարվա ընթացքում այդ ոլորտում արձանագրած աննախադեպ արդյունքների տեմպը պահելու համար, ըստ ՀՀ գլխավոր դատախազի, նպաստավոր նախադրյալներ է ստեղծում հատկապես հասարակության կողմից իրավապահ մարմինների նկատմամբ ձևավորված վստահության և համագործակցության, ինչպես նաև դրանից ածանցվող հանցագործությունների բացահայտման առումով պահանջատիրության մթնոլորտը:

Արթուր Դավթյանը հավելել է, որ այս ոլորտում հիմնական խնդիրներից է համարվում երկրից հանցավոր ճանապարհով դուրս բերված հափշտակված ակտիվների վերադարձման իրավաչափ մեխանիզմների ստեղծումը՝

վստահություն հայտնելով, որ անհրաժեշտության դեպքում կոնկրետ քրեական գործերի շրջանակում ԱՄՆ իրավապահ մարմինների կողմից այդ հարցում կցուցաբերվի համապատասխան աջակցություն:

Արթուր Դավթյանը տիկին դեսպանին մանրամասն ներկայացրել է քրեական վարույթի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ մի քանի հիմնարար իրավունքների իրացման առավել բարձր երաշխիքներ ապահովելու նպատակով ՀՀ դատախազության նախաձեռնությունները և դրանց արդյունքները:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր, պայմանավորվածություն է ձեռք բերվել պահպանել միմյանց կողմից բարձրացվող խնդիրներին հնարավորինս արագ արձագանքելու ձևավորված փոխադարձաբար օգտակար պրակտիկան:

## 14.03.2019 | ԵՄԽՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՅՈՎ ՀԱՄԱՁԵԿՈՒՅՈՂՆԵՐԸ ՀԱՆԴՊԵԼ ԵՆ ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆԻՆ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի մոնիթորինգային հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներ Յուլիա Լովոչկինային և Անդրեյ Շիրցելին:



Արթուր Դավթյանը բարձր է գնահատել ՀՀ դատախազության և համազեկուցողների միջև հաստատված կայուն շփումների ձևաչափը հատկապես ներկայիս շրջափուլում, երբ

Հայաստանում իրականացվում են ժողովրդավարության, իրավունքի գերակայության ամրապնդմանն ուղղված բարեփոխումներ՝ ներառյալ նաև դատաիրավական համակարգում:

Համազեկուցողներն իրենց հերթին բարձր են գնահատել իրենց հետ հանդիպումներում ՀՀ գլխավոր դատախազի կողմից մշտապես դրսևորված՝ անկեղծ երկխոսության պատրաստականությունը, ինչն օգնում է դատաիրավական ոլորտում բարեփոխումների՝ Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների ու հանձնառությունների կատարման ընթացքի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվություն ստանալուն:

Հանդիպման ընթացքում քննարկվել են 2018թ. մայիսին համազեկուցողների՝ Հայաստան կատարած այցից հետո դատաիրավական ոլորտում իրականացված գործընթացները, հակակոռուպցիոն պայքարի ինստիտուցիոնալ նոր կառուցակարգերի ներդրմանը, կոռուպցիայի դեմ քրեաիրավական պայքարի արդյունքներին, առանձին քրեական գործերի

շրջանակներում հանրային և մասնավոր շահերի համադրված պաշտպանությանը, ընտանեկան բռնությունների դեմ պայքարում դատախազության դերակատարությանն առնչվող հարցեր:

«Վախձար դատախազը նշել է, որ նախորդ տարի աննախադեպ արդյունքներ են արձանագրվել կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարում՝ ինչպես քրեական հետապնդման, այնպես էլ պետությանը պատճառված վնասի հայտնաբերման և վերականգնման ուղղություններով՝ հիմնական նախադրյալը համարելով կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործում հանրության ակտիվ ներգրավվածությունը և նախաձեռնողականությունը: Նշելով, որ հիմնական շեշտադրումը պետք է կատարվի կոռուպցիայի կանխարգելման վրա, «Վախձար դատախազը հավելել է, որ դատախազությունը նաև ակտիվորեն ներգրավված է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ նոր մոդելների ներդրման շուրջ ընթացող քննարկումներում:

Անդրադառնալով համազեկուցողներին հետաքրքրող՝ քրեական առանձին գործերով մեղադրյալի կարգավիճակ ունեցող առանձին անձանց կողմից պետությանը տրվող նվիրատվությունների իրավաչափության հարցին՝ Արթուր Դավթյանը նշել է, որ խնդրո առարկայի առնչությամբ իրավական լուծումները շատ հստակ են: Անձի բացառիկ իրավունքն է տնօրինելու իր սեփականությունը, այդ թվում նաև՝ նվիրատվություն կատարելու հարցում, սակայն դա որևէ առնչություն չի կարող ունենալ նրանց նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման հետ: Այսինքն, սեփական ցանկությամբ նվիրատվություն կատարելու կամ չկատարելու հանգամանքից անկախ՝ քրեական գործի շրջանակներում նրանց նկատմամբ ի-

րականացվող քրեական հետապնդումը շարունակվում է: Եվ եթե քրեական գործերի նախաքննությամբ հիմնավորվում է այդ անձի կողմից պետությանն այս կամ այն չափով գույքային վնաս հասցրած լինելու հանգամանքը, ապա օրենքով նախատեսված ներգործության գործիքակազմով միջոցներ են ձեռնարկվում միայն վարույթի շրջանակներում պարզված վնասի վերականգնման ուղղությամբ, և վնասի կամուրջի վերականգնումն օրենքով նախատեսված բարենպաստ հետևանքներ է ունենում անձի համար:

Ընտանեկան բռնությունների օրենսդրության իրավակիրառ պրակտիկայի ձևավորման խնդրի համատեքստում անդրադարձ է կատարվել դատախազությանը վերապահված քրեադատավարական գործառույթներին: «Վախձար դատախազը նշել է, որ դատախազին բացառիկ իրավասություն է վերապահված հանրային կարգով, այսինքն՝ առանց տուժողի բողոքի առկայության, քրեական վարույթ հարուցելու ընտանեկան բռնության բոլոր այն դեպքերում, երբ, դատախազի գնահատմամբ՝ տուժողն ուժեղ կախվածության մեջ է բռնարարից և ի վիճակի չէ կամ չի ցանկանում հետամուտ լինելու իր իրավունքների պաշտպանությանը: Համազեկուցողներին տեղեկացվել է, որ «Վախձար դատախազի հրամանով մշակվել են նման իրավիճակները դատախազի կողմից գնահատելու և դրանից բխող անհրաժեշտ գործողություններ կատարելու հստակ ուղենիշեր, որոնց կիրառման հետևանքով նախորդ տարի հանրային մեղադրանքի կարգով ընտանեկան բռնության հատկանիշներով մի քանի տասնյակ քրեական գործեր են հարուցվել:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև համազեկուցողներին հետաքրքրող այլ հարցերի լայն շրջանակ:



**ՆԵՐԱՆՈՒՄ**

«Հայաստանի Հանրապետության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ»

**ՏՈՒՇՈՂԻ ՇԵՏ ՀԱՇՎԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՅ՝ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ  
ՉԱՐԳԱՅՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

«Հայաստանի Հանրապետության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Այս հանգամանքը նշանակում է, որ պետությունը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները՝ հանցավոր ոտնձգությունից պաշտպանելու իր քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը: Դրանով պայմանավորված՝ պետությունը պետք է իրականացնի այնպիսի քրեական քաղաքականություն, որը հնարավորություն կտա բացահայտելու և քրեական պատասխանատվության ենթարկելու հանցանք կատարած բոլոր անձանց:

Հանցագործության դեմ պայքարը ոչ թե մասնավոր անձի, այլ՝ պետության խնդիրն է, քանի որ հանրորեն վտանգավոր արարքը վնաս է հասցնում հանրային շահերին: Պահպանողական խնդիրը քրեական իրավունքի հիմնական պատմական կոչումն է, որը չի կարող կախված լինել ո՛չ համապատասխան պետության քաղաքական համակարգից, ո՛չ էլ՝ պետության տնտեսական առանձնահատկություններից: Սա նշանակում է, որ հանցագործության յուրաքանչյուր դեպքով պետության լիազոր մարմինները պարտավոր են հարուցել քրեական գործ և իրականացնել քննություն: Վրեժը՝ որպես անձի նկատմամբ կատարված հանցագործության համար հատուցման միջոց, վաղուց վերացվել է: Միաժամանակ՝ կարող ենք ասել, թե տուժողը չէ, որ կարող է ներել հանցագործություն կատարած անձին ու նրան ազատել քրեական պատասխանատվությունից:

Քրեական օրենքի մասնավոր կանխարգելում (պրևենցիա) ասելով՝ հասկացվում է հանցագործության մեջ մեղավոր ճանաչված ան-

ձանց կողմից նոր հանցանքների կատարման կանխումը, որն իրականացվում է ինչպես այդ անձանց նկատմամբ քրեական պատժի, այնպես էլ քրեաիրավական ներգործության այլ միջոցների կիրառմամբ: Կանխարգելիչ խնդրի լուծման միջոցները շատ են, և այդ շարքում պետք է առանձնացնել *տուժողի հետ հաշտեցման միջոցով քրեական պատասխանատվությունից ազատելը*, որի էությունը հանգում է տուժողին հանցագործությամբ հասցված վնասի կամովին հատուցման կամ այլ կերպ հարթման: Տուժողի հետ հաշտեցումը՝ տուժողի կողմից ներման դրսևորում է, որը հանգեցնում է ենթադրյալ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելուն:

Ներումը՝ որպես երևույթ, գործում է մարդկային տարբեր հարաբերություններում, այդ թվում նաև՝ իրավական կարգավորման ոլորտում: Այսինքն՝ դա ենթադրում է որոշակի դրական հետևանքների առաջացում այն անձի համար, ում նկատմամբ արվել է: Քրեական իրավունքում ինչպես պատիժը, այնպես էլ ներումն անձի վարքագծի վրա ազդելու միջոց է: Առանց ներելու քրեական արդարադատությունը կորցնում է իր իմաստը և վերածվում պատժիչ համակարգի, որտեղ հանցագործություն կատարած անձի ցանկացած փորձ, որն ուղղված է մեղքերը քավելուն, կորցնում է իր իմաստը: Այդ է պատճառը, որ նոր քրեական օրենսդրության մշակման հիմքում դրված է հումանիզմի գաղափարը:

Անկասկած՝ քրեական իրավունքը չի կարող հիմնվել միայն պատժողական քաղաքականության վրա: Այդ մասին է վկայում քրեական իրավունքում քրեական պատասխանատ-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 110 2019

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս, Երևան, 2007, էջ 18:



վությունից ազատելու ինստիտուտի նախատեսումը: Քրեական իրավունքն իր առջև դրված խնդիրների իրականացումը տեսնում է ոչ միայն պատժի, այլև պատժից ազատելու հնարավորության մեջ: Իհարկե, ՀՀ քրեական օրենսդրությամբ նախատեսված են անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը: Պետք է ընդգծել, որ քրեական օրենսդրության մեջ նման իրավունքի նախատեսումը բարոյական է, որովհետև էական նշանակություն ունի մարդկանց միջև առաջացող քրեաիրավական հարաբերությունների կարգավորման համար: Ցանկացած իրավիճակում բարոյական նորմը պետք է ունենա բարոյական հիմնավորում, քանի որ բարոյականությունը կարգավորում է մարդկանց ներքին գործողությունները, իսկ իրավունքը՝ նրանց արտաքին վարքագիծը:

Տուժողի հետ հաշտեցումը քրեական իրավունքի այն ինստիտուտներից է, որի միջոցով հանցագործություն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Տուժողի հետ հաշտվելու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելով՝ պետությունը դրսևորում է հումանիզմ հանցագործություն կատարած անձի նկատմամբ: Պետությունը պատժողական քաղաքականությունից անցնում է հաշտեցման կամ վերականգնողական արդարադատության, որի նպատակն է տուժողի իրավունքների վերականգնումը, նրան հասցված վնասի հատուցումը, մեղավորի կողմից իր մեղքերի քավումը, հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու պարտավորություն վերցնելը:

Վերականգնողական արդարադատությունը՝ որպես քրեական քաղաքականության իրականացման միջոց, ամբողջ աշխարհում ձեռք է բերել լայն կիրառություն: Այդ մասին են վկայում միջազգային կառույցների կողմից ընդունված ակտերը, որոնց հիմքում ընկած է տուժողի հետ մեղադրյալի հաշտության գաղափարը: Արտադատական կարգով քրեական վեճերի լուծման գաղափարն իր պաշտպանությունն ստացավ Եվրոպական խորհրդի անդամ երկրների նախարարների կոմիտեի կողմից: Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեն 1999 թվականի սեպտեմբերի 15-ին ընդունեց №R (99) Հանձնարարականը, որում ներկայացվե-

ցին քրեական գործերով հաշտեցման հիմնական սկզբունքները, իրավական հիմքերը, ինչպես նաև կազմակերպման և զարգացման հարցերը: Դա ներկայացվում է որպես ընթացակարգ, որում զոհը և իրավախախտը (մեղադրյալը) հնարավորություն ունեն, երրորդ կողմի (միջնորդի) օգնությամբ, կամավոր մասնակցելու հանցագործությամբ առաջացած խնդիրների լուծմանը: Եթե իրավախախտը զղջում է և պատրաստ է հատուցել վնասը, ապա կազմվում է հաշտեցման պայմանագիր, որի կատարումը հսկվում է և դրանով ազդում քրեական գործի լուծման վրա: Քրեական պատասխանատվությունից ազատելու և վերականգնողական արդարադատության ամրագրման համար առանձնակի կարևորություն ունեն Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու նվազագույն չափորոշիչ կանոնները (Պեկինյան կանոնները), որոնք հաստատվել են ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով:

Տուժողի հետ հաշտությունը՝ որպես անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք, ունի իր պատմական ակունքները: Որպես քրեական իրավունքի ինստիտուտ՝ դա բավականին հին է և պատմական զարգացման տարբեր փուլերում ստացել է ոչ միանշանակ կիրառություն:

Քրեական օրենսդրության պատմական զարգացումը ցույց է տալիս, որ հաշտեցման ինստիտուտն ունի վաղեմի պատմություն և քրեական օրենսդրության մեջ ստացել է տարբեր իրավական կարգավորում: Այդպիսի զարգացման մասին է վկայում նաև քրեական օրենսդրությամբ հաշտեցման ինստիտուտի նախատեսումը, որն անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք է: Իհարկե, քրեական իրավունքում նշված ինստիտուտի նախատեսման ու դրա կիրառության հետ կապված փոփոխությունները պայմանավորված են տարբեր գործոններով, մասնավորապես՝ հանցավորության վիճակով, պետության ժողովրդավարական բնույթով, հանրային և մասնավոր շահերի պաշտպանության հարաբերակցությամբ:

Հաշվի առնելով Հայաստանի պատմաքաղաքական անցյալը՝ այն, որ Արևելյան Հայաս-

տանը դեռևս 19-րդ դարի սկզբից միացել է Ցարական Ռուսաստանին, իսկ 1922 դեկտեմբերի 30-ին ընդգրկվել ԽՍՀՄ կազմի մեջ, բնականաբար, նշված ժամանակահատվածներում կիրառվել են նշված սուբյեկտների օրենսդրությունները:

Հաշտեցմամբ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը դրվեցին 1864 թվականի Քրեական դատավարության կանոնադրությամբ: Կանոնադրության համաձայն՝ քրեական գործը չէր կարող կարճվել, եթե տուժողը հրաժարվում է քաղաքացիական հայցից, իսկ եթե նա հրաժարվում էր քրեական հետապնդումից, ապա քաղաքացիական հայցը կարճվում էր: Օրենսդրական կարգավորումից հետևում է, որ հաշտությունն ինքնուրույն ինստիտուտ է և կապված չէ հանցագործությամբ հասցված վնասի հատուցման հետ: Իհարկե, հաշտությունից հետո տուժողն իրավունք ուներ ներկայացնելու քաղաքացիական հայց:

Կանոնադրության վերլուծությունը թույլ է տալիս նշել, որ հաշտեցման քաղաքականությունն ընկած էր ամբողջ օրենսդրության հիմքում, որովհետև օրենսդիրը դատարանին պարտավորեցնում էր քննարկել հաշտեցման հարցը և միայն այն ժամանակ, երբ հաշտեցում հնարավոր չէր, կայացնել դատավճիռ:

Պատիժների մասին Կանոնադրությունում (1864թ.) տեղ գտան նորմեր, որոնք բացառում էին որոշ արարքների հանցավոր կամ պատժելի լինելը, մասնավորապես՝ մինչև 10 տարեկան անչափահասի կամ անմեղսունակ անձի կողմից հանրորեն վտանգավոր արարք կատարելը: Անձն ազատվում էր քրեական պատժից, եթե հանրորեն վտանգավոր արարքը կատարել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում: Հաշտարար դատավորներն իրավունք ունեին պատժից ազատելու այն անչափահասներին, որոնց 14 տարին չէր լրացել, և նրանց հանձնել ծնողների կամ խնամակալների դատարարականությանը<sup>2</sup>:

1903 թվականին ընդունվեց Քրեական Կանոնադրությունը, որը պետք է փոխարիներ Քրեական Պատիժների Կանոնադրությանը: Քրեական Կանոնադրությունը քրեական ինստիտուտների համակարգված համակցություն է, որում իր տեղն ուներ նաև քրեական պատժից (պատասխանատվությունից) ազատելը: Կանոնադրության մեջ իրենց ամրագրումն ստացան քրեական պատասխանատվությունից ազատելու այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ անմեղսունակ անձի կողմից հանցանք կատարելը (հոդվածներ 39, 41), դատտիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելը (հոդված 55, մաս 2)՝ մինչև մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը, մեղադրական դատավճիռ կայացնելը կամ մեղադրական դատավճիռն ի կատար ածելը՝ վաղեմության ժամկետի լրանալը (հոդված 51, մաս 5)<sup>3</sup>:

Հաշտի առնելով այն հանգամանքը, որ հաշտեցումն իր ամրագրումն էր ստացել քրեական դատավարության կանոնադրությամբ, որոշ դատավարագետներ այն կարծիքին են, թե մեղադրանքը թողնելով մասնավոր անձին՝ ում շահերը ոտնահարվել են հանցագործությամբ, բացի իր շահերից՝ ծառայում է նաև հանրայինին, այսինքն՝ միաժամանակ բավարարվում է երկու շահ՝ մասնավոր և պետական<sup>4</sup>: Այս առաջադիմական գաղափարախոսությունը զարգացվեց նաև այլ գիտնականների կողմից, այսպես՝ հայտնի ռուս պրոֆեսոր Ա.Ա. Ժիժիլենկոն Սանկտ Պետերբուրգի համալսարանում 1916 թ. իր ելույթում նշել է. «Քրեական օրենսգիրքը պետք է հստակ ցույց տա, որ հանցավորության դեմ պայքարը չի սահմանափակվում միայն պատիժների կիրառմամբ, և պատիժի հետ կամ փոխարենը նպատակահարմար է կիրառել նաև այլ միջոցներ»<sup>5</sup>:

Ելնելով նախահեղափոխական քրեական և քրեադատավարական օրենսդրության վերլուծությունից՝ կարող ենք առանձնացնել հաշ-

<sup>2</sup> Տե՛ս Российское законодательство X-XX веков, //под ред. О.И. Чистякова, М., 1984-1994, 9 т. Т. 4, էջ 392:

<sup>3</sup> Российское законодательство X-XX веков, //под ред. О.И. Чистякова, М., 1984-1994, 9 т. Т. 4, էջ 279, 282, 284, 285, 288, 292, 293:

<sup>4</sup> Տե՛ս Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. Т. II. СПб.: Издательство "АЛЬФА", 1996, էջ 165:

<sup>5</sup> Մեջբերումը ըստ Լ.Վ. Գոլովկոյի՝ տե՛ս Головки Л.В. Современная практика освобождения от уголовного преследования в Шотландии //Вестник Моск. ун-та. Сер. 11. Право. 1998. №2. էջ 74:

տեցման ինստիտուտի հետևյալ առանձնահատկությունները՝

ա) արարքներ, որոնցով քրեական գործի հարուցումը կախված էր տուժողի կամահայտությունից, բայց քրեական գործ հարուցելուց հետո քննությունն իրականացվում էր ընդհանուր կարգով,

բ) արարքներ, որոնցով դատարանում մեղադրանքի հիմնավորումը դրված էր մասնավոր մեղադրողի վրա, և այդ դեպքում օրենքը տուժողին օժտել էր ոչ միայն մեղադրելու իրավունքով, այլև քրեական հետապնդումից հրաժարվելու: Ահա այն առանձնահատկությունները, որոնք, հաշտեցման ինստիտուտի հետ կապված՝ տեղ էին գտել նախահեղափոխական օրենսդրության մեջ:

Պետք է նշել, որ նախկին շատ կարգավորումներ այսօր նորից վերհանում են: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով նախատեսվում է, որ մասնավոր մեղադրանքի գործերով մեղադրանքի պաշտպանությունը դատարանում պետք է իրականացնի մասնավոր մեղադրողը: Այսօր հաշտեցման ինստիտուտի առանձին դրսևորումներ, որոնք կիրառվում էին Ցարական կայսրության օրենքներով, փորձում ենք կիրառել նոր օրենսդրության մեջ: Այսինքն՝ ինչպես ասում են. «ուրեմն... որպես կանոն՝ նորը լավ մոռացված հինն է»:

1903 թվականի Քրեական կանոնադրությունը գործել է նաև Հայաստանի Առաջին հանրապետությունում: Մասնավորապես՝ անկախության հռչակումից հետո Հայաստանի Խորհուրդը 1918 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունեց նաև «Նախկին Ռուսական Կայսրության օրենքների գործադրման մասին Հայաստանի տերիտորիայի վրա» օրենքը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակավոր գործողության մեջ էին դրվում Ռուսական կայսրության օրենքները<sup>6</sup>:

Հայաստանում խորհրդային կարգերը հաստատումից հետո՝ Հայհեղկոմի 1920թ. դեկտեմ-

բերի 21-ի դեկրետով, Հայաստանի տարածքում չգործող հայտարարվեց Առաջին հանրապետության օրենսդրությունը, իսկ վերացված օրենսդրության փոխարեն՝ գործող համարվեց ՌՍՖՍՀ օրենսդրությունը, այն փոփոխություններով ու լրացումներով, որոնք անհրաժեշտ կհամարեր հեղափոխական կառավարությունը՝ ելնելով հանրապետության առանձնահատկություններից<sup>7</sup>:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո էապես փոխվեց ամբողջ օրենսդրությունը և, հիմքում ունենալով դասակարգային պայքարը՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում որդեգրվեց նոր գաղափարախոսություն՝ պայքարը դասակարգային թշնամիների դեմ: Ցարական Ռուսաստանի քրեական իրավունքի հիմքում ընկած շատ սկզբունքներ՝ որպես բուրժուական գաղափարներ, մերժվեցին և տեղ չգտան նոր մշակվող օրենսդրության մեջ: Քրեական իրավունքը ճանաչվեց այն կարևոր միջոցը դասակարգային թշնամիների դեմ պայքարի համար, ինչը նշանակում է, որ խոսել հաշտեցման մասին ավելորդ էր:

Խորհրդային քրեական իրավունքն իր ձևավորման սկզբնական փուլում խնդիր ուներ ռեպրեսիայի միջոցով պահպանելու աշխատավոր զանգվածների շահերից բխող հասարակական հարաբերությունների համակարգը<sup>8</sup>: Սա նշանակում է, որ եթե քրեական իրավունքի հիմքում ընկած է դասակարգային պայքարի գաղափարը, ապա հաշտեցման մասին խոսք լինել չէր կարող:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո անձին քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտն իր դրսևորման ձևերով զարգացում չստացավ, քանի որ Խորհրդային կառավարությունը հերքում կամ մերժում էր այն ամենը, ինչ բուրժուական էր: Հեղափոխությունից հետո ընդունվող բոլոր Դեկրետները, որոնց հիմքում ընկած էր դասակարգային պայքարի գաղափարը, չէին կարող իրենց մեջ տեղ տալ քրեական պատասխանատվությունից ազատելուն: Բոլոր դեպքերում պետք է

<sup>6</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919թթ., մաս 1, Երևան, 1919թ., էջ 27-31:

<sup>7</sup> Տե՛ս Ղազինյան Գ.Ս. Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևան, 2001թ., էջ 74:

<sup>8</sup> Տե՛ս Сборник документов по истории уголовного законодательства СССР и РСФСР, 1917-1952, /Под ред. И.Т. Голякова, М., 1953, էջ 57-58:

ընդգծել, որ ամբողջությամբ վերացված չէր քրեական պատասխանատվությունից ազատելու գաղափարը: Այսպես՝ ՀԿԳԿ 1918 թվականի նոյեմբերի 30-ի Դեկրետը, որը նվիրված էր «ՌՄՖՍՀ ժողովրդական դատարանի մասին», որում նշվում է, որ ժողովրդական դատարանն իրավունք ունի իր ներքին համոզմամբ որոշելու պատժի չափը, ինչպես նաև կայացնելու դատավճիռ՝ պայմանական կամ ոչ պայմանական կարգով մեղադրյալին պատժից ազատելու մասին: Դատարանի հայեցողությանն էր թողնված պատժից պայմանական ազատելու հիմքերի և պայմանների որոշումը:

Հետհեղափոխական օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդրության մեջ չնախատեսվեց անձին քրեական պատասխանատվությունից ազատելու նշված հիմքը:

Խորհրդային քրեական իրավունքի զարգացման կարևոր փուլ պետք է համարել 1922 թվականի հունիսի 22-ին ՀԽՍՀ քրեական օրենսգրքի ընդունումը: Նշված քրեական օրենսգրքի վերլուծությունից կարելի է հետևություն անել դրա էության մասին, մասնավորապես՝ աշխատավորների իրավական պաշտպանությունը հանրորեն վտանգավոր տարրերից: Այդ օրենսգրքում որևէ կարգավորում չկար տուժողի հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից անձին ազատելու մասին:

Խորհրդային քրեական իրավունքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեցան 1958 թվականի դեկտեմբերի 15-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Միութենական Հանրապետությունների քրեական օրենսդրության հիմունքները»: Նշված իրավական ակտի 33-րդ հոդվածի 1-ին կետով տուժողի հետ հաշտությունը նախատեսվեց ոչ թե որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք, այլ՝ պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Այնուհետև՝ 1961 թվականի ՀԽՍՀ քրեական օրենսգրքով առաջին անգամ առանձին հոդված նվիրվեց քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելուն (հոդված 46): Իհարկե, նշված հոդվածում բացակայում էր

տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը, սակայն օրենսգրքի 35-րդ հոդվածում նախատեսվեց որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք: Այսինքն՝ այն, ինչ նախատեսված էր հիմունքներում, նույնությամբ իր արտացոլումն ստացավ քրեական օրենսգրքում:

Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի պատմական զարգացումը, մինչև գործող քրեական օրենսգրքի ընդունումը, մեզ հիմք է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները՝

- Տուժողի հետ մեղադրյալի հաշտությունը կիրառվում է միայն մասնավոր մեղադրանքի գործերով.
- Տուժողի հետ մեղադրյալի հաշտվելը՝ որպես քրեական գործը կարճելու հիմք, նախատեսվել է միայն քրեական դատավարության օրենսգրքով.
- Տուժողին հասցված վնասի հատուցումը քրեական օրենսդրությամբ նախատեսված է եղել որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Առաջին անգամ տուժողի հետ հաշտվելու հիմքով մեղադրյալին քրեական պատասխանատվությունից ազատելու քրեաիրավական հիմքերը դրվեցին անկախության հռչակումից հետո մշակվող նոր քրեական օրենսդրությամբ: Դա առաջին անգամ նախատեսվեց 1996 թվականի փետրվարի 17-ի ԱՊՀ երկրների համար մշակված մոդելային քրեական օրենսգրքով, որը հիմք հանդիսացավ Հայաստանի Հանրապետությունում և ԱՊՀ այլ երկրներում նոր քրեական օրենսգրքերի մշակման և ընդունման համար:

Պետք է նշել, որ, մինչև քրեական օրենսգրքի ընդունումը, մեղադրյալի հետ տուժողի հաշտվելու հիմքով քրեական գործի կարճումը կամ քրեական հետապնդման դադարեցումն իր ամրագրումն ստացավ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (1998թ.), որի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը, կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեա-

կան հետապնդումը դադարեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում»<sup>9</sup>:

Որպես քրեական պատասխանատվությունից անձին ազատելու հիմք՝ դա նախատեսվեց ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով, որում, մասնավորապես, սահմանվեց. «Ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա հաշտվել է տուժողի հետ և

հատուցել կամ այլ կերպ հարթել է նրան պատճառած վնասը»:

Տուժողի հետ մեղադրյալի հաշտվելու ինստիտուտի պատմական զարգացումը ցույց է տալիս, որ հասարակության զարգացման տարբեր փուլերում և ժամանակներում կողմերի հաշտությունը հիմք է ընդունվել տարբեր տեսակի վեճերի լուծման համար: Այդ է պատճառը, որ հաշտությունը քրեական օրենսդրության մեջ միանշանակ կարգավորում չի ստացել:



<sup>9</sup> Պետք է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդունման պահին 37-րդ հոդվածում տուժողի հետ հաշտվելու վերաբերյալ որևէ հղում չկար քրեական օրենսգրքին, որովհետև ՀՀ քրեական օրենսգիրքն ընդունվել է ավելի ուշ՝ 2003թ. օգոստոսի 1-ին:

**ՀՈՒՓՍԻՄԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի  
իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի  
և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս,  
ոստիկանության մայր,  
Երևանի պետական համալսարանի  
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆՅԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՏՈՂ  
ՈՐՈՇ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման համար կարևոր է դրան նպաստող գործոնների ուսումնասիրությունը, քանի որ սկզբնական շրջանում անհրաժեշտ է ներգործել այն ամենի վրա, ինչը հասարակությունում առաջացնում և պայմանավորում է այդ բացասական երևույթը:

Անչափահասների խմբային հանցավորությանը՝ որպես հանցավորության բաղկացուցիչ մասի, բնութագրական են ընդհանուր հանցավորության հատկանիշները:

Անչափահասի անձի ձևավորումը տեղի է ունենում կենսագործունեության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ընտանեկան հարաբերությունները, կրթությունը, աշխատանքը և ժամանցը, որոնք էլ ազդում են աճող սերնդի հոգևոր, ֆիզիկական և ինտելեկտուալ զարգացման վրա: Հետևաբար՝ նշված ոլորտներում էլ պետք է փնտրել անչափահասների շրջանում տեղի ունեցող երևույթների վրա բացասաբար ազդող գործոնները:

Անչափահասի կյանքում կարևոր դերակատարում ունի ընտանիքը: Ինչպես արդարացիորեն նշում է Վ. Ե. Էմինովը՝ ընտանիքը մարդու կենսագործունեության առաջին և հիմնական բջիջն է, որով էլ պայմանավորված է պետության ուժն ու թուլությունը<sup>1</sup>:

Ընտանիքը, ավանդաբար զբաղեցնելով առաջնային տեղն անձի ձևավորման գործըն-

թացում, մեծ հետաքրքրություն է ներկայացնում հետազոտողների համար: Դրանով էլ պայմանավորված՝ անչափահասների դաստիարակության խնդիրները երկար տարիներ եղել են հետազոտողների հատուկ ուշադրության օբյեկտներ<sup>2</sup>, քանի որ ընտանիքն այն հիմնական ինստիտուտն է, որտեղ ընթանում է անչափահասների անձնային հատկանիշների ձևավորման սկզբնական և հետագա գործընթացը<sup>3</sup>: Ընդ որում՝ անչափահասը ոչ միայն և ոչ այնքան դաստիարակության օբյեկտ է, նա ամենից առաջ պատշաճ դաստիարակության իրավունքի կրող է, որի իրականացումից է կախված դաստիարակության գործընթացի արդյունքը<sup>4</sup>:

Անչափահաս անձի ձևավորման և զարգացման վրա ընտանիքի մեծ ազդեցությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ՝ անչափահասների մեծամասնության համար հենց ընտանիքում է սկսվում սոցիալականացման սկզբնական գործընթացը: Երկրորդ՝ անչափահասների մեծամասնության համար կենսագործունեությունն ընտանիքում զբաղեցնում է տևական ժամանակահատված: Երրորդ՝ ընտանիքը հասարակության համար կարևոր գործառույթներ իրականացնող ինստիտուտ է, որոնք կապված են մարդկության վերարտադրման, հասարակական արտադրության մեջ մարդու մասնակցության, երեխանե-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 110 2019

<sup>1</sup> Տե՛ս Эминов В.Е. Причины преступности в России. Криминологический и социально-психологический анализ. М., 2011, էջ 79:  
<sup>2</sup> Տե՛ս Демидова-Петрова Е.В. Методология познания преступности несовершеннолетних и борьбы с ней: от истории к современности: монография. Казань: КЮИ МВД России, 2017, էջ 66:  
<sup>3</sup> Տե՛ս Кон И.С. Психология ранней юности. М., 1989, էջ 107, Кошелева Е.В. Криминологическое изучение влияния социально-негативных свойств семьи на преступность несовершеннолетних: дис. ... канд. юрид. наук. М., 2005, էջ 191:  
<sup>4</sup> Տե՛ս Нечаева А.М. Правонарушения в сфере личных семейных отношений. М., 1991, էջ 8:

րի դաստիարակության և կենցաղային գործունեության իրականացման հետ<sup>5</sup>: Վերջ ի վերջո՝ ընտանիքն այն ինստիտուտն է, որտեղ անհատը սովորում է սոցիալական կյանքին, ձեռք է բերում կառավարելու և հնազանդվելու, հասարակության մյուս անդամների հետ ներդաշնակ կյանքի փորձ<sup>6</sup>:

Անձի սոցիալականացման վրա ազդում են այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են ընտանիքի կազմը, ծնողների և երեխաների միջև փոխըմբռնման տեսակը, ընտանեկան դաստիարակության ոճը և այլն: Այստեղ և ոչ պակաս նշանակություն ունեն նաև ծնողների վարքագիծը, արժեհամակարգը, համոզմունքները<sup>7</sup>:

Այսպես՝ հետազոտության ենթարկված խմբի կազմում հանցանք կատարած անչափահասները մեծ մասամբ դաստիարակվել են ընտանիքներում, ընդ որում՝ նախքան հանցանք կատարելն ապրել են լիարժեք ընտանիքում, որտեղ եղել են և՛ հայրը, և՛ մայրը: Այդպիսի ընտանիքներում դաստիարակվել են մեր կողմից ուսումնասիրված անչափահասների<sup>8</sup> 88,1%-ը: Այս ցուցանիշը բարձր է նաև հարցման ենթարկված խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների մեջ<sup>9</sup>, որի համաձայն՝ 63,3%-ն է նշել, որ ապրում է լիարժեք ընտանիքում, ինչը ևս փաստում է վերոգրյալը, որ ցուցանիշը չի բացառում ընտանիքում միջանձնային հարաբերությունների ձևախեղման հնարավորությունները: Հարցման ենթարկվածների 36,7%-ը պատասխանել է, որ ապրում է մեկ ծնողի (մեծամասնությունը՝ մայրիկի) հետ:

Խմբի կազմում հանցանք կատարած անչափահասի կյանքում մեծ մասամբ բացակայում է հայր ծնողը: Իսկ հոր բացակայությունը թուլացնում է անչափահասի սոցիալական դիր-

քերը, այն դեպքում, երբ երկու ծնողի առկայությունն անչափահասին դրական է ներկայացնում հասակակիցների շրջանում<sup>10</sup>:

Ինչպես արդեն նշել ենք՝ անչափահասների անձնային դրական հատկանիշների ձևավորման համար կարևոր է ընտանիքի անդամների միջև փոխհարաբերությունների բնույթը: Խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների 25,0%-ը նշել է, որ ընտանիքում բարի, լավ հարաբերություններ են: Նույնքան էլ նշել են, որ ընտանիքում ոչ հաճախակի, բայց լինում են վեճեր, կոնֆլիկտներ, իսկ 33,3%-ը՝ հաճախակի են լինում վեճեր, կոնֆլիկտներ: Եվ հատկապես ուշագրավ է 16,7%-ի պատասխանը, որ ընտանիքում բացարձակ անտարբեր վերաբերմունք է միմյանց նկատմամբ, ինչը, կարծում ենք՝ մտահոգությունների տեղիք է տալիս: Հարցվածների ընդամենը 16,7%-ն է գոհ ծնողների ուշադրությունից, քանի որ վերջիններս միշտ հետքերքվում են իրենց հաջողություններով, իսկ 50,0%-ը՝ ծնողների հոգատարությունից՝ սնվելու և հագնվելու կապակցությամբ: Եվս, մեկ ուշագրավ ցուցանիշ. 33,3%-ը մոռացության են մատնված ծնողների կողմից, ինչն էլ ներգործում է անչափահասի հետագա զարգացման և անձնային հատկանիշների ձևավորման վրա:

Անչափահասների սոցիալականացման վրա էականորեն ազդում է նրանց դաստիարակությունը:

Հարկ է նշել, որ, ՀՀ Սահմանադրության 36 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանելու իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք և ներդաշնակ զարգացման մասին: Թեև այսօր շատ ծնողների մեջ առկա է դաստիարակության

<sup>5</sup> Տե՛ս Игошев К.Е., Миньковский Г.М. Семья. Дети Школа. М., 1989. էջ 19-28:

<sup>6</sup> Տե՛ս Шнейдер Л. Б. Семейная психология.– М.: Академический Проект, 2011.– էջ 736:

<sup>7</sup> Տե՛ս Маматов О. В. Семья как важнейший институт социализации // Молодой ученый.– 2014.– №6.– էջ 865–867:

<sup>8</sup> Այս հոդվածի շրջանակում վերլուծությունն իրականացրել ենք ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 24.06.2016 թվականին ստացված ՀՀ դատական դեպարտամենտի Ե–4102 գրությամբ տրամադրված 2010- 2015 թվականների քրեական գործերի ցանկի հիման վրա [www.datalex.am](http://www.datalex.am) կայքից վերցրած փորձառնական նյութերի տվյալների ուսումնասիրությամբ:

<sup>9</sup> Տվյալները հիմնված են 2010-2017թթ. ընթացքում մեր կողմից իրականացված՝ խմբի կազմում հանցանք կատարած 100 անչափահասի շրջանում սոցիոլոգիական հարցումների արդյունքների վերլուծության վրա:

<sup>10</sup> Տե՛ս Кожевникова М. Н., Агафонова О. Н. Особенности влияния семьи на социализацию подростков // Проблемы педагогики.– 2010.– №10(21).– էջ 36–38:

գործառույթի իրականացման անընդունակություն, որը հաճախ վատացնում է երեխաների՝ առանց այն էլ բարդ դրությունը: Քանի որ երեխաներն ի դեմս ծնողների ցանկանում են տեսնել հենարան, ունեն նրանց աջակցության կարիքը, ակնկալում են նրանց աջակցությունը, սակայն բախվում են այդ աջակցությունը ցուցաբերելու անընդունակությանը (առավել հազվադեպ՝ ցանկության բացակայությանը): Խոսելով այն ընտանիքների մասին, որտեղ ծնողները չեն կարողանում դաստիարակել երեխաներին, կարելի է ասել, որ այդտեղ քայքայված են ներընտանեկան կապերը, բացակայում է մեծերի և երեխաների համատեղ գործունեությունը, բացակայում են միմյանց միջև հուզական կապերը: Դա հանգեցնում է այն արդյունքին, որ ծնողներն ի զորու չեն կանխելու անչափահասների կենսագործունեության այլ ոլորտներում ծագած կոնֆլիկտները:

Այս համատեքստում կարևոր են ծնող-զավակ փոխհարաբերությունները: Այսպես՝ հարցման ենթարկված անչափահասների 41,7%-ն է նշել, որ սիրում է ծնողներին, 16,7%-ը նշել է, որ հարգում է, 8,3%-ը՝ վախենում է, իսկ 33,3%-ը նշել է, որ համբերում է, քանի դեռ կախվածության մեջ է նրանցից: Իսկ այն հարցին, թե ո՞ւմ կդիմեիք օգնության համար, ընդամենը հարցվածների 8,3%-ն է պատասխանել՝ ծնողներին, իսկ 83,4%-ը՝ ընկերներին: Այս ցուցանիշները ևս փաստում են ծնող-զավակ «կապի» բացակայությունը:

Վերջ վերջո՝ ծնողներն իրենց երեխաների համար պետք է ամեն ինչում լինեն օրինակ և հենարան: Նրանք պետք է օգնեն անչափահասին հաղթահարել իր խնդիրները: Մինչդեռ հարցման արդյունքով անչափահասների 25,0%-ը նշել է, որ ծնողը տառապում է ակոհոլամոլությամբ, իսկ 8,3%-ը՝ հոգեկան հիվանդությամբ: Դեռ ավելին՝ 16,7%-ը նշել է, որ ծնողներն ունեն դատվածություն: Եվ այստեղ մենք գործ ունենք ծնողի վարքագծի բացասական օրինակի և անչափահասի վրա բացասական ներգործության հետ: Եվ, բացի այդ՝ ընտանիքի ազդեցությունն անձի վրա կարող է լինել ինչպես դրական,

այնպես էլ բացասական: Այստեղ ստացվում է, որ գործ ունենք ընտանիքի բացասական ազդեցության հետ:

Անձի վրա ընտանիքի բացասական ազդեցությունը պայմանավորված է առաջին հերթին այն հանգամանքով, որ ընտանիքը կարող է հանդիսանալ անձի բացասական սոցիալականացման ոլորտ: Եվ երկրորդ՝ ընտանիքը կարող է հանդիսանալ կոնֆլիկտների աղբյուր, որոնք ընկած են ընտանեակենցաղային հանցագործությունների հիմքում<sup>11</sup>:

Ընտանիքի բացասական ազդեցությունը կարող է արտահայտվել անչափահասի մեջ հակահասարակական հատկանիշների ձևավորման ձևով կամ էլ ընտանիքի կողմից անչափահասի նկատմամբ **անվերահսկելիությամբ**:

Եթե ծնողները հակահասարակական կենսակերպ են վարում, հանցանք են կատարում, ապա նրանք ուղղակի իրենց բացասական փորձը փոխանցում են երեխաներին: Ընտանիքի կողմից անչափահասի անձի ձևավորման նկատմամբ անվերահսկելիությունն ուղեկցվում է անձի նորմալ սոցիալականացումից շեղման գործընթացին չմիջամտելով և անձի ձևավորման վրա մյուս փոքր խմբերի և այլ անձանց բացասական ազդեցության գործընթացին հակազդման բացակայությամբ<sup>12</sup>:

Այսօրվա դրությամբ անչափահասների վարքագծի անվերահսկելիությունը ձեռք է բերում կարևոր նշանակություն: Քանի որ սոցիալ-տնտեսական դժվարին պայմաններում ծնողների գերծանրաբեռնվածությունը հանգեցնում է այն արդյունքին, որ իրենց և երեխաների շփումները ունեն պատահական բնույթ: Մնալով առանց ընտանիքի վերահսկողության՝ անչափահասները բավականին հեշտ են ընկնում հակահասարակական տրամադրվածությամբ անձանց, իրենց հասակակիցների ազդեցության տակ, ընդունում համապատասխան միջավայրի բացասական սովորությունները (հակահասարակական վարքագիծ, ակոհոլի, թմրամիջոցի օգտագործում): Ընտանիքը կորցնում է իր գլխավոր առաքելությունը՝ երեխաներին պահելու և դաստիա-

<sup>11</sup> Տե՛ս նույն աշխատությունը, էջ 95-102:

<sup>12</sup> Տե՛ս Криминология //под ред. В.Н. Бурлакова и Н.М. Корпачева. СПб., 2002, էջ 326-327:



րակելու, այն դեպքում, երբ ընտանիքը պետք է երեխաներին ներառի իր հոգեբանական կառուցվածք, ապահովի նրանց առաջնային, բայց, ամենակարևորը՝ սոցիալականացումը՝ «իր միջոցով» նրանց հասարակության կազմի մեջ ընդգրկել<sup>13</sup>:

Բացահայտելով ընտանիքի բացասական ազդեցությունն անչափահասի անձի ձևավորման վրա՝ նպատակահարմար է դիտարկել նաև այլ պայմանները, որոնք ոչ այդքան ընդգծված, սակայն բացասաբար ազդում են անչափահասի անձի հանցավոր շարժառիթների ձևավորման վրա: Որպես այդպիսին՝ կարելի է նշել հասարակության բարոյական արժեքների դեֆորմացիան, որն անմիջականորեն ազդում է ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա:

Ընտանեկան դաստիարակության բացթողումները պետք է շտկել հասարակական դաստիարակության հնարավորություններով, որը երեխաներին պետք է տա միջանձնային շփման հնարավորություն, նրանց կենսագործունեության հիմնական ոլորտներում դրական հուզական կապեր, հաղթահարել հասարակությունից երեխաների օտարացումը և նպաստել նրանց կողմից հանցագործությունների կանխարգելմանը: Հետևաբար՝ ընտանիքից հետո անձի սոցիալականացման գործընթացում կարևոր դերակատարություն ունի դպրոցը, որտեղ երեխաներն անցկացնում են իրենց կյանքի նշանակալից մասը:

Դպրոցում երեխան ձեռք է բերում ոչ միայն գիտելիքներ, այլև սոցիալական վարքագծի հմտություններ: Այստեղ սովորեցնում են կարգապահություն, ազնվություն, աշխատասիրություն, ընկերասիրություն, ձերբազատվել այնպիսի բացասական հատկանիշներից, ինչպիսիք են կոպտությունը, դաժանությունը, անտարբերությունը և եսասիրությունը<sup>14</sup>: Եվ, ինչպես արդարացիորեն նշում է Ն.Ռ. Կոսևիչը՝

անչափահասի անձի ձևավորման գործընթացը տեղի է ունենում ընտանիքում, ուսումնական հաստատություններում, ընկերական խմբերում՝ շրջապատող միջավայրի արժեքների և նորմերի յուրացման միջոցով, իսկ անբարենպաստ ընտանիքի անչափահասի համար դպրոցը դառնում է սոցիալականացման հիմնական ինստիտուտը<sup>15</sup>:

Ինչպես ցույց են տալիս անչափահասների վերաբերյալ ՀՀ դատական ակտերի վերլուծության արդյունքները՝ խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների 24,8%-ը, ըստ միջինացված ցուցանիշի, դպրոցի սովորողներ էին: Եվ այստեղ հարց է առաջանում. ինչպես դա կարող է տեղի ունենալ, դպրոցի աշխատանքներում ինչպիսի հանգամանքներ կարող են հիմք ստեղծել անձի «ոչ ճիշտ» զարգացման համար:

Այդ հանգամանքները կապված են մի շարք թերությունների հետ, որոնք ունեն կազմակերպչական բնույթ: Դրանք կապված են սովորողների հանդեպ մանկավարժական մոտեցման, որոշ մանկավարժների ոչ բարձր պրոֆեսիոնալիզմի հետ:

Դպրոցում երեխաների դաստիարակությանը նպաստող կազմակերպչական բնույթի հանգամանքներին հետազոտողները դասում են ուսումնական ծրագրերի անկատարությունը, դպրոցի թույլ նյութական բազան, մանկավարժական կադրերի պակասը, դժվար դաստիարակվող երեխաների հետ աշխատելու անկարողությունը և այլն<sup>16</sup>:

Ներկայումս դպրոցներում ավելի հաճախ կարելի է հանդիպել ուսուցչի անտարբերության, երեխաների հանդեպ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված խտրական մոտեցման, ուսուցչական կազմի մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակի, տարրական հոգեբանական գիտելիքների չտիրապետելու, դյուրագրգռության,

<sup>13</sup> Стѣу Лебедева А.И. Семья несовершеннолетнего правонарушителя как объект профилактики преступлений: Автореф. дис.... канд. юрид. наук.– М., 2000.– էջ 22:

<sup>14</sup> Стѣу Дадова Залина Исмельовна. Роль школы в социализации подростков // Теория и практика общественного развития. 2014. №17, էջ 199: URL: <https://cyberleninka.ru/article/n/rol-shkoly-v-sotsializatsii-podrostkov-1> (վերջին այցելություն՝ 10.07.2018):

<sup>15</sup> Стѣу Косевич Н.Р. Профилактика преступности несовершеннолетних в малых и средних городах: Учеб. пособие.– М.: Щит-М, 2003.– էջ 109:

<sup>16</sup> Стѣу Игошев К.Е, Миньковский Г.М. Семья. Дети. Школа. էջ 179-180:

ագրեսիայի դրսևորման<sup>17</sup>, աշակերտի հանդեպ հոգեբանական և նույնիսկ ֆիզիկական բռնության գործադրման<sup>18</sup>: Հասկանալի է, որ այս բոլորն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում երեխայի ինչպես արժեհամակարգի, հոգեբանական առանձնահատկությունների, իրավագիտակցության, այնպես էլ վարքագծային մոդելների ձևավորման վրա: Վերջ վերջո՝ կտրվում է ուսուցիչ-աշակերտ հոգեբանական կապը: Եվ, որպես արդյունք՝ մեր կողմից խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների շրջանում իրականացված հարցման արդյունքով, այն հարցին՝ ո՞ւմ կդիմեք օգնության համար, ուսուցչին տարբերակին չի պատասխանել հարցվածներից և ոչ մեկը՝ 0%: Ցավալի է, բայց փաստ է:

Դպրոցից դեռահասի օտարացմանը նպաստում է նաև շատ դասարաններում աշակերտական կոլեկտիվի բացակայությունը, որը անձի սոցիալականացման կարևոր գործոն է: Դա կարող է հետևանք լինել աշակերտների միջև դրական հուզական կապերի բացակայության: Եթե դասարանում շփում չի ձևավորվում, եթե չկա աշակերտների միջև ազատ փոխներգործություն, ապա այդպիսի դասարանում կոլեկտիվ չի առաջանում: Հետևաբար՝ դպրոցում անչափահասը համատեղ գործունեությունից բավարարվածություն չի ստանում, ինչը պատճառ է դառնում նրա հաղորդակցման պասիվության: Կրթական համակարգը կորցնում է հակաքրեաձին պոտենցիալը, քանի որ իր ներսում առկա խնդիրները հանգեցնում են անչափահասի հոգեբանական օտարվածությանը, և նա սկսում է որոնել սոցիալական կապեր՝ հակահասարակական խումբ մտնելու ճանապարհով:

Հարցման ենթարկված անչափահասների 33,3%-ն էլ նշել է, որ իրենց հանցավոր խումբն ստեղծվել է ուսման վայրում: Այս ցուցանիշը ևս վկայում է մանկավարժների անտարբերության

կամ խնդրին ոչ ադեկվատ արձագանքելու մասին, ինչի հետևանքով արդեն գործ ունենք հատուկ կարգավիճակ ունեցող անչափահասների հետ:

Այնուհանդերձ՝ երեխայի հակահասարակական վարքագծի ձևավորման և կանխարգելման առումով դպրոցի դերակատարությունը շատ ավելի ընդգրկուն է: Եվ, այդուհանդերձ՝ դպրոցական դաստիարակության վերոթվարկյալ բացթողումների հետ մեկտեղ՝ չի կարելի չնշել և դրական ազդեցությունը: Քրեաբանական հետազոտությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ, որքան շուտ է անչափահասը թողնում դպրոցը, այնքան մեծ է հավանականությունը, որ նա կբռնի հանցավոր ուղի: Այդ են վկայում նաև մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքները, որոնց համաձայն՝ ուսումնասիրված անչափահասների 27,7%-ը, ըստ միջինացված ցուցանիշի, ունի մինչև 9-րդ դասարանի կրթություն (այդ թվում՝ տարրական կրթություն), իսկ 10,9%-ը՝ 9-ամյա: Ստացվում է, որ դպրոցից հեռացումը, ուսումը կիսատ թողնելը դեռահասին զրկում են դպրոցական կոլեկտիվի կողմից դաստիարակչական ներգործությունից:

Անչափահասների խմբային հանցավորությունը դետերմինացնող պայման է կյանքի կոնկրետ իրավիճակը, որում ձևավորվում են հանցավոր խմբի մասնակիցների հանցավոր շարժառիթները, ինչպես նաև նպաստում խմբի ազդեցության ներքո տվյալ պահին դրանց ի հայտ գալուն<sup>19</sup>: Բացի այդ՝ որպեսզի խումբն ազդեցություն ունենա անչափահասի վրա և նրան ներգրավի խմբային հանցագործության մեջ, անհրաժեշտ է, որ անչափահասն ունենա այնպիսի հատկանիշներ, որոնք անհրաժեշտ են համատեղ հանցավոր գործունեության համար: Այստեղից էլ հետևում է, որ կոնկրետ խմբային հանցագործության դետերմինացիա-

<sup>17</sup> Տե՛ս Гаврилова Т.В., Диденко-Чинтимур Д.С. Социальные аспекты распространения насилия в отношении несовершеннолетних. Всероссийский криминологический журнал. 2012. №3, էջ 72-78; Пруцкова Е.А. Профилактика девиантного поведения среди подростков в образовательных учреждениях. Педагогика. Вопросы теории и практики 2017. № 1 (5), էջ 39-41:

<sup>18</sup> Տե՛ս [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=34339947158703395](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=34339947158703395), վերջին այցելություն 07.11.2018թ., ժամը 16.05:

<sup>19</sup> Տե՛ս Шеслер А.В. Групповая преступность: криминологические и уголовно-правовые аспекты: дис.... докт. юрид. наук: 12.00.08.– Екатеринбург, 2000.– էջ 156-157:

յի առանձնահատկություն են անձի հանցավոր շարժառիթները, որոնք անհրաժեշտ են համատեղ հանցավոր գործունեության համար, և հանցագործության կատարման իրավիճակը՝ խմբի անդամի վրա խմբի ազդեցության հետ կապված:

Խմբի ազդեցությունն անդամների վրա տեղի է ունենում մի քանի հնարքով: Մի դեպքում տեղի է ունենում մեղքի զգացողության օգնությամբ, երբ գլխավորը գտնում է միջոց՝ ընկերոջն ստիպելու զգալ իր մեղքը: Մյուս միջոցը՝ սպառնալիքը, շանտաժը՝ ծնողներին, բուլորին պատմելու այն, ինչ իրենք չպետք է իմանան: Սակայն մեր կողմից անչափահասների խմբերում հանցագործություն կատարած անչափահասների շրջանում իրականացված հարցումների վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ հանցավոր խմբերի շատ անդամներ կրում են իրենց հանցավոր խմբերի հետաքրքրությունները, արժեքներն ու գաղափարները: Այսպես՝ ինչն ու դուք դարձաք այդ խմբի անդամ՝ 16,7%-ը պատասխանել է, որ դուր է գալիս ընկերների հետ շփումը, 25,0%-ը՝ ընկերակցությամբ ազատ ժամանակն ինձ համար ավելի լավ է անցնում, և 58,3%-ը՝ խմբով արարք կատարելն ավելի հեշտ է: 100%-ով էլ պատասխանել են, որ հանցանքը կատարել են խմբի մյուս անդամների հետ:

Հատուկ ուշադրության է արժանի ևս կարևոր մի ոլորտ՝ անչափահասների ժամանցը, որի հիմնախնդիրը հատկապես սրվում է դպրոցական արձակուրդներին: Ազատ ժամանակի ոչ ճիշտ կազմակերպումը, աննպատակ ժամանցը կարող են խթան հանդիսանալ հանցավոր վարքագծի, նույնիսկ հանցավոր խմբի ձևավորման համար: Ընդ որում՝ հարցման ենթարկվածների 25,0%-ը պատասխանել է, որ խումբն ստեղծվել է ժամանցի վայրում, 33,3%-ը՝ ինչպես արդեն նշել ենք՝ ուսման վայրում, իսկ 41,7%-ը՝ բնակավայրում: Այս ցուցանիշներն էլ են վկայում անչափահասների ազատ ժամանակի ճիշտ կազմակերպման և, միևնույն ժամանակ՝ դրա նկատմամբ սոցիալական վերահսկողության բացակայության խնդիրը:

Անչափահասների հանցավոր խմբերի ձևավորման վրա բավականին մեծ դերակատարություն ունեն չափահասները, դատվածությունն ունեցող անձինք:

Մեր կողմից ուսումնասիրված անչափահասների հանցավոր խմբերի 65,9%-ը եղել են չափահասի մասնակցությամբ: Հարցված անչափահասների 83,3%-ը պատասխանել է, որ խմբում եղել է չափահաս, իսկ 33,3%-ը պատասխանել է, որ խմբում եղել են դատվածություն ունեցող անձինք: Հանցավոր խմբի ներգործության հետ մեկտեղ՝ անձի հակահասարակական հատկանիշների ձևավորումն ընթանում է շրջապատող միջավայրի բացասական ազդեցության ներքո՝ համասոցիալական և սոցիալ-հոգեբանական մակարդակներում: Եվ դրանց ի հայտ գալու հավանականությունը կախված է անչափահասի սոցիալական ադապտացիայի և նրա հոգեկան զարգացման մակարդակից: Այս առումով՝ խմբի կազմում հանցանք կատարած անչափահաս անձի սոցիալական նշանակալից հատկանիշների բացասական փոփոխության միտում է նկատվում, ինչը տեղի է ունենում անչափահասների անձի անհատական հատկանիշների ընդհանուր վիճակի փոփոխության ներքո: Խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների շրջանում տարածում են ստանում ծանր հանցագործությունները: Միայն 2010-2013թթ. ընթացքում խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների կողմից կատարված ծանր հանցանքներն աճել են 5,5 անգամ: Եվ, բացի այդ՝ նկատվում է բռնի-շահադիտական շարժառիթներով խմբի կազմում հանցանք կատարող անձանց թվի աճման միտում: Մեր կողմից իրականացված հարցման շրջանակում պարզվել է, որ խմբի կազմում հանցանք կատարած անչափահասների 16,7%-ը միջանձնային հարաբերություններ պարզելիս դիմել է բռնության, 63,7%-ը միայն պաշտպանվելիս է դիմել բռնության, իսկ 19,6%-ը՝ երբեք չի դիմել: Ստացվում է, որ 80,4%-ը պատրաստ է եղել բռնություն գործադրելու, ինչը ևս վկայում է անչափահասների սոցիալականացման բարոյահոգեբանական դեֆեկտների մասին:

Այս ամենն ընթացել է անչափահասների վարքագծի նկատմամբ սոցիալական վերահսկողության թուլացման ներքո:

Անչափահասների վերաբերությամբ սոցիալական վերահսկողությունը թուլացել է գրեթե բոլոր ուղղություններով, ամենից առաջ՝

կրթության և գիտության ոլորտում, և հատկապես՝ ընտանիքում:

Այսպիսով՝ անչափահասների խմբային հանցավորությունը հանդես է գալիս որպես ընտանիքում, դպրոցում, շրջապատում աճող սերնդի դաստիարակության թերություն: Անհրաժեշտ է, որպեսզի հասարակությունը կենտրոնանա այս խնդրի լուծման շուրջ՝ հատուկ ուշադրություն դարձնելով անչափահասների հայրենասիրական և բարոյական դաստիարակմանը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, ինչպես նաև նրանց կողմից հանցագործությունների կատարմանը: Եվ այս համատեքստում հատկապես կարևոր-

վում է ընտանիքի ամրապնդման քաղաքականությունը, ավանդական ընտանեկան արժեքների վերականգնումը՝ մեծ տեղ հատկացնելով երեխաների դաստիարակությանը, դպրոցի դերի և հեղինակության արժևորումը<sup>a</sup> խթանելով սերնդի կրթական մակարդակի բարձրացմանը, անչափահասների ազատ ժամանակի ճիշտ կազմակերպմանը, որոնք էլ կհանդիսանան անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնական ուղղությունները, ինչը կնպաստի նաև սահմանադրությամբ ամրագրված՝ ծնողների պարտականության հավուր պատշաճի իրականացմանը:



**ՀՈՎԱՏՓ ՔՈՉԱՐՅԱՆ**

Հայ-ռուսական պետական համալսարանի  
Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի  
մագիստրանտ

**ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ 205-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ ՆՈՐ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

28.02.17 թվականի ՀՕ-44-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածը ենթարկվեց փոփոխության: Նոր խմբագրության համաձայն՝ քրեական պատասխանատվության են հանգեցնում.

1. Հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը խոշոր չափերով չվճարելու նպատակով՝

1) օրենքով սահմանված հաշվետվությունում, հաշվարկում, հայտարարագրում կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթղթում ակնհայտ կեղծ տվյալ ներմուծելը, կամ

2) օրենքով սահմանված հաշվետվությունը, հաշվարկը, հայտարարագիրը կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթուղթը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելը...

2. Նույն արարքը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով...

Նոր խմբագրության դրական փոփոխությունների շարքը կարելի է դասել ՀՀ քրեական օրենսգրքի<sup>1</sup> 205-րդ հոդվածի 3-րդ մասում խոշոր չափի նվազագույն շեմի վերանայումը: Շեմ է սահմանվել նվազագույն աշխատավարձի չորս հազարապատիկը՝ 4000000 ՀՀ դրամը:

ՀՀ ՔՕ-ի 205-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի սուբյեկտիվ կողմը լրացվել է նպատակով՝ հոդվածում նշված գործողությունը (անգործությունը) պետք է կատարվի միայն հարկի, տուրքի և պարտադիր այլ վճար խոշոր չափերով չվճարելու նպատակով:

Տեսության մեջ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ նպատակի և հանցավոր վերջնական արդյունքի հարաբերակցության հարցի լուծման վերաբերյալ: Մի դեպքում դրանք կարող են համընկնել, մյուս դեպքում՝ ոչ: Որպես սուբյեկտիվ կողմի տարր՝ նպատակը բնորոշում է այն, ինչին ձգտում է հասնել հանցագործը հանցավոր արարքի կատարմամբ. դա նրա ցանկալի արդյունքի ներքին մոդելն է: Նպատակը ենթադրվող արդյունքն է, իսկ հանցագործության արդյունքն օբյեկտիվ կատեգորիա է, որը կարող է և գտնվել հանցակազմից դուրս:

Քննարկվող հանցագործության որակումը պայմանավորված է նպատակի առկայությամբ, բայց ոչ իրականացմամբ: Նպատակը հանցակազմի հատկանիշների հիմնական տարր է, նշված է ՀՀ ՔՕ-ի Հատուկ մասի կոնկրետ հոդվածի դիսպոզիցիայում, և դրա բացակայության դեպքում արարքում չկա հանցակազմ: Եթե տնտեսվարողի կողմից օրենքով սահմանված ժամկետներում և կարգով հաշվարկներ, հաշվետվություններ, հայտարարագիր կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթուղթ չեն ներկայացվել, կամ եթե դրանց մեջ ակնհայտ կեղծ տվյալներ են ներմուծվել, սակայն դա կատարվել է հոդվածով նշված նպատակներով, ապա անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Տարակուսանք է առաջացնում, սակայն, նպատակի, այսպես կոչված, քանակական բնորոշումը: Նպատակը պետք է անպայմանորեն միտված լինի հարկի, տուրքի և պարտադիր այլ վճարի **խոշոր չափերով** չվճարելուն: Նշված

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 110 2019

<sup>1</sup> Այսուհետ՝ ՔՕ:

պարագայում ինչպիսիք քրեաիրավական գնահատական տալ, օրինակ, այն անձի արարքին, երբ նա նպատակ է ունեցել չվճարել ոչ թե խոշոր չափի, այլ՝ առանձնապես խոշոր չափի հարկի, տուրքի և պարտադիր այլ վճարի գումար, կամ եթե, օրինակ՝ անձը, նպատակ ունենալով չվճարել առանձնապես խոշոր չափի հարկ, տուրք և պարտադիր այլ վճար, փաստացի չի վճարում խոշոր չափի հարկ, տուրք և պարտադիր այլ վճար: Նկատենք, որ հանցակազմը ձևական է, և ցանկացած դեպքում արդյունքը մնում է հանցակազմից դուրս: Իրական պակասեցված հարկի գումարի առկայությունը կամ բացակայությունն ընդհանրապես որևէ նշանակություն չունի ՀՀ ՔՕ-ի 205-րդ հոդվածի 1-ին մասի համար, որտեղ առաջնայինը նպատակի առկայությունն է, այլ ոչ թե՝ իրականացումը: Նպատակի իրականացումն իրավական նշանակություն է ստանում միայն քննարկվող հոդվածի 2-րդ մասում, այն էլ միայն՝ առանձնապես խոշոր վնասի չափով:

Իրավակիրառ պրակտիկայում որոշ խնդիրներ կարող է առաջացնել նաև ուսումնասիրվող հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի կառուցվածքը: Այդ հանցակազմի համաձայն՝ անձը, ով նպատակ է ունեցել նկարագրված եղանակներով չվճարել խոշոր չափի հարկ, տուրք կամ պարտադիր այլ վճար, բայց փաստացի չի վճարել առանձնապես խոշոր չափերով հարկ, տուրք կամ պարտադիր այլ վճար, ենթակա է քրեական պատասխանատվության որակյալ հանցակազմով: Այդ դեպքում ինչպես որակել, օրինակ, այն արարքը, երբ անձը նպատակ է ունեցել չվճարել խոշոր չափի հարկ, տուրք կամ պարտադիր այլ վճար և ամբողջապես իրականացրել է իր նպատակը՝ չվճարելով հենց իր կողմից ենթադրվող հարկի գումարը: Այս արարքին հնարավոր չէ քրեաիրավական գնահատական տալ ՀՀ ՔՕ-ի 205-րդ հոդվածի 1-ին մասով, քանի որ չի ներառում փաստացի արդյունքը, սակայն հնարավոր չէ դա անել նաև ՀՀ ՔՕ-ի 205-րդ հոդվածի 2-րդ մասով, քանի որ փաստացի արդյունքը պետք է լինի առանձնապես խոշոր չափի, մինչդեռ քննարկող դեպքում դրա չափն այլ է:

Օրենսդիրը, ՀՀ ՔՕ-ի 205-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը կառուցելով ձևական հանցակազմի կանոններով,

փաստորեն՝ արտահայտել է այն դիրքորոշումը, որ իրականում արարքի հետևանքով բյուջե չվճարված գումարի չափը բոլորովին նշանակություն չունի արարքի իրավական գնահատականի համար: Ավելին՝ անձը, ով կեղծ տվյալներ է ներմուծել համապատասխան փաստաթղթերում, սակայն փաստացի չի հաջողել հարկից խուսափելու գործում, և անձը, ում հաջողվել է իրականացնել իր նպատակը՝ չվճարել խոշոր կամ առանձնապես խոշոր չափի հարկի գումար, այդպիսով խոչընդոտելով ՀՀ պետական բյուջե գումարների հոսքը, դիտվում են որպես նույնական արարք կատարած անձինք և քրեական պատասխանատվության ենթարկվում ավարտված հանցագործության համար: Սակայն, մեր կարծիքով՝ ակնհայտ է, որ նկարագրված երկրորդ դեպքում արարքն իր բնույթով ավելի ծանր է, քանի որ խոչընդոտում է բյուջեի ձևավորման գործընթացը: Այս երկու դեպքը նույն սանդղակի վրա դնելով՝ օրենսդիրն ստեղծում է քրեական իրավունքի հիմնական սկզբունքի՝ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի խախտման նախադրյալներ:

Բոլորովին անհասկանալի է, թե ինչպես կարելի է, օրինակ, հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը խոշոր չափերով չվճարելու նպատակով չներկայացնել օրենքով սահմանված՝ *առանձնապես խոշոր չափերով փաստաթղթեր*: Տրամաբանական անհամապատասխանությունից բացի՝ այս ձևակերպումը կարող է հանգեցնել նաև իրավական խնդիրների: Իրավակիրառի համար պարզ չէ, թե արդյոք այս առանձնապես խոշոր չափը վերաբերում է այն գումարին, որը չի հաշվարկվել, չի ներկայացվել հաշվետվություններում և հաշվարկներում, կամ այն գումարին, որի չափով կեղծ տվյալներ են ներմուծվել այդ փաստաթղթերում, թե՛ այդ գումարներին, որոնց չափով վնաս է պատճառվել տնտեսվարողի արարքի հետևանքով: Պարզ չէ, թե արդյոք հանցակազմը նյութական է, թե՛ ձևական: Նշված իրավիճակը կարելի է ցույց տալ հետևյալ օրինակով. անձը ներկայացված փաստաթղթերում ներմուծել է կեղծ տվյալներ, որոնք գումարային արտահայտմամբ հատում են խոշոր չափի նվազագույն շեմը, սակայն ստուգելիս պարզվում է, որ, չնայած «այդ կեղծարարությանը»՝ լրացուցիչ գանձման են-

թակա գումարը պակաս է, քան այդ շեմը: Մեր կարծիքով՝ քանի որ հանցագործության հանրային վտանգավորությունը բնութագրվում է հենց հարկերի չվճարմամբ, հանցակազմը պետք է լինի նյութական: Այս արարքի նյութականությունն արտահայտվում է այն վնասով, որը պատճառվել է տնտեսվարողի կողմից հարկի գումարները ՀՀ բյուջե չվճարելու հետևանքով, այլ ոչ թե զուտ համապատասխան փաստաթղթերում կեղծ տվյալներ ներմուծելը, եթե դա որևէ իրական վնասի չի հանգեցրել:

Այսպիսով՝ ՀՀ ՔՕ-ի 205-րդ հոդվածի նոր խմբագրությունը չի ներառում հարկերը վճարելուց խուսափելու բոլոր դեպքերը և նման պայմաններում չի կարող լիարժեք կատարել իր կանխարգելիչ դերը: Բացի այդ՝ նշված խմբագրությունը որոշակի ռիսկեր է պարունակում տնտեսվարող սուբյեկտի իրավունքների ոտնահարման և պետական պաշտոնատար անձի կողմից հնարավոր չարաշահումների տեսանկյունից:

Ինչպես արդեն նշվեց՝ ՀՀ ՔՕ-ի 205-րդ հոդվածի 1-ին մասով ապացուցման է ենթակա ոչ թե հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների չվճարելու փաստը, այլ՝ օբյեկտիվ կողմի կատարմամբ որոշակի նպատակի հասնելու դիտավորությունը: Որպես կանոն՝ հարկերի պակաս հաշվարկման, օրենքով սահմանված հաշվետվությունում, հաշվարկում, հայտարարագրում կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթղթում սխալ տվյալներ ներմուծելու փաստը բացահայտվում է հարկային մարմինների կողմից իրականացված ստուգմամբ և արձանագրվում դրա արդյունքով կազմված ակտում: Հանցագործության առերևույթ հատկանիշների առկայության դեպքում, երբ ստուգման ակտով արձանագրված գումարի չափը գերազանցում է 4000000 ՀՀ դրամի շեմը, փաստաթղթերն ուղարկվում են նյութեր նախապատրաստելու և քրեական գործ հարուցելու, ինչի ընթացքում էլ պարզվում են անձի կողմից հաշվարկներ, հաշվետվություններ, հայտարարագրեր չներկայացնելու կամ ներկայացված փաստաթղթերում հաշվարկված հարկի, տուրքի կամ այլ վճարների գումարները պակաս վճարելու նպատա-

կը և դիտավորությունը: Հոդվածի փոփոխության հետևանքով ստուգում իրականացնող հարկային տեսուչը կարող է ցանկացած դեպքում ստուգման ակտն ուղարկել քննչական մարմին, նույնիսկ եթե նշված ակտով արձանագրված գումարը չի գերազանցում ՀՀ ՔՕ-ի 205-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված նվազագույն շեմը, քանի որ ոչ թե փաստացի արձանագրված գումարով է պայմանավորվում հարկեր չվճարելու փաստի բացահայտումը, այլ՝ նրա կողմից խոշոր չափի հարկ չվճարելու հնարավոր նպատակ ունենալու կասկածը: Իսկ սա լուրջ չարաշահումների առիթ կարող է դառնալ: Պրակտիկայում նույնիսկ նախկին իրավակարգավորման գործողության ժամանակ բազմաթիվ էին այն դեպքերը, երբ հարկային մարմնի կողմից ստուգման արդյունքով կազմված ակտով արձանագրվում էր ուռճացված, փաստացի տվյալներին չհամապատասխանող, 2000000 ՀՀ դրամը գերազանցող «պակաս հաշվարկված հարկի գումար», միայն որպեսզի վեճը տեղափոխվի քրեական դատավարության դաշտ, և քրեադատավարական միջոցներով ապահովվի այդ գումարի գանձումը՝ տնտեսվարողի կողմից կամովին հարկային պարտավորությունը չվճարելու դեպքում:

Նոր իրավակարգավորումը հեշտացրել է հարկահավաքությունը: Այժմ արդեն պետք չէ «նկարել» հարկի գումար, այլ կարելի է ուղղակի կասկած ունենալ տնտեսվարողի նպատակների վերաբերյալ և ստուգման ակտն ուղարկել նախաքննության մարմին՝ խոշոր չափի հարկեր չվճարելու նպատակի առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար:

Դեռևս այս փոփոխությունների քննարկման փուլում որոշ պրակտիկ փաստաբաններ մատնանշել էին այն հավանականությունը, որ 205-րդ հոդվածի փոփոխությունների հետևանքով դա առավել կամրապնդվի որպես հարկահավաքության գործիք, և էլ ավելի կխորանան առկա խնդիրները: Այսինքն՝ այս նախագծով նախատեսված փոփոխությունները նույնիսկ կօրինականցնեն ստուգողի ոչ իրավաչափ գործողությունները: «Անհրաժեշտ է նշել, գրում են Ս.Ասատրյանը և Ա.Օրբեյանը, որ առկա խնդիրներն ավելի շատ կապված են հենց նրա (*քննարկվող հոդվածի* – Հ.Ք.) կիրառման պրակտիկայի հետ, որ անջատվել է

քրեական օրենսգրքի խնդիրներից ու նպատակներից և «ընդգրկվել է» հարկահավաքության անմիջական գործիքակազմում, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածում ամրագրված իրավական պետության սկզբունքներին վերը ներկայացված հիմնավորմամբ»:<sup>2</sup>

Իսկ ինչպես է քննիչը գործնականում ապացուցելու մեղադրյալի նպատակի «խոշոր չափը»: Չէ որ, երբ չկա փաստացի արդյունք, որը գումարային արտահայտությամբ արտացոլված է կազմված սուուգման ակտում կամ դատահաշվապահական փորձաքննության եզրակացությամբ, ապա առաջնային են դառնում հենց կասկածյալի կամ մեղադրյալի, իսկ առանձին դեպքերում՝ վկայի ցուցմունքները: Սակայն, ինչպես հայտնի է՝ միայն ինքնախոստովանական ցուցմունքը չի կարող դրվել մեղադրանքի հիմքում: Իսկ ինչպես վարվել, եթե վկա չկա, իսկ հաշվապահական հաշվառումը վարել է հենց ինքը՝ կասկածյալը կամ մեղադրյալը: Այսպիսով՝ նոր խմբագրությունը, մեր կարծիքով, չի հեշտացնում իրավակիրառ պրակտիկան: Իրավիճակը փոքր-ինչ շտկելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է քննարկվող հանցակազմի վերախմբագրում՝ ձևակերպելով դա որպես նյութական հանցակազմ: Հոդվածի առաջին

մասը կարելի է շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելու նպատակով՝ օրենքով սահմանված հաշվետվությունում, հաշվարկում, հայտարարագրում կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթղթում ակնհայտ կեղծ տվյալներ ներմուծելը կամ օրենքով սահմանված հաշվետվությունը, հաշվարկը, հայտարարագիրը կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթուղթն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելը, եթե նշված արարքի հետևանքով չի հաշվարկվել և չի վճարվել խոշոր չափով հարկի, տուրքի, պարտադիր այլ վճարի գումար»:

Համապատասխան փոփոխության պետք է ենթարկել նաև ՀՀ ՔՕ-ի 205-րդ հոդվածի 2-րդ մասի դիսպոզիցիան նյութական հանցակազմի կանոններով՝ այս դեպքում նախատեսելով առանձնապես խոշոր չափով վնասը որպես հանցավոր հետևանք:



<sup>2</sup> Ա.Օրբելյան, Ս.Ասատրյան, ՀՀ Քրեական օրենսգրքի 205 հոդվածում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ// [https://dialog.am/storage/files/posts/posts\\_84564301851\\_17.09.\\_-\\_2014.pdf](https://dialog.am/storage/files/posts/posts_84564301851_17.09._-_2014.pdf)



ՀԱՅԿ ԱՎԵՏՅԱԼ

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող

## ՕՐԵՆՔԻ ՇԵՏԱԳԱՐՉ ՈՒԺԻ ԱՐԳԵԼՔԸ "NULLUM CRIMEN SINE LEGE" ՍԿՉՐՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

### 1 "Nullum Crimen Sine Lege" սկզբունքը

#### 1. Սկզբունքի նախապատմությունը

Քրեական իրավունքում հայտնի "**nullum crimen, nulla poena sine lege**" (չկա հանցանք, չկա պատիժ առանց օրենքի) սկզբունքը, տեսակետներից մեկի համաձայն՝ սկիզբ է առնում 1215 թվականի անգլիական «Ազատությունների մեծ խարտիայից»<sup>1</sup>, որի 39-րդ հոդվածը նշում էր, որ ոչ մի ազատ մարդ չէր կարող ձերբակալվել, դատապարտվել առանց բարոնների օրինական դատի կամ առանց օրենքի: Ըստ մյուս տեսակետի՝ սկզբունքն արդյունք է 18-րդ դարի Ֆրանսիական մեծ հեղափոխության, որը հաստատեց անհատի գերակայությունը սոցիումի նկատմամբ<sup>2</sup>: Այս սկզբունքի առաջացման նպատակը պետության և դատարանի հայեցողության նվազեցումը, և անձի՝ միայն օրենքի հիման վրա դատապարտվելու ողջամիտ ակնկալիքն ապահովելն էր: Այս իմաստով՝ դիպուկ է ֆրանսիացի փիլիսոփա Մոնտեսքյուի հետևյալ միտքը. «Դատավորը օրենքի բերանն է»<sup>3</sup>, այսինքն՝ դատարանը կաշկանդված է օրենքներով և որոշում կայացնելիս չի կարող դուրս գալ դրանց շրջանակներից: Հենց Մոնտեսքյուի և իտալացի Չեզարե Բեկարիայի շնորհիվ՝ այս սկզբունքը լայն տարածում գտավ, իսկ լատիներեն ձևակերպման (**nullum crimen, nulla poena sine lege**) հեղինակը գերմանացի իրավագետ Պաուլ Յոհանն Անսելմ ֆոն Ֆոյերբախն էր<sup>4</sup>:

### 2. Սկզբունքի օրենսդրական ամրագրումները

Քննարկվող սկզբունքն առաջին անգամ օրենսդրորեն ամրագրվեց 1787 թվականին Ավստրիայում: Ներկայումս դա միջազգային և ներպետական մի շարք հիմնարար իրավական փաստաթղթերի անքակտելի մասն է: Այսպես՝ "Nullum crimen sine lege" սկզբունքն ամրագրված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասում. «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն՝ քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»: Համանման ձևակերպմամբ այս սկզբունքն ամրագրված է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին մասում և «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 11-րդ հոդվածի 2-րդ մասում: ՀՀ Սահմանադրության 72-րդ և 73-րդ հոդվածներում նշվում է. «Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի եղել»: (...) «Անձի իրավական վիճակը վարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն»: ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ և 13-րդ

<sup>1</sup> Stefan Glaser, Journal of Comparative Legislation and International Law, Vol.24, No.1, Cambridge University Press, 1942, p. 29.  
<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 30: Ա. Գաբուլյան, Հանցագործություն, (Առաքելյան, Գաբուլյան և այլք (հեղ.), ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, վեցերորդ հրատ., Երևան, 2012թ, էջ 83:  
<sup>3</sup> Céline Spector, Montesquieu Law Review, Université de Bordeaux, Issue No.3, Octobre 2015, P. 1.  
<sup>4</sup> Claus Kreß: "Nullum Crimen Sine Lege" Max Planck Institute for Comparative Public Law and International Law, Heidelberg and Oxford University Press, 2010, P. 3.

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 110 2019

հողվածներում ևս ամրագրված է. «Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով»: (...) «Արարքի հանցավորությունը սահմանող, պատժող խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վարացնող օրենքը հետադարձ ուժ չունի: Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

“Nullum crimen sine lege” սկզբունքից բխում են իրավական հետևյալ ենթասկզբունքները. 1) Օրենքի հետադարձ ուժի արգելքը, 2) Անալոգիայի արգելքը, 3) Որոշակիության սկզբունքը, 4) Չգրված (ոչ պոզիտիվ) դրույթների կիրառման արգելքը:

Այսպիսով՝ անձն իր կատարած արարքի համար կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի, եթե այդ արարքը կատարելու պահին նախատեսված է եղել գրված, գործող, բավարար կերպով որոշակի քրեական օրենքում, որում նաև նախատեսված է եղել բավարար կերպով որոշակի պատժ<sup>5</sup>:

**Օրենքը գործող է**, եթե ունի իրավաբանական ուժ, ունակ է իրավահարաբերություններ առաջացնելու և դադարեցնելու: **Օրենքի որոշակիությունն** իրավական պետության կարևոր բաղադրատարրերից է, ըստ որի՝ օրենքները պետք է լինեն ողջամտորեն կանխատեսելի, այսինքն՝ անձը, որ իրավական դրույթի կրողը, սուբյեկտն է, պետք է իմանա, թե պետությունն ինչ սահմաններ է գծել իր համար որևէ դրույթ նախատեսելիս, և այդ դրույթի պահանջը խախտելու դեպքում ինչ իրավական հետևանքներ կառաջանան: **Քրեական օրենքում գրված լինելը** նշանակում է, որ արարքի կատարման պահին պետք է քրեական օրենսգրքի հատուկ մասի հողվածի փաստակազմում հստակ սահմանված լինեն քրեորեն պատժելի արարքի այն նվազագույն հատկանիշները (հանցակազմի

տարրեր), որոնք բավարար կլինեն անձի՝ փաստացի կատարած արարքի հետ համադրմամբ այդ արարքը որակելի հանցագործություն: Սրանից հետևում է նաև **անալոգիայի արգելքը**, այսինքն՝ օրենքի բացի՝ կարգավորման բացակայության պարագայում անթույլատրելի է այդ բացը լրացնել նույն օրենքով ամրագրված նմանատիպ այլ կարգավորմամբ, այլ կերպ ասած՝ եթե անձի կատարած արարքի հատկանիշներն ամբողջովին առկա չեն քրեական օրենսգրքի որևէ հողվածով նախատեսված արարքի փաստակազմում, ապա արգելվում է նրա արարքը մեկ այլ հողվածով որակել և նրան ենթարկել պատասխանատվության: **Բավարար կերպով որոշակի պատժող** նշանակում է, որ հանցանք կատարած անձանց նկատմամբ կարող է կիրառվել միայն այնպիսի պատժ, որի տեսակն ու սահմաններն ուղղակիորեն նշված են քրեական օրենքում (nullum poena sine lege)<sup>6</sup>:

## II Օրենքի հետադարձ ուժի արգելքը դատական դիրքորոշումներում

### 1. Հայաստանի Հանրապետության դատարանների որոշումները

ՀՀ Սահմանադրական դատարանն օրենքի հետադարձ ուժի վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու անձի լեգիտիմ ակնկալիքների նկատմամբ հարգանքը, անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկն է: Այդ սկզբունքը միաժամանակ իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք է: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, որի համաձայն՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ

<sup>5</sup> Claus Krieb: “Nullum Crimen Sine Lege” Max Planck Institute for Comparative Public Law and International Law, Heidelberg and Oxford University Press, 2010, P 1.

<sup>6</sup> Ս. Առաքելյան, Քրեական իրավունքի սկզբունքները (Առաքելյան, Գաբրույան և այլք (հեղ.), ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, վեցերորդ հրատ., Երևան, 2012թ, էջ 21:

վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա»<sup>7</sup>: ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերագրյալ սկզբունքին, նշել է. «Հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական օրենքի այս կամ այն նորմի կիրառելիության հարցը լուծելիս պետք է ղեկավարվել հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) փաստացի կատարման պահի և քրեական օրենքի՝ ուժի մեջ մտնելու պահի համադրմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է իրականացվում վարույթը և վարույթն իրականացնելու պահին կիրառման ենթակա օրենքը գործում է, թե՞ ոչ: “Nullum crimen, nulla poena sine lege” սկզբունքի բաղադրամասերից է նաև այն դրույթը, որի համաձայն՝ չի կարող կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որն օրենքով կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին»<sup>8</sup>: «Քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանության ենթարկվի, օրինակ՝ չպետք է կիրառվի անալոգիայով»<sup>9</sup>:

## 2. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները

Ինչպես արդեն նշվեց՝ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի» 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին: Այս ձևակերպումը վկայում է, որ կոչված է առաջարկելու հիմնարար երաշխիքներ ապօրինի քրեական հետապնդման, դատապարտման և պատժի դեմ, սակայն 7-րդ հոդվածը չի սահմանափակվում միայն քրեական օրենքի՝ ի վնաս մեղադրյալի հետադարձ կիրառման արգելքով, այլ նաև մարմնավորում է “Nullum crimen sine lege” սկզբունքը՝ ներառե-

լով նաև անալոգիայի արգելքը. քրեական օրենքը չպետք է լայնորեն մեկնաբանվի (օրինակ՝ համանմանության սկզբունքով)՝ ի վնաս մեղադրյալի: Իրավախախտումը պետք է հստակ սահմանված լինի օրենքով: Այս պահանջը բավարարված կլինի այն դեպքում, երբ համապատասխան դրույթի և, հարկ եղած դեպքում, դրա՝ **դատարանների մեկնաբանման միջոցով** (ընդգծումը՝ հեղինակի) անձը կարող է իմանալ, թե ինչպիսի գործողություններն ու անգործությունները քրեական պատասխանատվության կհանգեցնեն: 7-րդ հոդվածն արգելում է քրեական օրենքի հետադարձ կիրառումը, միևնույն ժամանակ՝ չի սահմանում մեղադրյալի վիճակը բարելավող օրենքը մեղադրյալի նկատմամբ հետադարձ կիրառելու պահանջ<sup>10</sup>: Այս հոդվածի՝ «հետադարձ ուժի կիրառում» ձևակերպումը նշանակում է նաև, որ արգելվում է կիրառել մոդիֆիկացված օրենքի հին ձևակերպումը կամ սանկցիան այն արարքի նկատմամբ, որը կատարվել է դրանից հետո<sup>11</sup>:

Մի գործով դիմումատուն, որ Մեծ Բրիտանիայում դատապարտվել էր իր կնոջ նկատմամբ բռնաբարության փորձի մեղադրանքով, պնդում էր, որ տեղի է ունեցել վերոնշյալ 7-րդ հոդվածի խախտում: 1976թ. Մեծ Բրիտանիայում գործող «Սեռական հանցագործությունների մասին» օրենքի համաձայն. «Բռնաբարությունը կնոջ կամքին հակառակ տղամարդու անօրինական սեռական հարաբերությունն է այդ կնոջ հետ», և քանզի ինքը փորձել է սեռական հարաբերության ունենալ իր իսկ կնոջ հետ, ուստի բացակայում է «անօրինականության» հատկանիշը՝ քանի որ, ինչպես գրված է գլխավոր դատավոր սըր Մեթյու Հեյլի՝ դատական պրակտիկայում հաճախ կիրառվող մի աշխատությունում. «Ամուսինը չի կարող մեղավոր ճանաչվել իր օրինական կնոջ բռնաբարության մեջ, քանի որ կինը տրվել է իր ամուսնուն, ումից չի կարող հրաժարվել»<sup>12</sup>: Այնուամենայնիվ, ներպետական դատարանները, մեկնաբանելով «սեռական հանցագործությունների

<sup>7</sup> ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1326 որոշում, էջ 15:

<sup>8</sup> ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, հ. 3, 2016թ, էջ 11:

<sup>9</sup> ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/0008/15/13 2013թ.-ի որոշման 15-րդ կետ:

<sup>10</sup> Kokkinakis v. Greece, Series A no. 260-A, §52, 25 May 1993.

<sup>11</sup> X v. The Netherlands, D&R 11 (1978, p. 209 (211).

<sup>12</sup> Sir Matthew Hale CJ, “History of the Pleas of the Crown”, 1736.

մասին» օրենքի վերոնշյալ դրույթը և դատական պրակտիկան, նշել են, որ որոշ դեպքերում կինը կարող է չեղյալ հայտարարել իր ամուսնու հետ սեռական հարաբերություն ունենալու համաձայնությունը, օրինակ՝ «կողմերից որևէ մեկի համակեցությունից հրաժարվելու հիման վրա, որի դեպքում այդ կողմը հստակ հասկացնում է, որ սեռական հարաբերություններ ունենալու համաձայնությունը դադարեցված է»: Դատարանը մերժել է դիմումատույի գանգատն առ այն, որ իբրև թե վերջինս ունի անձեռնմխելիություն, քանի որ զոհն իր կինն է: Դատարանը նշել է. «Դիմողը չի վիճարկում, որ այն վարքագիծը, որի պատճառով ինքը դատապարտվել է, օրենքով «բռնաբարություն» բառին տրվող իմաստի համաձայն՝ հավասար կլիներ բռնաբարության փորձի, եթե զոհը չլիներ իր կինը: 7-րդ հոդվածի շրջանակներում բերած նրա գանգատը վերաբերում է զուտ այն փաստին, որ նախադեպային իրավունքի շրջանակներում նա չի կարողացել օգտվել իր ամուսնական անձեռնմխելիությունից, քանի որ, ըստ նրա՝ դա հետադարձ ուժով չեղյալ է հայտարարվել»: «Դատարանը որևէ պատճառ չի տեսնում չհամաձայնելու ներպետական դատարանների եզրակացությանը, ըստ որի՝ «անօրինական» բառը բռնաբարության սահմանման մեջ եղել է զուտ ավելորդություն և չի խանգարել «հեռացնել նախադեպային իրավունքի հնացած և վիրավորական դարձած հնարանքը», «բռնաբարություն կատարած անձը մնում է բռնաբարություն կատարած անձ և ենթակա է քրեական օրենքին՝ իր զոհի հետ հարաբերություններից անկախ»<sup>13</sup>: Այս առիթով դատարանը հիշել է նաև, որ **ազգային իշխանությունների, հատկապես՝ դատարանների առաջնահերթ խնդիրն է մեկնաբանել և կիրառել ազգային օրենքը**<sup>14</sup> (ընդգծումը՝ հեղինակի):

Փաստորեն, դատարանն արձանագրել է, որ զուտ ձևական, պոզիտիվ անձեռնմխելիությունը զուրկ է իրավական լեգիտիմությունից՝ եթե չի ծառայում արդարությանը, և հետևաբար՝ նման անձեռնմխելիությունը որևէ մեկի չի

կարող ազատել քրեական պատասխանատվությունից:

Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն: Թեև այս դրույթը ձևակերպված է ընդհանուր ձևով, ակնհայտ է, որ ձևակերպվել է, որպեսզի հնարավորություն տա ազգային կամ միջազգային օրենսդրությունը կիրառելու պատերազմական հանցագործությունների նկատմամբ<sup>15</sup>: Այնուամենայնիվ, չի կարելի պնդել, որ այս բացառությունը վերաբերում է միայն պատերազմական հանցագործություններին: 7-րդ հոդվածի 2-րդ մասը վերաբերում է այն բոլոր հանցագործություններին, որոնք քաղաքակիրթ մարդկության կողմից ճանաչվել են այդպիսին, խոսքը ոչ միայն միջազգային իրավական ակտերում ամրագրված հանցանքների մասին է, այլև բոլոր այն արարքների, որոնք կասկած չեն հարուցում իրենց պարսավելիության հարցում որևէ քաղաքակիրթ պետության առջև:

### 3. Գերմանիայի Դաշնային Հանրապետության դատարանների որոշումները

Մինչև բեռլինյան պատի կառուցումը Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունից մոտ երկուսուկես միլիոն մարդ փախել էր Գերմանիայի Դաշնային Հանրապետություն: Այս զանգվածային փախուստը կանխելու նպատակով՝ 1968 թվականին կառուցվում է Բեռլինյան պատը, որը հսկվում էր զինված հրաձիգների կողմից: Սահմանը հատելու փորձերի ժամանակ սպանված անձանց թիվն Արևմուտքի հաշվարկներով տատանվել է 264-ից 938-ի միջև<sup>16</sup>:

1984 թվականին այդ հրաձիգներից մեկը երկու կրակոց էր արձակել մի քսանամյա տղայի վրա, որ փորձել էր աստիճանի օգնությամբ անցնել պատի վրայով դեպի Արևմտյան Գեր-

<sup>13</sup> Tolstoi Miloslavsky v UK, Series A, n. 316-B, p. 71-72, § 37, 1995.

<sup>14</sup> Kemmache v France, Series A, n. 296-C, p. 86-87, § 37, 1994.

<sup>15</sup> X v. Belgium, Yearbook IV, §324, 1961.

<sup>16</sup> Էլիսբեր Մոուրեյ, Գործեր և Նյութեր, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Երևան, «Բավիդ» 2010թ. էջ 496.

մանիա: Մի փոքր անց երկու զինվոր տղային տարել էին պահակադիտանոց (Watchtower)՝ ի հեճուկս վերջինիս բժշկական օգնության աղերսների, պահել էին երկու ժամ, որից հետո միայն տեղափոխել հիվանդանոց, որտեղ տղան անմիջապես մահացել էր<sup>17</sup>: Մեկ այլ դեպքում Արևմտյան Գերմանիայի կողմից հայր և դուստր մոտորանավակով մուտք էին գործել երկու Գերմանիաների ջրային սահման և չէին հասցրել վերադառնալ իրենց ափ՝ ընդամենը տասը մետր սահմանը հատելու պատճառով ռմբակոծվել էին հրաձիգների կողմից: Հայրը մահացել էր, աղջիկը՝ ստացել առողջական անբուժելի վնաս, իսկ հրաձիգները ոստիկանության կողմից խրախուսվել էին<sup>18</sup>:

Այս բոլոր դեպքերն ունեին մի շարք նմանություններ. 1) հրաձիգները հրահանգված էին ամեն կերպ կանխել անձանց փախուստը՝ այլ միջոց չմնալու դեպքում ոչնչացնելով նրանց, 2) դեպքերը պետք է հնարավորինս գաղտնի պահվեին՝ նույնիսկ զոհերի կյանքի գնով, 3) հաջողակ հրաձիգներն արժանանում էին պետական խրախուսանքի<sup>19</sup>: Հետևաբար՝ ԳԴՀ փլուզումից հետո՝ 1989 թ. աշնանը, նորընտիր խորհրդարանը պահանջում է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից, որ Արևելյան Գերմանիայի կոմունիստական կուսակցության օրոք անարդարություններ գործած մարդկանց նկատմամբ սկսվեն քրեական հետապնդումներ<sup>20</sup>:

Երկու Գերմանիաների միջև կնքված «միավորման պայմանագրի» 8-րդ հոդվածի<sup>21</sup>, «Քրեական օրենսգրքի ռուժ մեջ մտնելու մասին» օրենքի 315-րդ հոդվածի և Քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի ուժով հրաձիգների պատժելիության հարցը պետք է լուծվեր նախկին ԳԴՀ-ի (Արևելյան Գերմանիայի) օրենքներով, որոնց հիման վրա նրանց արարքն արդարացված էր, ընդ որում՝ այդ օրենքները խիստ հակասության մեջ էին միջազգային ի-

րավունքի նորմերի հետ: Մասնավորապես՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի լքելու ցանկացած երկիր՝ ներառյալ իր սեփականը»<sup>22</sup>: Այնուամենայնիվ, միավորված Գերմանիայի Հիմնական օրենքի (Սահմանադրության) 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Արարքը կարող է պատժվել, եթե դրա պատժելիությունն օրենքով սահմանված է եղել նախքան արարքի կատարումը»: Փաստորեն, գերմանացի դատավորները պարտավոր էին կիրառել արարքի կատարման պահին գործող արդարացման հիմքերը, այս դեպքում՝ «Սահմանի մասին» ԳԴՀ-ի օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները: Այդպես է պահանջում օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը:

Սակայն Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանը, արդարադատության նախկին նախարար, փիլիսոփա-իրավագետ Գուստավ Ռադբրուխի բանաձևի հիման վրա (տե՛ս ստորև), որոշում է, որ կոնկրետ այս դեպքի համար թույլատրելի է Հիմնական օրենքի 103-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հետադարձ ուժի արգելքի սկզբունքի սահմանափակումը, որը սովորաբար ունի բացարձակ գործողություն: Այս բացառիկ դեպքում նյութաիրավական արդարության սկզբունքն արգելում է նախկինում գործող արդարացման հիմքերի կիրառումը, և օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը պետք է զիջի նյութական արդարությանը, որովհետև այդ արդարացնող հիմքերը խախտում են արդարության տարրական պահանջները և միջազգային իրավունքում ճանաչված մարդու իրավունքները: Օրենքով թույլատրել գնդակահարել սեփական քաղաքացիներին, ուղղակի որովհետև փորձում են քաղաքի մի մասից անցնել մյուս մասը, այնքան անարդար է, որ չի կարող ար-

<sup>17</sup> Rudolf Geiger, The German Border Guard Cases and International Human Rights, EJIL 9, 1998, p. 541.

<sup>18</sup> Rudolf Geiger, The German Border Guard Cases and International Human Rights, EJIL 9, 1998, p. 542.

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>20</sup> Էլիսբեր Մուրբեյ, Գործեր և Նյութեր, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Երևան, «Քավիդ», 2010թ., էջ 496:

<sup>21</sup> Treaty between the Federal Republic of Germany and the German Democratic Republic on the Establishment or German Unity («Unification Treaty») of 31 August 1990.

<sup>22</sup> Rudolf Geiger, The German Border Guard Cases and International Human Rights, EJIL 9, 1998, p. 543.

դարացնել մարդու բոլոր հիմնական իրավունքների կենսական հիմքը կազմող կյանքի իրավունքի խախտումը:

Ռադբրուխյան բանաձևի<sup>23</sup> համաձայն. «Արդարության և իրավական անվտանգության միջև բախումը պիտի այնպես լուծվի, որ պոզիտիվ, ուժի միջոցով ապահովված իրավունքը գերակայություն ունենա նաև այն ժամանակ, երբ իր բովանդակությամբ անարդար ու անպատրաստակամար է՝ բացառությամբ այն դեպքի, երբ արդարության հետ պոզիտիվ օրենքի հակասությունն այնպիսի անտանելի չափի է հասնում, որ օրենքը՝ որպես «սխալ իրավունք», պետք է զիջի արդարությանը: Անհնար է հստակ սահման գծել օրինական անիրավության դեպքերի և, չնայած սխալ բովանդակությանը՝ դեռ գործող օրենքների միջև: Սակայն կարելի է շատ հստակ այլ սահման գծել. **որպեղ մարդիկ արդարության նույնիսկ չեն էլ ձգտում, որպեղ հավասարությունը, որն արդարության միջուկն է, պոզիտիվ իրավունք ստեղծելիս գիտակցաբար մերժվում է, այնպեղ օրենքը ոչ միայն «սխալ իրավունք» է, այլև զուրկ է ընդհանրապես իրավական բնույթից, որովհետև չի կարելի իրավունքը, նաև պոզիտիվ իրավունքը, այլ կերպ սահմանել, քան այնպիսի մի համակարգ, որն իր իմաստով կոչված է ծառայելու արդարությանը»<sup>24</sup>: (ընդգծումը՝ հեղինակի)**

ՄԻԵԴ-ն իր մի շարք որոշումներով հաստատել է Գերմանիայի դատարանների վճիռների իրավացիությունը: Փաստորեն, ինչպես Գերմանիայի դատարանները, այնպես էլ ՄԻԵԴ-ը, արձանագրել են, որ առաջին հայացքից միանշանակ թվացող նորմերը (այդ թվում՝ վատ-

թարացնող օրենքի հետադարձ ուժի արգելքը), ամեն դեպքում, ունեն մեկնաբանման կարիք: Չի կարող գոյություն ունենալ մեկնաբանման կարիք չունեցող իրավանորմ անգամ տեսական պատկերացման մեջ: Որովհետև այն պնդումը, թե իրավանորմն իր իմաստով միանշանակ է, և այդ պատճառով դրա մեկնաբանումն ավելորդ է, արդեն (հաճախ չգիտակցված) մեկնաբանման արդյունք է<sup>25</sup>: Որքան էլ որ ցանկացած իրավունքի՝ ներառյալ քրեական իրավունքի, համակարգում օրենքի դրույթը հստակ ձևակերպված լինի, անխուսափելիորեն գոյություն ունի դատական մեկնաբանման տարր: Միշտ գոյություն է ունենալու կասկածելի կետերի բացատրության և փոփոխվող հանգամանքներին համապատասխանեցնելու անհրաժեշտություն<sup>26</sup>: Օրենսդիրն օբյեկտիվորեն չի կարող մանրամասն կանխատեսել մեր կյանքի բոլոր իրավիճակները, և հենց այդ պատճառով կոնկրետ գործի շրջանակներում դատարանը պետք է օրենքներն այնպես մեկնաբանի, որ դրանք երբեք չխաթարեն մարդկային հավասարությունը, որն էլ հենց արդարության միջուկն է: Իրավամբ՝ յուրաքանչյուր իրավաբանի առաքելությունն օրենքների ճիշտ մեկնաբանելն է՝ խորամուխ լինելով ոչ թե օրենքի տառի, այլ՝ ոգու և իմաստի մեջ, քանզի «ով կառչած է տառին՝ կառչած է մակերեսին»: “Qui haeret in litera, haeret in cortice”<sup>27</sup>:

Այսպիսով՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը բացարձակ չէ, որոշակի ծայրահեղ դեպքերում ենթակա է սահմանափակման, եթե դա բխում է իրավունքի գերակայության սկզբունքից և ծառայում է արդարությանը:

<sup>23</sup> Brian Bix, Radbruch's Formula and Conceptual Analysis, University of Minnesota Law School, 2011, p. 46.  
<sup>24</sup> Բանաձևի հայերեն թարգմանությունը՝ իրավունքի դոկտոր (Doctor Iuris, Berlin), Հագենի (Գերմանիա) համալսարանի դասախոս Գոռ Հովհաննիսյանի՝ <https://bit.ly/2sm8vda> (21.08.2018):  
<sup>25</sup> Musielak/Hau, Grundkurs BGB, 15. Auflage 2017, Rn. 135՝ Գ. Հովհաննիսյանի էջից՝ <https://bit.ly/2VbbF9>:  
<sup>26</sup> Streletz, Kessler and Krenz v Germany § 50, 03.22.2001.  
<sup>27</sup> Herbert Broom, A Selection of Legal Maxims, classified and illustrated, Second Edition, London, 1848, p. 534.

**ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ**

Հայ-ռուսական համալսարանի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ,  
 ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

**ԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
 (ՀԱՄԱՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ)**

**1. Լռությունն իրավունքում**

**1.1. Ընդհանուր դրույթներ**

Լռություն՝ երբ մարդ չի օգտագործում ձայնային խոսք, երբ նա իր մեջ պահում է որոշակի գաղտնիք և դրանով իսկ ինքը դառնում է գաղտնիք, այսինքն՝ այնպիսի մի բան, որն այլ անձի կողմից չի կարող ճանաչվել կամ բացահայտվել: Մարդուն այս տեսանկյունից դիտարկելու մոտեցում առկա է ժամանակակից մարդաբանական փիլիսոփայությունում, երբ մարդն այն է, ով ենթակա չէ այլ անձի մեկնությանը<sup>1</sup>:

Իրավական և քաղաքական ուսմունքների պատմության մեջ «լռություն» հասկացությունը մեկնաբանվել է տարբեր կերպ, նույնիսկ առկա են եղել հակասական մոտեցումներ: Հին հունական փիլիսոփա Պարմենիդն ասել է. «Այն, ինչ չի կարող խոսքով արտաբերվել, գոյություն չունի»<sup>2</sup>: Ասվածը նշանակում է, որ լռությունից հնարավոր չէ որևէ բան եզրակացնել, ըստ էության՝ դա ոչինչ չի արտահայտում: Մյուս կողմից՝ Շ. Մոնտեսքյոն, քննարկելով վիրավորանքի հանցակազմի իրավաչափությունը, նշել է. «Երբեմն լռությունը ցանկացած խոսքից առավել արտահայտիչ է»<sup>3</sup>: Ի տարբերություն Պարմենիդի, ըստ Մոնտեսքյոյի՝ լռությամբ կամք հնարավոր է կամք արտահայտել, ինչ-որ բան «ասել»:

Լռության հարցում հակասական է նաև Ցիցերոնի մոտեցումները: Նա Կատիլինայի դեմ առաջին ճառում արտաբերել է՝ «cum tacent, clamant»! (բառացի. «Երբ լռում են, ուրեմն՝ ճչում

են») հանրահայտ արտահայտությունը: Մյուս կողմից՝ Ցիցերոնն իր «Ի պաշտպանություն Ցեցինայի» ճառում նշում է. «...Ինչ է ստացվում: Բավարար չափով է դա արդյոք արտահայտվել բառերով: Ամենևին: Ինչը, այդ դեպքում, ուժ ունեցավ: Կամքը: Եվ եթե դա հնարավոր լիներ ճանաչել՝ չնայած մեր լռությանը, բառեր օգտագործելու անհրաժեշտություն չէր առաջանա: Բայց քանի որ դա հնարավոր չէ, բառերը ստեղծվել են ո՛չ թե կամքը թաքցնելու, այլ՝ արտահայտելու համար»<sup>4</sup>:

Ստացվում է՝ Ցիցերոնը Կատիլինայի հանցակիցների (սենատորների) լռությունը մեկնաբանել է հակաիրավական արարքներ կատարելու փաստի ընդունում և հայտարարել՝ նրանց լռությունը նման է ճիչի, իսկ մեկ այլ ճառում նշել է, որ լռությունը չի կարող փոխարինել բառերը, և լռությունից հնարավոր չէ պարզել մարդու կամքը:

Հռոմեական իրավունքում լռությունը նույնպես դիտարկվում էր տարբեր կերպ: Մի դեպքում մեկնաբանվում էր այնպես, որ ո՛չ հերքում է, ո՛չ էլ հաստատում է, մեկ այլ դեպքում՝ լռությունը որակվում էր համաձայնության նշան, այն պայմանով, որ անձը պարտավոր էր և կարող էր խոսել: Այսպես՝ հռոմեական իրավունքի մասնագետները նշում են, որ այդ ժամանակ գործում էր հռոմեական իրավաբանների կողմից ծայրահեղ զգուշությամբ ձևակերպված՝ *qui tacet, non utique fatetur; sed tamen verum est, eum non negare* (նա, ով լռում

<sup>1</sup> Катюхина Т. В. Что таит в себе молчание? // Философия хозяйства. 2009. №2 (62). С. 145-150.  
<sup>2</sup> Катюхина Т. В. «Человек молчащий» как предмет исследования философской антропологии // Вестник РУДН, серия Философия, 2009, №4. С. 86.  
<sup>3</sup> Монтескье Ш. Л. Избранные произведения / Академия наук СССР. Институт философии. М.: Госполитиздат, 1955. С. 325-326.  
<sup>4</sup> Цит. по: Гроций Г. О праве войны и мира: Три книги, в которых объясняются естественное право и право народов, а также принципы публичного права; перевод с латинского А. Л. Саккетти. М.: Госюриздат, 1956. С. 411.

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 110 2019

է, բնականաբար, չի ընդունում, բայց ճշմարիտ է նաև այն, որ նա չի հերքում<sup>5</sup>) ընդհանուր կանոնը: Հռոմեական իրավունքում գործող այս ընդհանուր կանոնը Յու. Բարոնը գնահատել է որպես սխալ կանոն և ավելացրել. «Առանձին որոշումներից բխում է, որ լռությունը մեկնաբանվում է որպես համաձայնություն միայն այն դեպքերում, եթե սովորույթները կամ քաղաքավարության կանոնները պահանջում են կամքի որոշակի արտահայտում, հետևապես՝ առանց հակասելու հնարավոր չէ այլ ողջամիտ մեկնաբանություն, քան դիտել համաձայնության իմաստով»<sup>6</sup>:

Այսպիսով՝ հռոմեական իրավունքի մասնագետները, հիմք ընդունելով *corporis iuris* կազուիստիկան (Հուստինիանոսի Ժողովածու՝ հեղ.), կատարել են հետևյալ ընդհանրացումը՝ *qui tacuit quum loqui potuit et debuit consentire videtur* եթե նա, ով պարտավոր է և կարող է խոսել, լռում է, ապա համարվում է, որ համաձայն է՝ հեղ.): Ասվածում առկա է երկու սահմանափակում՝ լռությունն այն անձի համաձայնության նշանն է, ով՝ 1) պարտավոր էր խոսել, և 2) հնարավորություն ուներ խոսելու<sup>7</sup>:

Կանոնական իրավունքը հետագայում ընդօրինակել է հռոմեական իրավունքի *is qui tacet non fatetur, sed nec utique negare videtur* ընդհանուր կանոնը, սակայն, այս կանոնին զուգահեռ՝ առաջ է քաշել նաև դրան հակասող մեկ այլ կանոն՝ *qui tacet consentire videtur* (ով լռում է, համարվում է, որ համաձայն է՝ հեղ.)<sup>8</sup>:

Նախահեղափոխական ռուսական իրավագիտության մեջ ընդունված էր հռոմեական իրավունքում գործող այն մոտեցումը, ըստ որի՝ նա ով լռել է, թեև կարող էր խոսել, համարվում է, որ համաձայն է (*qui tacuit quum loqui potuit et debuit consentire videtur*): Օրինակ՝ Ն. Հրեդեսկուլը նշում էր. «Մարդու կամ հասարակության լռությունն ամենևին էլ նույ-

նական չէ քարի լռության հետ: Երբ մարդը լռում է այնպիսի բանի ներկայությամբ, որի նկատմամբ ունի իշխանություն և ներգործելու հնարավորություն, ապա մենք նրա լռությանը հաղորդում ենք մեկ իմաստ, որն արտահայտվում է հայտնի ասույթում՝ «լռությունը համաձայնության նշան է»<sup>9</sup>:

Խորհրդային ժամանակաշրջանում ընդունված էր այն մոտեցումը, ըստ որի. «Լռությունը բացասական կամահայտնություն է, որով բացասվում է ոչ թե կամքի առկայությունը, այլև՝ դրական կամահայտնությունը»<sup>10</sup>: Այս ժամանակաշրջանում գիտնականները լռությունից բխեցնում էին կամահայտնության կանխավարկածը, սակայն այն պայմանով, որ կամահայտնության նման ձևը թույլատրված է<sup>11</sup>:

Իրավական կյանքում լռությունն ունի բազմաթիվ նշանակություն, նույնիսկ առեղծվածային է, քանի որ լռությունից, որպես կանոն, հնարավոր չէ անմիջապես պարզել մարդու կամքի բովանդակությունը, այդ պատճառով էլ իրավահարաբերություններ կառուցելու փխրուն հիմք է:

## 1.2. Լռություն հասկացությունը

Լռությունն իրավահարաբերության սուբյեկտների իրավաչափ կամ ոչ իրավաչափ անգործությունն է, որից բխում է իրավական հարցի վերաբերյալ սուբյեկտի կամքի պայմանական բովանդակությունը (պայմանական համաձայնությունը կամ անհամաձայնությունը), և (կամ) որի հետ պոզիտիվ իրավունքը (գործարքը) անմիջապես կապում է իրավական հետևանքների առաջացումը: Նշված բնորոշման վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ:

*Առաջին՝* ըստ այս բնորոշման՝ լռությունն անգործություն է, ինչն էականորեն ընդլայնում է լռության տիրույթը: Իհարկե, լռությունը կա-

<sup>5</sup> Латинская юридическая терминология // [http://na5ballov.pro/index.php?do=yur\\_lat&query=&sort=DESC&page=2&letter=q](http://na5ballov.pro/index.php?do=yur_lat&query=&sort=DESC&page=2&letter=q)

<sup>6</sup> Барон Ю. Система римского гражданского права. Выпуск первый. Книга I: Общая часть / Перевод Л. Петражицкого. Третье издание (исправленное по 9-му немецкому изданию). СПб.: 1909. С. 142.

<sup>7</sup> Ефимов В. В. Догма римского права: учебный курс. СПб.: Книжный магазин А.Ф. Цинзерлинга, бывший Мелье и К°, 1901. С. 134.

<sup>8</sup> Барон Ю. Указ. соч. С. 141-143.

<sup>9</sup> Гредескул Н. А. К учению об осуществлении права. Интеллектуальный процесс, требующийся для осуществления права: социально-юридическое исследование. Харьков. Типография Адольфа Дарре, 1900. С. 66.

<sup>10</sup> Красавчиков О. А. Юридические факты в советском гражданском праве. М.: Госюриздат, 1958. С. 100.

<sup>11</sup> Ойгензихт В. А. Презумпции в советском гражданском праве. Душанбе: Ирфон, 1976. С. 57.



րելի է մեկնաբանել նաև նեղ իմաստով, որի դեպքում, լռություն ասելով՝ կհասկացվեն միայն այն դեպքերը, երբ իրավահարաբերության սուբյեկտը չի խոսում (ծայներ չի արտաբերում): Լռության նեղ մեկնաբանությունը, կարծում ենք, չի համապատասխանի մարդկանց հաղորդակցման ձևերի վերաբերյալ արդի պատկերացումներին: Իրավական կյանքում մարդիկ միմյանց հետ հաղորդակցվում և իրենց կամքը փոխանցում են ոչ միայն բանավոր, այլև գրավոր ձևով, ինչպես նաև կոնկրետ գործողություններով: Բոլոր այն դեպքերում, երբ իրավահարաբերության սուբյեկտի կամքի բովանդակությունը հասկանալու համար ակնկալվում է, որ նա խոսի, գրի կամ այլ գործողություն կատարի, սակայն նա չի խոսում, չի գրում կամ չի գործում, ապա անգործության այս ձևերը կարելի է դիտել որպես լռություն:

*Երկրորդ*<sup>12</sup>՝ հնարավոր չէ լռությանը և դրանից բխող կամքի պայմանական բովանդակությանը տալ այնպիսի ունիվերսալ իրավաբանական նշանակություն, որը կիրառելի կլինի բոլոր դեպքերի և իրավիճակների համար: Այս կապակցությամբ ընդունելի է Մակ Գիբոնի մոտեցումը, ըստ որի՝ լռությունը ինքնին չի նշանակում լռեցյալն համաձայնություն: Արդյոք լռությունը կմեկնաբանվի որպես համաձայնություն՝ կախված է լռության պայմաններից<sup>12</sup>:

### 1.3. Լռության տեսակները

Իրավունքում լռությունը կարելի է դասակարգել տարբեր հիմքերով: Ըստ իրավաչափության՝ լինում է իրավաչափ և ոչ իրավաչափ լռություն: Իրավաչափ լռությունն առկա է, երբ, պոզիտիվ իրավունքի կամ գործարքի համաձայն՝ լռությունը թույլատրելի վարքագիծ է: Իրավաչափ լռության օրինակ է, երբ օրենքով

սահմանվում է դատավարական ժամկետը երկարացնելու մասին քննիչի միջնորդությունը դատախազի կողմից լռությամբ բավարարելու հնարավորությունը: Ոչ իրավաչափ լռությունն առկա է այն դեպքում, երբ օրենքով սահմանված է գործելու (խոսելու) պարտականություն, սակայն անձը դա չի կատարում: Ոչ իրավաչափ լռության օրինակ է, երբ քննիչը պարտավոր է այս կամ այն փաստական տվյալի մասին հայտնել վարույթի մասնակցին, սակայն, «մարտավարական» նկատառումներից ելնելով՝ լռում է դրա մասին (պասիվ խաբեություն): Ոչ իրավաչափ լռություն դրսևորած սուբյեկտը զրկվում է լռության շնորհիվ ձեռք բերած առավելությունն օգտագործելու կամ հակառակ կողմին պահանջներ կամ նրա դեմ առարկություններ ներկայացնելու հնարավորությունից:

Ըստ սուբյեկտների՝ լինում է մասնավոր անձանց և հանրային ծառայողի (հանրային իշխանության մարմնի) լռություն: Մասնավոր անձի լռության օրինակ է մեղադրյալի կողմից ցուցմունք չտալը, հանրային ծառայողի լռության օրինակ է վարչական մարմնի կողմից լիցենզիա տրամադրելու մասին դիմումին օրենքով սահմանված ժամկետում չպատասխանելը, որի դեպքում լիցենզիան համարվում է տրամադրված:

Այս դասակարգման գործնական նշանակությունն այն է, որ հանրային ծառայողի լռությունը կարող է իրավաչափ հետևանքներ առաջացնել միայն այն դեպքում, երբ օրենքով նախատեսված է նման վարքագիծ դրսևորելու (լռելու) հնարավորություն: Ընդհին այն է, որ ՀՀ-ում, Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն. «Պաշտոնատար անձն իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ<sup>13</sup>, որոնց համար լիազորված են Սահմանադրու-

<sup>12</sup> Mac Gibbon I. C., The Scope of Acquiescence in International Law. 31 Brit. Y.B. Int'l L. 143 (1954)

<sup>13</sup> ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը կարգավորում է պաշտոնատար անձի կողմից միայն օրենքով լիազորված գործողություններ կատարելու թույլատրելիության հարցը: Արդյոք կարելի է ենթադրել, թե սահմանադիրը թույլատրելի է պաշտոնատար անձին դրսևորել իրավաչափ անգործություն, եթե նույնիսկ օրենքով նման լիազորություն նախատեսված չէ: Կարծում ենք՝ սահմանադրական նորմի տառացի ձևակերպումից անկախ՝ պաշտոնատար անձն իրավաչափ անգործություն կարող է դրսևորել (լռել), եթե լիազորված է օրենքով, հակառակ դեպքում՝ նրա լռությունը կորակվի որպես հակաիրավական: Սահմանադրական նորմի նպատակը հանրային իշխանության մարմնի վարքագիծ բոլոր ձևերը՝ ինչպես գործողությունը, այնպես էլ անգործությունը, օրինականության ռեժիմով սահմանափակելն է: Եթե, օրինակ՝ օրենքով նախատեսված չեն վարչական մարմնի կողմից քաղաքացու դիմումին սահմանված ժամկետում չպատասխանելու հնարավորությունը և դրա իրավաչափ իրավական հետևանքները, ապա նրա լռությունը (անգործությունը) իրավաչափ չէ: Մյուս կողմից՝ եթե օրենքով նախատեսված չէ պաշտոնատար անձի կողմից պոզիտիվ վարքագիծ դրսևորելու մասին լիազորող նորմ, ապա նրա գործողությունը կհամարվի ոչ իրավաչափ, իսկ այդ հարցում նրա անգործողությունը (լռությունը) կհամարվի իրավաչափ:

թյամբ կամ օրենքներով: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին»: Հայաստանում սահմանադրական այս կարգավորումների հիման վրա ձևավորվել է այն սահմանադրական մշակույթը, ըստ որի՝ պաշտոնատար անձի լիազորությունը ոչ միայն պետք է նախատեսված լինի օրենքով, այլև լիազորող նորմը պետք է լինի որոշակի, ուստի, եթե օրենքով հստակ նախատեսված չէ հանրային իշխանության մարմնի կողմից լուրջություն դրսևորելու մասին դրույթ, ապա դա կարող է որակվել զուտ որպես ոչ իրավաչափ լուրջություն (անգործություն) և նրա համար առաջացնել բացասական իրավական հետևանքներ: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 102-րդ և 199-րդ հոդվածների կարգավորումից հստակ բխում է, որ քննիչը վարույթի մասնավոր մասնակիցների միջնորդությունը մերժելու կամ բավարարելու դեպքում պետք է կայացնի պատճառաբանված դատավարական որոշում: Օրենսդիրը վարույթի մասնավոր մասնակիցների միջնորդությունը լուրջամբ բավարարելու կարգ չի նախատեսում, ուստի, եթե քննիչը 5 օրյա ժամկետում միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին որոշում չի կայացնում, ապա նրա լուրջությունն իրավաչափ չէ և չի կարող վարույթի մասնավոր մասնակցի համար առաջացնել իրավական հետևանքներ: Այս դեպքում քննիչի լուրջությունը վարույթի մասնավոր մասնակցի համար ո՛չ «հա» է, ո՛չ «չէ», սակայն ոչ իրավաչափ լուրջությունը քննիչին իրավաբանական պատասխանատվության ենթարկելու հիմք է:

Մասնավոր անձանց լուրջության իրավական հետևանքները, որպես կանոն, կարգավորված են պոզիտիվ իրավունքով կամ գործարքով, սակայն, եթե լուրջությունն արգելված չէ, կամ լուրջության հետևանքները կարգավորված չեն, ապա դա կարող է առաջացնել իրավաչափ հետևանքներ, եթե, կոնկրետ դեպքի հանգամանքներով պայմանավորված՝ անձի լուրջությունը պետք է մեկնաբանել որպես համաձայնություն կամ անհամաձայնություն (այս մասին՝ հաջորդիվ):

**1.4. Լուրջության իրավական հետևանքները**

Լուրջությունը կարող է իրավական հետևանքներ առաջացնել երկու եղանակով (տես գծագիրը, էջ 35):

*Առաջին՝* լուրջությունը, որպես իրավաբանական փաստ, անմիջապես առաջացնում է իրավական հետևանքներ, քանի որ լուրջությունից ուղղակիորեն տեսանելի է մարդու կամքը: Օրինակ՝ անձն օրենքով պարտավոր է խոսել (գործել), սակայն լուրջ է, ինչի հիման վրա ձևավորվում է էստոպել (*estoppel by silence*), և նա գրկվում է լուրջության շնորհիվ ձեռք բերած առավելությունն օգտագործելու կամ հակառակ կողմին պահանջներ կամ նրա դեմ առարկություններ ներկայացնելու հնարավորությունից: Երբ լուրջությունը *per se* առաջացնում է իրավական հետևանքներ, ապա, ըստ էության՝ խոսքը լուրջություն-փաստի մասին է: Այսպես՝ ցուցմունք տալուց հրաժարվելու փաստն ինքնին բավարար է քրեական գործ հարուցելու հարցի քննարկումն սկսելու համար: Քննիչի հարցերին չպատասխանելով՝ մարդը հստակ արտահայտում է ցուցմունք չտալու վերաբերյալ իր կամքը՝ դրանով անմիջապես ազդելով քրեաիրավական և դատավարական հարաբերությունների վրա: Կամ՝ մեղադրյալն օգտվում է լռելու (իր դեմ ցուցմունք չտալու) հիմնական իրավունքից, ինչը իրավունքի իրացման մասին կամքի արտահայտություն է: Այս օրինակներում կամքի վերաբերյալ պայմանական եզրահանգումներ անելու անհրաժեշտություն չկա, քանի որ ցուցմունք տալուց հրաժարվելն ինքնին կամքի արտահայտություն է:

*Երկրորդ՝* օրենսդիրն անձի լուրջությունից կատարում է որոշակի *պայմանական (ենթադրյալ կամ ֆիկտիվ)* եզրահանգում, այնուհետև իրավական հետևանքների առաջացումը կապում է դրա հետ: Իրավական նորմի ձևակերպումից (իրավական տեխնիկայի ընտրությունից) կախված՝ օրենսդիրը, մի դեպքում՝ լուրջությունից կարող է կատարել *ենթադրյալ* եզրահանգում, մեկ այլ դեպքում՝ լուրջությունը կարող է հավասարեցնել *ֆիկտիվ* կամահայտնությանը:

1) *Ենթադրյալ եզրահանգման* դեպքում օրենսդիրն անձի լուրջությունը դիտարկում է որպես ենթադրյալ համաձայնություն՝ ելնելով այն տրամաբանությունից, որ, եթե անձը համաձայն չլիներ, ապա, ամենայն հավանականությամբ, առարկություն կներկայացներ (իրավական կանխավարկած): Օրինակ՝ անձն իրավասու մարմնից հայցում է նորմատիվ իրավական ակտի պաշտոնական պարզաբանում, սակայն օրեն-


քով սահմանված ժամկետում պատասխան չի ստանում: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 8-րդ մասերում սահմանված է, որ պետական մարմնի լուրջության դեպքում (օրենքով սահմանված ժամկետում պարզաբանում չստանալու դեպքում) անձն առաջնորդվում է պարզաբանման իր ներկայացրած տարբերակով: Այս նորմը ձևակերպելիս օրենսդիրը ղեկավարվել է այն ենթադրությամբ, որ պետական մարմինը, եթե դեմ լինելով դիմողի ներկայացրած պարզաբանմանը, ապա ոչ թե կլռեր (չէր արձագանքի), այլ կներկայացներ իր պաշտոնական պարզաբանումը: Եթե նա լռում է, ապա ենթադրվում է, որ նա համաձայն է դիմողի ներկայացրած պարզաբանման հետ: Այլ մոտեցման դեպքում օրենսդիրը պաշտոնական պարզաբանում հայցած, սակայն պատասխան չստացած անձին կդնի անորոշության վիճակում. մի կողմից՝ նորմի ոչ հստակ լինելու հետևանքով անձը չի կարող հասկանալ օրենսդրի կամքը և գործել՝ առանց իրավախախտման մեջ մեղադրվելու բարձր ռիսկի, մյուս կողմից՝ չի կարող առաջնորդվել նորմի սեփական ընկալմամբ:

Եթե *իրավաստեղծ մարմինն* անձի լուրջությունից կատարել է ենթադրյալ եզրահանգում, ապա հետագայում *իրավակիրառ մարմինն* այլևս իրավասու չէ կոնկրետ գործի շրջանակներում գնահատելու լուրջությունից բխող ենթադրյալ եզրահանգման բնույթը: Այսպես՝ վերը նշված օրինակում իրավակիրառ մարմինը, օրինակ՝ դատարանը, իրավասու չէ քննարկելու, թե Արդարադատության նախարարը լուրջամբ ֆինչ է փորձել «ասել»՝ պայմանականորեն համաձայնվել է մարդու ներկայացրած պարզաբանման տարբերակի հետ, թե՛ պարզապես ծանրաբեռնվածության պատճառով չի կարողացել իրավական ակտի պաշտոնական պարզաբանում տալ:

2) *Ֆիկտիվ եզրահանգման* դեպքում օրենսդիրն անձի լուրջությունը *հավասարեցնում է* կամք հայտնելուն (համաձայնություն հայտնելուն), մինչդեռ իրականում անձը որևէ կամք (համաձայնություն կամ անհամաձայնություն) չի հայտնել (իրավական ֆիկցիա): Օրինակ՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Մասնակցի լուրջությունը (պարտադիր կենսա-

թոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու վերաբերյալ դիմում չներկայացնելը) համարվում է մասնակցի կողմից կենսաթոշակային ֆոնդի փայերի *սեփականությունն ընդունելու կամքի արտահայտություն* (պետության կողմից հոգուտ իրեն կնքված և կնքվելիք կենսաթոշակային ֆոնդի փայերի ձեռքբերման պայմանագրերով իր իրավունքից օգտվելու ցանկության հայտնում)» (ընդգծումը՝ *հեղ.*): Այս նորմում անձի լուրջությունն օրենսդիրը դիտել է որպես սեփականությունն ընդունելու *կամքի արտահայտություն*, մինչդեռ անձն իրականում նման կամք չի հայտնել:

Գծագիր



Այսպիսով՝ լուրջության փաստը մի դեպքում անմիջապես է առաջացնում իրավական հետևանքներ, մեկ այլ դեպքում իրավական հետևանքներ է առաջացնում միջնորդավորված՝ ենթադրյալ կամ ֆիկտիվ կամահայտնության (համաձայնության կամ անհամաձայնության) միջոցով:

**2. Լուրջությունը և իրավական պայմանականությունները**

**2.1. Լուրջությունը՝ համաձայնության կամ անհամաձայնության նշան**

Լուրջությունը բազմաֆունկցիոնալ երևույթ է: Բանասերներն առանձնացնում են լուրջության ակտի հետևյալ գործառույթները՝ 1) կոնտակտային գործառույթ (դրսևորվում է մարդկանց մտերմության և փոխըմբռնման դեպքում, արտահայտում է հաղորդակցվողների միջև շփում հաստատելու ունակությունը), 2) գնահատողական գործառույթ (արտահայտում է զրուցակցի

խոսքերի, գործողությունների գնահատականը), 3) ռոգոտիվ գործառույթ (արտահայտում է հարց-զարմանք՝ նախորդող հանկարծակի հաղորդագրության վերաբերյալ), 4) տեղեկատվական գործառույթ (նկարագրում է հասցեատիրոջ անձնական վերաբերմունքն այն ամենի վերաբերյալ, ինչի մասին խոսում է հասցեագրողը)<sup>14</sup>: Առանձնացվում է նաև լռության ռազմավարական գործառույթը, որն «արտահայտում է խոսելու ցանկության բացակայությունը, ինչով հետապնդվում է որոշակի նպատակ՝ ցույց չտալ իր անձեռնհասությունը, ինչ-որ բանում չխոստովանելու ցանկությունը, ինչ-որ մեկին չմատնելը և այլն: Լռությունը կարող է արտահայտել ատելություն, համաձայնություն, համառություն, ճիշտը չասելու ցանկություն, ամոթխածություն, համեստություն, տարակուսանք, շփոթվածություն և այլն<sup>15</sup>:

Իրավաբանական տեսանկյունից՝ կարևորվում է հատկապես լռության տեղեկատվական գործառույթը, քանի որ իրավահարաբերության սուբյեկտի լռությունը (անգործությունը) հաճախ ստեղծում է անորոշություն, որի դեպքում պետք է պայմանական եզրահանգումներ անել այն մասին, թե լռությամբ անձն ի՞նչ է փորձում «ասել», ի՞նչ կամք է արտահայտում: Օրինակ՝ «Դուք ձեզ մեղավոր ճանաչում եք» հարցին մեղադրյալը չի պատասխանում (լռում է), արդյոք դա նշանակում է, որ նա ընդունում է մեղքը (առաջադրված մեղադրանքը), թե՛ հերքում է իրեն ներկայացված մեղադրանքը: Եթե մեղադրյալի լռության վերաբերյալ իրավական կարգավորում նախատեսված չէ, ապա պետք է փաստել, որ մեղադրյալի լռությունը ոչ մի կամք չի արտահայտում (ոչ «հա» է, ոչ «չէ»), կամ էլ պո-

զիտիվ իրավունքով մեղքն ընդունելու (չընդունելու) վերաբերյալ պետք է կատարել պայմանական եզրահանգում: Գ. Շերշենևիչն արդարացիորեն նշում է. «Բարդությունն այն է, որ լռությունը կարող է ընդունվել՝ որպես համաձայնության անմիջական արտահայտում կամ էլ անհամաձայնության արտահայտում (օրինակ՝ ապրանքը որևէ գնով վաճառելու առաջարկին հաջորդող լռությունը)<sup>16</sup>:

Լռությունը լեզվաբանական առումով դիտարկվում է որպես հաղորդակցության ձև, սակայն առավել հաճախ կամքի ուղղակի արտահայտման միջոց չէ, հաղորդակցվող կողմի համար հստակ չէ լռող կողմի կամքի բովանդակությունը: Բանասերները թեև նշում են, որ «լռությունն ունի ավելի բարձր կոմունտիկատիվ պոտենցիալ, քան խոսքը»<sup>17</sup>, սակայն լռության բարձր կոմունտիկատիվ պոտենցիալը կապում են այն հանգամանքի հետ, որ կարող է ունենալ բազմաթիվ նշանակություն: Առավել ընդունելի է հետևյալ մոտեցումը. «Լռության ֆենոմենը շփման մեջ ոչ միանշանակ խնդիր է, քանի որ բազմանշանակ է (բառերի համեմատ) և, հետևապես՝ հասցեատիրոջ կողմից մեկնաբանելը բարդ է»<sup>18</sup>:

Լռության ակտում, դրա նյութական անարտահայտելիության ուժով, շեշտադրությունը տեքստից տեղափոխվում է դեպի հասցեատերը և նրա ունակությունը՝ լռությունն ընկալել որպես տեքստ և մեկնաբանել՝ դուրս բերելով դրա իմաստը հաղորդակցման ընդհանուր իրավիճակից<sup>19</sup>: Այսպիսով՝ առավել հաճախ լռությունից հնարավոր չէ կատարել կամքի բովանդակության վերաբերյալ հստակ եզրահանգում, քանի որ լռությունը կարող է պայմանա-

<sup>14</sup> Крестинский С. В. Коммуникативная нагрузка молчания в диалоге // Личностные аспекты языкового общения. Калинин, 1989. С. 96-97, Полякова С. Е. Молчание, обусловленное контактной, оценочной, рогативной и информативной функциями // Язык и культура в эпоху глобализации: сборник научных трудов по материалам первой международной научной конференции «Язык и культура в эпоху глобализации». Выпуск 1. В 2-х томах. Т. 2. СПб.: Изд-во СПбГЭУ, 2013. С. 91.

<sup>15</sup> Инубуси Й. Феномен молчания как компонент коммуникативного поведения: дисс.... канд. филол. наук. М.: 2002, Меликян С. В. Речевой акт молчания в структуре общения: дисс.... канд. филол. наук. Воронеж, 2000.

<sup>16</sup> Шершеневич Г.Ф. Учебник русского гражданского права. Т. 1. М.: Статут, 2005.С. 203.

<sup>17</sup> Копылова Т. Р. Молчание: вербальная vs. невербальная коммуникация // Вестник Удмуртского университета. Серия «История и филология». 2015. № 3. URL: <https://cyberleninka.ru> (дата обращения: 25.11.2018).

<sup>18</sup> Бабаян В. Н. Молчащий наблюдатель и феномен молчания как коммуникативная стратегия в диалоге // Вестник Адыгейского государственного университета. Серия 2: Филология и искусствоведение. 2009. №2. URL: <https://cyberleninka.ru> (дата обращения: 23.11.2018).

<sup>19</sup> Копылова Т. Р. Молчание как термин: проблема многозначности // Вестник Удмуртского университета. Серия «История и филология». 2015. №5. URL: <https://cyberleninka.ru> (дата обращения: 25.11.2018).

վորված լինել տարաբնույթ պատճառներով և կարելի է տարբեր կերպ մեկնաբանել: Ինչպես խուլի և համրի պարագայում նրանց խոսքը մեկնաբանում է խուլուհամրի թարգմանիչը՝ իրավական նշանակություն ունեցող լռության դեպքում մարդու կամքի բովանդակությունը մեկնաբանելու պարտականությունը պետք է կրի առավելապես պետությունը կամ գործարքի կողմերը: Նրանք պետք է նախապես սահմանեն, թե կոնկրետ իրավիճակում ինչպես ընկալել անձի լռությունը, օրինակ՝ դիտել որպես համաձայնություն, թե՛ անհամաձայնություն:

*2.2. Լռության անորոշությունը և պոզիտիվ իրավունքի որոշակիությունը*

Լռությունը փիլիսոփայության մեջ մեկնաբանվում է որպես մարդկային կեցության դրսևորման անկատար ձև և, ընդհանուր առմամբ՝ քննարկվում է բացասական տեսանկյունից: «Լռությունը ոչինչ չի արտահայտում, ուստի չի կարող ունենալ որևէ էական արժեք: Այն ամենը, ինչ ենթակա չէ մեկնաբանման և պարզաբանման, պարզապես մարդկային կեցության անկատար դրսևորում է»<sup>20</sup>:

Լռությունը՝ որպես առեղծվածային երևույթ, գուցե հետաքրքիր է փիլիսոփայական մտորումների համար, սակայն պոզիտիվ իրավամտածողությանն օտար է, քանի որ, որպես կանոն, ստեղծում է անորոշության մթնոլորտ: Պատճառն այն է, որ պոզիտիվ իրավունքին հատուկ է ֆորմալ որոշակիությունը: Իրավական կարգավորումը պետք է այն աստիճանի որոշակի և հստակ լինի, որ իրավունքի սուբյեկտը կարողանա՝ 1) ընկալել իրավական նորմի բովանդակությունը, 2) կանխատեսել մյուս սուբյեկտների հնարավոր վարքագիծը, և 3) պոզիտիվ իրավունքի համապատասխան կազմակերպել իր վարքագիծը: Եթե պոզիտիվ իրավական կարգավորումն այն աստիճան վերացական է, որ անձին զրկում է իր վարքագիծն օրենքին համապատասխան կազմակերպելու հնարավորությունից, ապա դա նշանակում է, որ պետությունը չի կարողացել պատշաճ կերպով իր կամքը փոխանցել հասարա-

կությանը, ուստի նրա կամքն արտացոլող ակտը (օրենքը) իրավական չէ:

Պոզիտիվ իրավական մտածողության համար կարևոր են ոչ միայն իրավունքի բովանդակության ֆորմալ որոշակիությունը, այլ նաև կոնկրետ իրավահարաբերության որոշակիությունը, կողմերի վարքագծի կանխատեսելիությունը, մի սուբյեկտի կողմից մյուս կողմի արարքների նշանակությունը հասկանալու և դրան համապատասխան սեփական վարքագիծը կազմակերպելու հնարավորությունը, մինչդեռ լռության պարագայում հարաբերության կողմերի կամքի բովանդակությունն ավելի շատ անորոշ է, քան որոշակի: Լռությունը, որպես առեղծվածային երևույթ, ավելի շատ հարցեր է առաջացնում, քան պատասխաններ է տալիս: Եվրոպական դատարանի պրակտիկայից ներկայացնենք օրինակ: «Ֆերնանդես Մարտինեսն ընդդեմ Իսպանիայի» (Fernandez Martinez v. Spain, 12.06.2014թ.) գործով դիմողը 1961թ. դարձել է քահանա, իսկ 1984թ. դիմել է Հռոմի Պապին կուսակրոնությունից ազատվելու խնդրանքով, որը տևական ժամանակ մնացել է առանց պատասխանի: Դիմողը 1985թ. կազմել է ընտանիք և ունեցել հինգ երեխա: Դիմողը 1996թ. նոյեմբերին լրագրողի հետ հարցազրույցում քննադատական դիրքորոշումներ է հայտնել և պահանջել է բարեփոխումներ իրականացնել կուսակրոնության, աբորտը ճանաչելու և քահանաների ու եպիսկոպոսների ժողովրդավարական ընտրություններ կազմակերպելու ոլորտում: 1997թ. օգոստոսին Հռոմի Պապը (դիմումից 13 տարի անց) դիմողին ազատել է կուսակրոնությունից և Սուրբ աստիճանից:

Այս օրինակում կուսակրոնությունից ազատելու քահանայի խնդրանքը շուրջ 13 տարի մնացել է առանց պատասխանի: Եթե ենթադրենք, թե այս լռության հետևանքների իրավական կարգավորումը բացակայում է, ապա դժվար է միանշանակ ասել, թե քահանան ինչպես պետք է ընկալեր իր դիմումի վերաբերյալ Հռոմի Պապի տևական լռությունը՝ որպես համաձայնություն, թե՛ անհամաձայնություն: Տվյալ դեպքում Հռոմի Պապի լռությունը քահանան ընկալել է որպես կուսակրոնությունից ազատե-

<sup>20</sup> Катюхина Т. В. «Человек молчаний» как предмет исследования философской антропологии // Вестник РУДН, серия Философия, 2009, №4. С. 86.

լու մասին լռելյայն համաձայնություն և մեկ տարի անց կազմել է ընտանիք, ունեցել՝ հինգ երեխա:

Այսպիսով՝ եթե լռությունն ունի հանրային նշանակություն կամ վերաբերում է այլ անձանց օրինական շահերին, ապա առաջին հերթին պոզիտիվ իրավունքը պետք է վերացնի կամ մեղմի լռությունից բխող անորոշությունը: Օրինակ՝ ՀՀ սահմանադրական իրավունքը սահմանում է, թե պաշտոնատար անձը և մասնավոր անձն օրենսդրական բացի դեպքում ինչպես պետք է գործեն: Իրավաստեղծ մարմնի լռության դեպքում մասնավոր անձը կարող է կատարել օրենքով չնախատեսված, բայց և չարգելված գործողություն, իսկ պաշտոնատար անձն իրավասու չէ կատարել օրենքով ու չիսգործող գործողություն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով նրան թույլատրվում է գործել օրենքի կամ իրավունքի անալոգիայի հիման վրա:

Լռությունից բխող կամքի բովանդակությունը կարելի է որոշել ոչ միայն պոզիտիվ իրավունքով, այլև՝ գործարքի կողմերի համաձայնությամբ կամ իրավիճակի առանձնահատկություններից ելնելով: Այսպես՝ գերմանական իրավունքում նշվում է, որ, ընդհանուր կանոնի համաձայն՝ լռությունը չունի որևէ հայտարարության արժեք, ոչ «հա» է, ոչ «չէ»: Իսկ որպես բացառություն՝ լռությունն ունի հայտարարության արժեք հետևյալ փաստերի հիման վրա՝ 1) կողմերի ուղղակի պայմանավորվածության, 2) օրենքի դրույթի, 3) կոնկրետ դեպքի առանձնահատկության<sup>21</sup>:

Արդյոք հնարավոր է կոնկրետ դեպքի առանձնահատկությունների հիման վրա որոշել, թե լռության դեպքում անձն ի՞նչ է ուզում «ասել», արդյոք հնարավոր է հասկանալ նրա կամքը: Հռոմեական իրավունքում այս հարցին փաստացի տրվում էր դրական պատասխան և, որպես օրինակ՝ նշվում էր. «Նշանադրության ընթացքում դատեր լռությունը նրա հոր կողմից ընկալվում է որպես համաձայնություն: Նույնպիսին են նաև դատեր նշանադրու-

թյան ընթացքում նրա հոր լռության հետևանքները»<sup>22</sup>:

Իհարկե, կարող են հանդիպել իրավիճակներ, երբ, կոնկրետ դեպքի հանգամանքներով պայմանավորված՝ անձի լռությունը ենթադրաբար *պետք է* մեկնաբանել որպես համաձայնություն կամ անհամաձայնություն: Օրինակ՝ պայմանագիր կնքելու նպատակով բանակցություն սկսելու առաջարկի վերաբերյալ մյուս կողմի լռությունը համաձայնության նշան չէ, քանի որ, եթե մյուս կողմը համաձայն լիներ, ապա ողջամտորեն ակնկալվում է, որ նա նախապայմանագրային գործընթացն սկսելու ուղղությամբ պետք է կատարեր որոշակի գործողություններ, օրինակ՝ ճշտեր անձի տվյալները, նրա գտնվելու վայրը և այլն: Եթե առաջարկություն ստացած անձը որևէ գործողություն չի կատարում, ապա դա վկայում է այն մասին, որ նա մերժում է նախապայմանագրային գործընթաց սկսելու առաջարկը: Լռությունը չի կարող մեկնաբանվել այնպես, որի հետևանքով անձի վրա կորվի բոլոր առաջարկություններին պարտադիր արձագանքելու անհամաչափ պարտականություն:

Հ. Գրոտիուսը ներկայացնում էր այնպիսի իրավիճակ, որի հանգամանքներից ակնհայտ էր, որ լռությունն արտահայտում է որոշակի պայմանական կամք: Նա կարծում էր, թե որոշ դեպքերում հնարավոր է լռությամբ ձեռք բերել պայմանավորվածություն, և նշում էր. «Ասվածի օրինակ է նա, ով, գալով թշնամու կամ զավթիչների կողմից, իրեն հանձնում է մեկ այլ ժողովրդի կամ պետության պաշտպանությանը: Այս դեպքում հարկ չկա կասկածելու, որ այդ անձը լռությամբ պարտավորվում է չկատարել որևէ գործողություն այն պետության դեմ, որտեղ նա ապաստան է փնտրում<sup>23</sup>»: Այս օրինակում՝ այլ պետությունից ապաստան և պաշտպանություն հայցելու հանգամանքից բխում է, որ այդ անձը լռությամբ ընդունում է իրեն հովանավորող պետության օրենքները, և համաձայնվում է ենթարկվել նրան:

Այնուամենայնիվ, ժամանակակից կյան-

<sup>21</sup> Musielak/Hau, Grundkurs BGB, 15. Auflage, 2017, Rn. 143:

<sup>22</sup> Барон Ю. Система римского гражданского права. Выпуск первый. Книга I: Общая часть / Перевод Л. Петражицкого. Третье издание (исправленное по 9-му немецкому изданию). СПб.: 1909. С. 142.

<sup>23</sup> Гроций Г. О праве войны и мира: Три книги, в которых объясняются естественное право и право народов, а также принципы публичного права / Перевод с латинского А.Л. Саккетти. М.: Госюриздат, 1956. С. 819.

քում, որտեղ իրավական որոշակիությունը սահմանադրական արժեք է և օրենսգոր ընդլայնում է իր գործողության ոլորտը, լուծությունից բխող կամքի բովանդակությունը պետք է նախապես որոշել պոզիտիվ իրավունքով կամ գործարքով: Կոնկրետ դեպքի առանձնահատկությունների հիման վրա լուծությունից բխող կամքը պետք է որոշել, երբ՝ 1) իրավունքը կամ գործարքը լուծում է լուծության մասին, և 2) կոնկրետ իրավիճակում լուծությունը ենթադրաբար պետք է մեկնաբանել որպես ենթադրյալ համաձայնություն կամ անհամաձայնություն:

Մինչդեռ անհասկանալի է, թե ինչո՞ւ վերը նշված օրինակում ամուսնության (նշանադրության) վերաբերյալ աղջկա լուծությունը պետք է համարել համաձայնություն: Գուցե որոշ սոցիալական միջավայրերում մարդկանց կենցաղային գիտակցության մեջ դեռևս պահպանվում է այս կարծրատիպը, սակայն, պատմական ներկայիս ժամանակաշրջանում, որտեղ գենդերային հավասարության փիլիսոփայությունը լայն տարածում ունի, ամուսնության (նշանադրության) վերաբերյալ կնոջ լուծությունն ինքնին չի կարող որակվել որպես համաձայնություն: Ընդ որում՝ ժամանակակից ընտանեկան իրավունքը մերժում է հռոմեական իրա-

վունքում տարածված «նշանադրության (ամուսնության) վերաբերյալ կնոջ լուծությունը համաձայնության նշան է» կարգախոսը: Այսպես՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնության կնքման համար անհրաժեշտ է ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը: Այս դրույթից հստակ է, որ ամուսնությունը կարող է կնքվել, եթե առկա է կողմերի ուղղակի համաձայնությունը, իսկ կնոջ լուծությունը չի կարող մեկնաբանվել որպես ֆիկտիվ համաձայնություն:

Այսպիսով՝ լուծության պայմաններում ստեղծված իրավական անորոշությունը վերացնելու նպատակով հանրային իշխանության մարմինները կամ գործարքի կողմերը կանխորոշում են, թե ինչպե՞ս պետք է հասկանալ լուծությունից բխող կամքի բովանդակությունը՝ որպես լուծյալ համաձայնություն, թե՛ անհամաձայնություն: Եթե բացակայում է այլ կարգավորում, կամ իրավիճակն այլ բանի մասին չի վկայում, ապա պետք է գործի ընդհանուր կանոնը՝ լուծությունը որևէ կամք չի արտահայտում և իրավական նշանակություն չունի:

*Ճարտանակությունը հաջորդ համարում*



**ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱԼ**

ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

**ՈՐՈՇ ԵՎ ԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՆԵՐՄԱՆ ԽՆԴՐԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Ներումը հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու բացառիկ միջոց է: Ընդ որում՝ ներում շնորհելու վերաբերյալ ընդունված ակտը չի ենթադրում դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի փոփոխություն, հետևաբար՝ չի դիտարկվում դատական ակտի վերանայման եղանակ: Ներում շնորհելը, որպես կանոն, ներում շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի խիստ հայեցողական լիազորություն է:

Ներման ինստիտուտի սոցիալական դերակատարության գնահատման բարդությամբ պայմանավորված՝ ներումը դարձել է տարբեր գիտությունների, այդ թվում՝ իրավագիտության, փիլիսոփայության, հոգեբանության, սոցիոլոգիայի ուսումնասիրության առարկա<sup>1</sup>: Ներման ինստիտուտը, ուսումնասիրվելով տարբեր գիտությունների կողմից, այդուհանդերձ՝ տեսական գրականությունում չի հաջողվել ձևավորել վերջինիս սոցիալական դերակատարության վերաբերյալ միասնական ընդունելի մոտեցում, մասնավորապես՝ որոշ հեղինակներ հասարակությունում սոցիալական համերաշխության ամրապնդման տեսանկյունից կարևորում են ներման ինստիտուտի դերը, մյուսները, այդ թվում՝

Չ. Բեկկարիան, Ն. Բենտամը, տրամագծորեն հակառակ մոտեցումն են հիմնավորում<sup>2</sup>:

Սույն հոդվածի շրջանակներում նպատակ չունենալով քննարկման առարկա դարձնել ներման ինստիտուտի սոցիալական դերակատարությունը՝ այդուհանդերձ՝ կարծում ենք, թե պետությունում ներման ինստիտուտի առկայությունը, ընդհանուր առմամբ, կարող է նպաստել հասարակությունում սոցիալական լարվածության թուլացմանը և սոցիալական համերաշխության ամրապնդմանը, սակայն նշված նպատակներին հասնելու համար առանցքային կարևորություն ունի այն հանգամանքը, որ ներում շնորհելիս անհրաժեշտ է բացառապես առաջնորդվել հասարակական շահի գերակայության, սոցիալական արդարության և իրավունքի գերակայության հիմնարար արժեքներով: Հակառակ դեպքում ներում շնորհելիս խտրական մոտեցման դրսևորումն անխուսափելիորեն հակառակ ազդեցությունը կունենա:

Համակարծիք ենք Վ. Տիչինսկու<sup>3</sup> և Ն. Վետրովի<sup>4</sup> այն մոտեցման հետ, որ ներման կիրառումը պետության կողմից հանցագործություն կատարած անձի նկատմամբ մարդասիրության սկզբունքի դրսևորում է, իսկ պետությունում

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 110 2019

<sup>1</sup> Տե՛ս Л. Н. Кулик, Исторический генезис становления законодательства об осуществлении помилования, Одесский государственный университет внутренних дел (Украина), հասանելի էր՝ [http://www.institutemvd.by/components/com\\_chronoforms5/chronoforms/uploads/20170529093438\\_Kulik.pdf](http://www.institutemvd.by/components/com_chronoforms5/chronoforms/uploads/20170529093438_Kulik.pdf)  
<sup>2</sup> Տե՛ս Таганцев Н.С., Русское уголовное право, лекции: часть общая. В 2 т.– М., 1994. Т. 2. С. 358–359.  
<sup>3</sup> Տե՛ս Тычинский В. Ю., Обсуждая вопросы применения указа «О комиссиях по вопросам помилования на территориях субъектов Российской Федерации» // Указ Президента РФ «О комиссиях по вопросам помилования на территориях субъектов Российской Федерации» от 28 декабря 2001 г. № 1500 Материалы всероссийской научно-практической конференции (Брянск, 24–25 октября 2002 г.). Брянск, 2002. с. 34.  
<sup>4</sup> Տե՛ս Ветров, Н.И., Уголовное право, общая часть: учебник для вузов.– М., 2002.



ներման ինստիտուտի օրենսդրական երաշխավորումը՝ պետությունում մարդասիրության սկզբունքի գնահատման հստակ ցուցիչ:

Դեռևս 20-րդ դարի երկրորդ կեսից հետպատերազմյան Եվրոպայում բարձրացավ մարդասիրության սկզբունքի վերարժևորման նոր ալիք, ինչը դրսևորվեց մի շարք պետություններում մահապատժի վերացմամբ, ներման ու համաներման ինստիտուտների իրավական ամրագրմամբ, որի հետևանքով ներկայումս մի շարք պետություններում դատապարտյալի հիմնական իրավունքներից մեկը ներման խնդրանքի իրավունքն է: Ընդ որում՝ հարկ է նշել, որ ներման ինստիտուտն առաջացել է ավելի վաղ, քան ներման խնդրանքի իրավունքը<sup>5</sup>: Մասնավորապես՝ ներման խնդրանքի իրավունքը՝ որպես դատապարտված անձի իրավունք, պետությունների օրենսդրություններում իրավական ամրագրում ստացավ 20-րդ դարից:

2015 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխությունների համատեքստում գիտական հետաքրքրություն է ձեռք բերել այն հարցը, թե ներման խնդրանքի իրավունքը և ներում ստանալու հնարավորությունը պետք է արդյոք երաշխավորվեն բոլոր դատապարտյալների համար՝ կատարած հանցագործության ծանրությունից և բնույթից անկախ:

Նշված խնդրի հետ կապված՝ մինչև ՀՀ սահմանադրաիրավական կարգավորումներին անդրադառնալն անհրաժեշտ է նշել, որ այդ հարցի վերաբերյալ գիտական հարթության վրա միասնական մոտեցում չի ձևավորվել: Մասնավորապես՝ մի շարք հեղինակներ հասարակությունում սոցիալական արդարության վերականգնման տեսանկյունից կարևորում են ներման խնդրանք ներկայացնելու արգելքի նախատեսում այն դատապարտյալների նկատմամբ, ովքեր կատարել են ծանր հանցանք<sup>6</sup>: Սակայն, ի հակադրություն նշված տեսակետի՝ հեղինակների մեկ այլ խումբ համարում է, թե

ներման խնդրանք ներկայացնելու իրավունք պետք է ունենա յուրաքանչյուր դատապարտյալ՝ կատարած հանցագործության ծանրությունից և այլ հանգամանքներից անկախ<sup>7</sup>:

ՀՀ-ում դատապարտյալի ներման խնդրանքի իրավունքը երաշխավորված է Սահմանադրությամբ: Մասնավորապես՝ Սահմանադրության 70-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման, ներառյալ՝ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք: Միևնույն ժամանակ՝ նշվում է, որ մանրամասները սահմանվում են օրենքով: Դատապարտյալի ներման խնդրանքի իրավունքն ամրագրված է Սահմանադրության 2-րդ գլխում, որտեղ զետեղված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, հետևաբար՝ ներման խնդրանքի իրավունքը յուրաքանչյուր դատապարտյալի հիմնական սահմանադրական իրավունքներից է: Ընդ որում՝ Սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալի ներման խնդրանքի իրավունքը սահմանափակման ենթակա իրավունքների շարքը չի դասվում, հետևաբար՝ բացարձակ, չսահմանափակվող, անխախտ սահմանադրական իրավունք է:

Սահմանադրության 70-րդ հոդվածի հիման վրա Ազգային ժողովի կողմից 2018 թվականի մարտի 7-ին ընդունվել է «Ներման մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում է ներման, ներման խնդրագրերը ներկայացնելու և քննարկելու, ինչպես նաև ներման հրամանագրերի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հետ կապված հարաբերությունները:

«Ներման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածում սահմանվել են ներում շնորհելու դեպքերը: Մասնավորապես՝ «Ներման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրվել է, որ ներում չի շնորհվում ՀՀ քրեական օ-

<sup>5</sup> Стѣи Рыбьяков, А.С., Конституционно-правовое регулирование помилования», автореферат дисс. канд. юрид. наук.– Тюмень, 2009. С. 14-15.

<sup>6</sup> Стѣи Ханмагомедов, С. З., Помилование: уголовно-правовой и криминологический аспекты, по материалам Республики Дагестан, автореферат дисс. канд. юрид. наук, 2006, հասանելի էր՝ <http://www.dissercat.com/content/pomilovanie-ugolovno-pravovoi-i-kriminologicheskii-aspekty-po-materialam-respubliki-dagestan>

<sup>7</sup> Стѣи Хан Е.А, Сравнительно-правовой анализ института помилования в романо-германской и англосаксонской правовой системе на примере Российской Федерации и Соединенных Штатов Америки, «Экономика и социум» №12(31), 2016, հասանելի էր՝ [http://iupr.ru/domains\\_data/files/zurnal\\_31/Han%20E.A.%20\(Aktualnye%20voprosy%20politiki%20i%20prava\).pdf](http://iupr.ru/domains_data/files/zurnal_31/Han%20E.A.%20(Aktualnye%20voprosy%20politiki%20i%20prava).pdf)

րենսգրքով նախատեսված՝ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձին: ՀՀ քրեական օրենսգրքում խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները նախատեսված են 33-րդ գլխում հետևյալ հանցատեսակներով, մասնավորապես՝ ագրեսիվ պատերազմը, ագրեսիվ պատերազմի հրապարակային կոչերը, զանգվածային ոչնչացման զենք տարածելը, պատերազմ վարելու արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելը, ահաբեկչական գործողությունն օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչի դեմ, միջազգային ահաբեկչությունը, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ընթացքում, անգործությունը կամ հանցավոր հրաման արձակելը զինված ընդհարման ընթացքում (384-391-րդ հոդվածներ), 392-397<sup>1</sup>-րդ հոդվածներում ևս նախատեսված են հանցատեսակներ, իսկ 309<sup>1</sup>-րդ հոդվածը վերաբերում է խոշտանգում հանցատեսակին: Հարկ է նշել, որ, ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վերը նշված հանցատեսակները հիմնականում ծանր և առանձնապես ծանր բնույթ ունեն, իսկ որոշ հանցատեսակներ միջին ծանրության են:

Հարկ է նշել, որ «Ներման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված կարգավորումը, ըստ որի՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման համար դատապարտված անձին ներում չի շնորհվում դրույթը չի հիմնավորվել Ազգային ժողով ներկայացված «Ներման մասին» ՀՀ օրենքի հիմնավորումների շրջանակներում<sup>8</sup>: Այդ համատեքստում պարզ չէ, թե ինչ չափանիշների հիման վրա են ընտրվել «Ներման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասում նշված հանցատեսակները:

«Ներման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված կարգավորումը, ըստ որի՝ ՀՀ քրեական օրենսգրքով նա-

խատեսված՝ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման պատճառով դատապարտված անձին ներում չի շնորհվում դրույթի իրավաչափությունն անհրաժեշտ է դիտարկել Սահմանադրության 70-րդ հոդվածի, (յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման, ներառյալ՝ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով) 26-րդ հոդվածի 3-րդ մասի (ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք) և 80-րդ հոդվածի (հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է) համատեքստում:

Հարկ է նշել, որ դատապարտյալի ներման խնդրանքի իրավունքը երաշխավորված էր նաև 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածով, ըստ որի՝ յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք: Սահմանադրության 20-րդ հոդվածը չէր պարունակում ներման իրավունքի իրացման մանրամասներն օրենքով կարգավորելու պահանջ: Ուստի՝ դա ինքնաբավ և ամբողջական արտացոլում էր ներման խնդրանքի իրավունքի սահմանադրական բովանդակությունը՝ հստակ սահմանելով, որ յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք: Ընդ որում՝ Սահմանադրության 20-րդ հոդվածը դարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի քննության առարկա: Մասնավորապես՝ 2008 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-733 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը նշում է, որ ներում հայցելու իրավունքի իրացման համար որևէ նախապայման սահմանված չէ, հետևաբար՝ ներում կարող է հայցել յուրաքանչյուր դատապարտյալ, ներումը կարող է շնորհվել յուրաքանչյուր դատապարտյալի՝ կատարված հանցագործության բնույթից, ծանրությունից ու այլ հանգամանքներից անկախ:

Մինչդեռ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 70-րդ հոդվա-

<sup>8</sup> [http://www.parliament.am/draft\\_docs6/K-238\\_himnavorum.pdf](http://www.parliament.am/draft_docs6/K-238_himnavorum.pdf)

ծում ամրագրված «մանրամասները սահմանվում են օրենքով» դրույթը որոշակիորեն բարդացրել է ներման խնդրանքի իրավունքի սահմանադրական բովանդակության բացահայտումը: Այդպիսի կարգավորման պարագայում հարց է առաջանում, թե օրենքով արդյոք կարող են սահմանվել ներման խնդրանք ներկայացնելու կոնկրետ դեպքեր, այսինքն՝ որոշակի դեպքերում սահմանափակել դատապարտյալի ներման խնդրանք ներկայացնելու իրավունքը:

Նշված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե սահմանադիրն ինչ է նկատի ունեցել՝ Սահմանադրության 70-րդ հոդվածում ամրագրելով «մանրամասները սահմանվում են օրենքով» դրույթը: Քանզի այդ դրույթից պարզ չէ, թե դա վերաբերում է Սահմանադրությունում ամրագրված իրավունքի իրացման ընթացակարգի սահմանմանը, թե՛ նաև օրենքում Սահմանադրության կոնկրետ հոդվածում ամրագրված սահմանադրական նորմից ածանցվող նյութական նորմի ամրագրմանը: Ընդ որում՝ նշված խնդիրը Սահմանադրությունում համակարգային բնույթ ունի, ուստի այդ հարցի պատասխանն ստանալու համար անհրաժեշտ է իրականացնել Սահմանադրության վերաբերելի դրույթների համակարգային վերլուծություն: Մասնավորապես՝ Սահմանադրության մի շարք հոդվածներում սահմանադիրն օրենսդրին լիազորել է սահմանելու Սահմանադրությամբ ամրագրված նորմի իրացման «պայմաններ և կարգ» (59-րդ հոդվածի 1-ին մաս, 54-րդ և 62-րդ հոդվածի 1-ին մաս), ինչը, կարծում ենք՝ որ բավարար որոշակի է հասկանալու համար սահմանադրի կողմից օրենսդիր մարմնին վերապահված լիազորությունների կանխատեսելի շրջանակը: Սակայն Սահմանադրության մի շարք հոդվածներում (36-րդ հոդվածի 2-րդ մաս, 37-րդ հոդվածի 3-րդ մաս, 49-րդ հոդված) ամրագրված է անձի կոնկրետ իրավունքը, միևնույն ժամանակ՝ նշվում է, որ մանրամասները սահմանվում են օրենքով:

Սահմանադրությունում ամրագրված «մանրամասները սահմանվում են օրենքով» դրույթի լայն մեկնաբանման դեպքում՝ օրենսդիր մարմնի համար ստեղծվում է լայն հնարավորություն Սահմանադրությունում ամրագրված կոնկրետ իրավունքի իրացման դեպքեր, այդ

թվում՝ սահմանափակող, սահմանելու համար, ինչպես և արվել է «Ներման մասին» ՀՀ օրենքով, որտեղ սահմանվել են ներման խնդրագիր ներկայացնելու սահմանափակման դեպքեր որոշ տեսակի հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ: Այս պարագայում հարց է առաջանում թե արդյոք Սահմանադրությունում ամրագրված՝ «մանրամասները սահմանվում են օրենքով» դրույթը բավարար որոշակի ուրվագծում է օրենսդրին վերապահված լիազորությունների շրջանակը և այդպիսով համապատասխանում է սահմանադրական կարգի հիմունք՝ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասին, ըստ որի՝ լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին: Ընդհանուր առմամբ՝ համարում ենք, որ Սահմանադրության նորմերը պետք է հնարավորինս ինքնաբավ և որոշակի լինեն, իսկ լիազորող նորմերը՝ բավարար որոշակի, մինչդեռ Սահմանադրությունում ամրագրված «մանրամասները սահմանվում են օրենքով» դրույթը լայն և անորոշ ձևակերպում է և ստեղծում է Սահմանադրության 80-րդ հոդվածի (հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է) խախտման լայն հնարավորություն: Մյուս կողմից՝ «մանրամասները սահմանվում են օրենքով» դրույթի առավել նեղ մեկնաբանման դեպքում ստացվում է, որ օրենքով պետք է բացառապես սահմանել Սահմանադրությունում ամրագրված՝ իրավունքի իրացման ընթացակարգային մանրամասները, այսպիսի մեկնաբանման դեպքում ակնհայտ է դառնում, որ «Ներման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը խնդրահարույց է դառնում Սահմանադրության 70-րդ հոդվածի համատեքստում:

Անհրաժեշտ է նշել, որ քննարկվող խնդրին վերաբերող միջազգային իրավական ակտերի («Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 6-րդ հոդված, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 40-րդ հոդված, «Քրեական գործերով վարույթների փոխանցման մասին» Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդված) ուսումնասիրությունից բխում է, որ միջազգային իրա-

վական ակտերում նախատեսված չեն այնպիսի դրույթներ, որոնք կսահմանափակեն որոշակի տեսակի հանցագործություններ կատարած անձանց ներում շնորհելը կամ ներում շնորհելու խնդրանքով դիմելու իրավունքը: Դեռ ավելին՝ «1966 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածն ամրագրում է, որ համաներումը, ներումը կամ դատավճռի մեղմացումը կարող են շնորհվել բոլոր դեպքերում:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ կատարված վերլուծությունից բխում է, որ, ի տարբերություն 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության՝ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ

նախատեսված կարգավորումը դատապարտյալի ներման խնդրանքի իրավունքի մասով բավարար որոշակի չէ՝ հստակ պատկերացնելու համար դատապարտյալների ներման խնդրանքի իրավունքի սահմանադրական բովանդակությունը: Միևնույն ժամանակ՝ համարում ենք, որ «Ներման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսված կարգավորումը, ըստ որի՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործության կամ խոշտանգման պատճառով դատապարտված անձին ներում չի շնորհվում դրույթի իրավաչափությունը վիճարկելի է Սահմանադրության 26-րդ հոդվածի 3-րդ մասի, 70-րդ և 80-րդ հոդվածների համատեքստում:



**ЛИЛИТ ХАЧАТРЯН**

Российско-Армянский университет, Институт права и политики,  
преподаватель в Российско-Армянском университете  
на кафедре гражданского и гражданско-процессуального права

## ПРИМЕНЕНИЕ ПРИНЦИПА НАИБОЛЕЕ ТЕСНОЙ СВЯЗИ В МАТЕРИАЛЬНОМ И ПРОЦЕССУАЛЬНОМ ПРАВЕ

Выбор применимого права по трансграничным гражданским делам является одним из центральных вопросов коллизионного права. Данная проблема возникает тогда, когда участники договорных правоотношений не выбрали применимую систему права, в связи с чем суды сталкиваются с одной из глобальных и сложнейших проблем международного частного права – проблемой выбора права. В настоящее время существует большое количество коллизионных норм, которые с помощью привязок указывают на ту или иную правовую систему, применимую в правоотношениях. Большинство из них стало формироваться с момента возникновения международного частного права (далее – МЧП).<sup>1</sup> Такие формулы прикрепления, как личный закон физического лица (*lex personalis*); личный закон юридического лица (*lex societatis*); закон места нахождения вещи (*lex rei sitae*); закон, избранный сторонами правоотношения (*lex voluntatis*); закон страны продавца (*lex venditoris*); закон места совершения акта (*lex loci actus*) в форме закона места заключения сделки (*lex loci contractus*), закона места исполнения обязательства (*lex loci solutionis*), закона места совершения брака (*lex loci celebrationis*) и закона места причинения вреда (*lex loci delicti commissi*); закон места работы (*lex loci laboris*); закон флага (*lex flagi*); закон страны суда (*lex fori*) и закон, регулирующий существо отношений (*lex causae*), получили широкое распространение в национальном и международном законодательстве (например, Регламент Рим I, Регламент Рим II) и по праву стали именоваться классическими.<sup>2</sup>

Պարզ է, որ Մարքսը ճիշտ էր այն հարցում, որ քաղաքացիական հասարակության անդամի բարոյականությունը հեռու է հանրապետական բարեգործների ոգուց: Բայց այս ոգով, իրավական սուբյեկտի հայեցակարգի համաձայն՝ պետք է կլանվեն քաղաքական ինստիտուտները և ընթացակարգերը, որոնց միջոցով անհատը հայտարարում է իր արժանապատվության, քաղաքացիական հասարակության մասին և կրում է նրա առջև պատասխանատվություն, եթե խախտի հասարակական պայմանագրի պայմանները: Իրավունքի մեղադրվող սուբյեկտի և նրան մեղադրող ատյանի միջև պետք է դրվի պաշտպանիչ էկրան՝ միջնորդ, որը բաց է թողնում դիրքորոշումների և կողմերի հաշտության ընթացակարգերը: Իրավունքի սուբյեկտի հայեցակարգը, որը դիտարկում է նրան որպես իրավական սուբյեկտ, ունի երկակի բնույթ և հաղթահարում է ֆորմալ-իրավաբանական և թերապակտիկ հիմնադրույթները: Դա թույլ է տալիս սահմանել հեռավորություն սուբյեկտի ու հասարակության միջև, ինչպես նաև սուբյեկտի ու իրավունքի նորմի միջև նրա արժանապատվության ճանաչման և իրավական իրավիճակի առանձնահատկությունների համաձայնեցման հեռանկարում: Այս հայեցակարգը շարունակում է սուբյեկտի ենթակայությունը՝ այն մասին գիտելիքին, որը հավակնություն ունի զբաղեցնելու բացարձակ ճշմարտության տեղը, որը դատարկվել է սեկուլյարիզացված դեմոկրատական հասարակությունում: Հոչակելով անձի արժանիքները՝ իրավունքի սուբյեկտի ժամանակակից հայեցակարգը ձգտում է դրանք դարձնել թափանցիկ օրենսդրական կամ դատական գործընթացի թատերաբեմում, իսկ նրա պահանջները ներկայացնել որպես ճանաչման համար պայքար:

<sup>10</sup> Տե՛ս Melkevik B. Le'gitimite' et droits de rhomme // J.Fernand & H.Petit (dir.), Enjeux et perspectives des droits de l'homme.L'Odyssee des Droits de l'homme, tome III, Paris, 2003, էջ 219:

<sup>11</sup> Տե՛ս Garapon A., Pour une responsabilite civique // Esprit N 251, Mars-avril 1999, էջ 237-249:

**ՍԱՐԳԻՍ ԱՐՄԵՆԱԿՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ՀՈՈՄԵԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ՀԵՏՂԱՍԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳԻՐՔԱՆ ԿՈՂՄԻՏԻԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ**

Արդեն հռոմեական իրավունքի պատմական զարգացման դասական շրջանում առաջացավ իրավունքի աղբյուրների ընդհանրացման և ունիֆիկացիայի անհրաժեշտություն, որը թելադրվում էր ինչպես ապրանքատնտեսության տնտեսության զարգացմամբ, այնպես էլ հասարակական-քաղաքական անցուղարձերով:

Իրավական նորմերի համակարգման անհրաժեշտությունն առավել հրատապ դարձավ միապետության ժամանակաշրջանում, քանի որ միապետական կառավարման ձևը պահանջում էր նաև միասնական իրավաստեղծ և իրավակիրառ քաղաքականություն վարել: Հռոմեական իրավագիտության զարգացումը մեր թվարկության առաջին դարերում խթանեց նաև իրավական նորմերի մասնավոր համակարգման գործընթացը և առանձին իրավաբանական աշխատությունների երևան գալը: Այսպես՝ 2-3-րդ դարերում մասնավոր իրավաբանի կողմից կազմվեց կայսր Մարկոս Ավրելիոսի որոշումների համակարգված ժողովածուն՝ 20 գրքով: Նույն ժամանակաշրջանում հրապարակվեց նաև պրետորական էդիկտների պաշտոնական ժողովածուն:

IV դարի սկզբներին կազմվեց Գրիգորիանոսի օրենսգիրքը (Codex Gregorian us), որտեղ ներառվեցին 196-295 թվականների կայսերական սահմանադրությունները: Այդ օրենսգրքի բնօրինակը մեզ չի հասել և հայտնի է այլ իրավական հուշարձաններից: Օրենսգիրքը բաղկացած է 14 գրքից, որոնք բաժանված են տիտղոսների: Գրիգորիանոսի օրենսգիրքը պաշտոնական ճանաչում էր ստացել և գործել էր մինչև Հուստինիանոսի ժողովածուի՝ ուժի մեջ մտնելը:

Երկրորդ օրենսգիրքը, որը լրացնում էր առաջինը, կոչվում էր Հերմոգենիանոսի օրենսգիրք (Codex Hermogenianus): Օրենսգիրքն ընդգրկում է 191-365 թվականների մոտ 120 կայսերական

սահմանադրություններ: Այդ երկու օրենսգիրքը մասնավոր կողիֆիկացիաներ էին, որոնք ստացել էին պաշտոնական ճանաչում:

Առաջին պաշտոնական կողիֆիկացիան կատարվեց կայսր Թեոդոսի կողմից (Codex Theodosianus), 428թ.: Այդ օրենսգիրքը բաղկացած է 16 գրքից: Օրենսգրքում առաջին անգամ տեղ գտան միայն գործող իրավական ակտերը:

Հռոմեական իրավունքի համակարգման գործընթացն իր գագաթնակետին հասավ Հռոմի Արևելյան կայսրության Բյուզանդիայի կայսր Հուստինիանոսի օրոք (527-565 թթ.): Միապետի անմիջական մասնակցությամբ կատարվող քաղաքական և իրավական բարեփոխումներն իրականացան իրավունքի՝ մինչ այդ իր նմանը չունեցող ծավալուն համակարգման շնորհիվ, որն արտահայտում էր Արևելյան հռոմեական քաղաքակրթության և իրավագիտության բարձր մակարդակը՝ հռոմեական իրավական մշակույթի սահմաններում: Համակարգման աշխատանքներն իրականացնելու համար 528 թվականին կազմվեց պետական հանձնաժողով՝ 10 հոգուց բաղկացած, որը գլխավորում էր հայտնի իրավաբան Տրիբոնիանոսը: 529 թվականի ապրիլին հանձնաժողովը հրապարակեց կայսերական սահմանադրությունների ժողովածուն՝ 12 գրքից: Հրապարակումից հետո մինչ այդ եղած ժողովածուները և օրենսգրքերը կորցրին իրենց իրավաբանական ուժը: Այդ նախնական աշխատանքներից հետո 530 թվականի դեկտեմբերին կազմվեց մի նոր հանձնաժողով՝ 16 հոգուց բաղկացած, որը դարձյալ ղեկավարում էր Տրիբոնիանոսը: Հանձնաժողովը կատարեց հսկայական աշխատանք՝ ուսումնասիրելով և ծաղկաքաղ անելով հռոմայեցի իրավաբանների ավելի քան 1500 աշխատություն, և 533 թվականի դեկտեմբերին հրապարակեց Դիգեստները (Digesta)

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 110 2019

<sup>1</sup> Համակարգման մասին մանրամասն տե՛ս Римское частное право. Под ред. проф. И. Б. Новицкого и проф. И. С. Петерского. – М., «Юрист», 1996, էջ 40-44. Перетерский И. С., Дигесты Юстиниана. Очерки по истории составления и общая характеристика. М., 1956:

կամ Պանդեկտները (Pandectae): Իսկ մինչ այդ՝ 533 թվականի նոյեմբերին, հրապարակվել էր «Ինստիտուցիաները», որը կազմվել էր իրավաբան Գայուսի «Ինստիտուցիաների» օրինակով:

Խոշոր կողիֆիկացիոն աշխատանքը զուգորդվում էր հասարակական-քաղաքական պայմաններին համապատասխան՝ միապետական իշխանության նոր իրավաքաղաքական հայեցակարգի մշակմամբ, որի շնորհիվ 534 թվականին հրապարակվեց կայսերական սահմանադրությունների վերամշակված օրենսգիրքը (Codex):

Այսպիսով՝ իրավունքի պատմության մեջ մեզ հայտնի առաջին խոշոր կողիֆիկացիոն աշխատանքը, որը տևեց 528 թվականից մինչև 534 թվականը, հաջողությամբ պսակվեց:

Օրենքների այդ ժողովածուն XII դարում ստացավ Corpus juris civilis անվանումը: Ժողովածուն ուժի մեջ մտնելուց հետո (534թ.) լրացվեց Հուստինիանոս կայսեր նովելներով (Novellae – Նոր օրենքներ):

Corpus juris civilis-ը բաղկացած է չորս միմյանց հաջորդող մասերից<sup>2</sup>: Առաջին մասը՝ «Ինստիտուցիաները» (Institutiones), հռոմեական իրավունքի հիմունքներն են՝ իրավակիրառման և մասնավոր իրավունքի ընդհանուր սկզբունքները: Բաղկացած է 4 գրքից և 987 տիտղոսից<sup>3</sup>: Գրքերի հիմնական բովանդակությունն է՝ 1. ընդհանուր ուսմունք իրավունքի և իրավունքի սուբյեկտների մասին, 2. գույքային իրավունքի ընդհանուր ինստիտուտները, 3. պարտավորական իրավունք, 4. ուսմունք հայցերի և դատարանում իրավակիրառման սկզբունքների մասին: Այդ ժամանակվանից իրավական նորմերի նման համակարգումը կոչվում է ինստիտուցիոնալ:

Ժողովածուի երկրորդ և առավել ընդգրկուն մասը՝ Դիգեստները կամ Պանդեկտները (Digesta, Pandectae), բաղկացած է 50 գրքից և 432 տիտղոսից<sup>4</sup>: Այստեղ օգտագործված են 39 հեղինակի մոտ 1500 աշխատություն:

Ամբողջ նյութը պայմանականորեն բաժանվում է 7 մասի: Առաջին մասում (1-4 գրքեր) խոսվում է իրավունքի և իրավունքի սուբյեկտի ընդհանուր հարցերի մասին, երկրորդում (5-11 գրքեր)՝ սեփականության իրավունքի պաշտպանության

մասին, երրորդում (12-19 գրքեր)՝ երկկողմանի պարտավորությունների մասին, չորրորդում (20-27 գրքեր)՝ պարտավորությունների կատարման ապահովման, ընտանեկան և խնամակալության իրավունքների իրացման հետ կապված պարտավորությունների մասին, հինգերորդում (28-36 գրքեր)՝ կտակի մասին, վեցերորդում (37-43 գրքեր)՝ դատարանի ընդդատությանը ենթակա տարբեր իրավական հակասությունների մասին, յոթերորդում (44-49 գրքեր) քրեական և հանրային իրավունքի հետ կապված հարցերի պարզաբանումներն են, իսկ վերջին՝ 50-րդ գիրքը նվիրված էր հին իրավաբանական տերմինների, դարձվածքների, արտահայտությունների, ասացվածքների մեկնությանը:

Ժողովածուի երրորդ մասը՝ Հուստինիանոսի օրենսգիրքը (Codex) համակարգել էր 4600 կայսերական սահմանադրություն՝ 117 թվականից սկսած: Բաղկացած է 12 գրքից և 765 տիտղոսից:

Առաջին գիրքը պարունակում է եկեղեցական իրավունքին, իրավունքի աղբյուրներին և պետական ծառայողների պարտականությանը վերաբերող հարցերը, 2-8 գրքերում ամփոփված են կայսեր սահմանադրությունները քաղաքացիական իրավունքի և դատավարության մասին, 9-րդ գիրքը նվիրված է քրեական իրավունքին, 10-12 գրքերը վերաբերում են պետական կառավարմանը, ֆինանսներին և այլն:

Համակարգման ընթացքում պահպանվել են սահմանադրությունների հրապարակման տարեթվերը և կայսերական անունները:

Եվ, վերջապես՝ ժողովածուի չորրորդ մասը կոչվում էր Նովելներ (Novellae)՝ բաղկացած 168 նովելից (նոր օրենքներ), որոնք լրացնում և փոփոխում էին «Օրենսգրքում» առկա դրույթները:

Ժողովածուն, ամբողջությամբ վերցրած, խոշոր նշանակություն ունեցավ Բյուզանդական կայսրության հասարակական-քաղաքական կյանքում, ինչպես նաև էական դեր խաղաց այլ երկրների ազգային օրենսդրության և իրավական մշակույթի ձևավորման ու զարգացման գործում:

<sup>2</sup> Հետազոտողներից ոմանք նովելները չեն համարում ժողովածուի բաղկացուցիչ մաս (օրինակ՝ տեն Омельченко О. Д., Римское право. Учебник. М., 2000, էջ 34 և այլն):

<sup>3</sup> Տե՛ս Памятники римского права. Законы XII таблиц. Институции Гая. Дигесты Юстиниана. М., «Зеркало», 1997, էջ 16-151:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 152-598:

**ՆԵԼԼԻ ԱՇՐԱՖՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ

**ՏՈՒԺՈՂԻ ՀԵՏ ՀԱՇՏՎԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Նշված հոդվածը նվիրված է տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի պատմական զարգացմանը: Անկասկած՝ քրեական իրավունքը չի կարող հիմնվել միայն պատժողական քաղաքականության վրա: Այդ է վկայում քրեական իրավունքում քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի նախատեսումը: Քրեական իրավունքն իր առջև դրված խնդիրների իրականացումը տեսնում է ոչ միայն պատժի, այլև պատժից ազատելու հնարավորության մեջ: Այս հանգամանքը ենթադրում է, որ քրեական օրենսդրության մեջ նշված ինստիտուտը պետք է ստանա այնպիսի իրավական կարգավորում, որը կապահովի դրա արդյունավետ կիրառությունը: Տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի պատմական զարգացման ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր հանելու այն դրականը և բացասականը, որն առկա է եղել դրա իրավական կարգավորման մեջ:

**Բանալի բառեր.** քրեական պատասխանատվություն, պատիժ, տուժող, ներում, հաշտեցում, օրենսդրություն:

**НЕЛЛИ АШРАФЯН**

Старший прокурор управления по делам о преступлениях коррупционной и экономической направленности Генеральной прокуратуры РА

**ИСТАРИЧЕСКОЕ РАЗВИТИЕ ИНСТИТУТА ОСВОБОЖДЕНИЯ ОТ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ В СВЯЗИ С ПРИМИРЕНИЕМ С ПОТЕРПЕВШИМ В УГОЛОВНОМ ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ АРМЕНИИ**

Данная статья посвящена историческому развитию института освобождения от уголовной ответственности в связи с примирением с потерпевшим. Без сомнения, уголовное право не может основываться только на карательной политике. Об этом свидетельствует предусмотрение института освобождения от уголовной ответственности в уголовном праве. Уголовное право видит в выполнении своих задач не только наказание, но и возможность освобождения от наказания. Это обстоятельство предполагает, что институт в уголовном законодательстве, должен получить такое правовое регулирование, которое обеспечит его эффективное применение. Изучение исторического развития института освобождения от уголовной ответственности на основе примирения с потерпевшим дает возможность выявить положительные и отрицательные стороны, которые существовали в его правовом урегулировании.

**Ключевые слова:** уголовная ответственность, наказание, потерпевший, помилование, примирение, законодательство.

**NELLI ASHRAFYAN**

Senior Prosecutor of the Department for Combating Corruption and Economic Crimes of the Prosecutor General's Office of the Republic of Armenia

**HISTORICAL DEVELOPMENT OF THE INSTITUTION OF RELEASE FROM CRIMINAL LIABILITY IN CONNECTION OF RECONCILIATION WITH THE VICTIM IN THE CRIMINAL LEGISLATION OF ARMENIA**

This article is devoted to the historical development of the institution of release from criminal liability in connection of reconciliation with the victim. No doubt that criminal law cannot be based only on punitive policies. This is evidenced by the provision of the institution of release from criminal responsibility in criminal law. Criminal law sees the fulfillment of the tasks set for itself not only in the application of punishment, but also in the possibility of release from punishment. This circumstance assumes that this institution in the criminal law should receive a legal regulation to ensure its effective application.

The study of the historical development of the institution of release from criminal liability in connection of reconciliation with the victim gives an opportunity to reveal the positive and negative sides that existed in its legal settlement.

**Keywords:** criminal liability, punishment, victim, forgiveness, reconciliation, legislation.

\* \* \*

**ՀՈՒՓՍԻՄԵ ԽԱՉԱՏՐՅԱԼ**

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության մայոր, Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՈՐՈՇ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Հոդվածում կատարվել է անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման համար կարևոր նշանակություն ունեցող պատճառների և պայմանների ուսումնասիրություն:

Ըստ հեղինակի՝ անչափահասի անձի ձևավորումը տեղի է ունենում կենսագործունեության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ընտանեկան հարաբերությունները, կրթությունը, աշխատանքը և ժամանցը, որոնք էլ ազդում են աճող սերնդի հոգևոր, ֆիզիկական և ինտելեկտուալ զարգացման վրա: Հետևաբար՝ նշված ոլորտներում էլ պետք է փնտրել անչափահասների շրջանում տեղի ունեցող երևույթների վրա բացասաբար ազդող գործոնները:

Հոդվածում ներկայացված են անչափահասների սոցիալականացման գործընթացի վրա բացասաբար ազդող այն հիմնական գործոնները, որոնք էլ պայմանավորում են անչափահասների խմբային հանցավորությունը:

**Բանալի բառեր.** անչափահաս, անչափահասների խմբային հանցավորություն, անչափահասների սոցիալականացում, ընտանիքի բացասական ազդեցություն, հանցավորությանը նպաստող գործոն:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 110 2019

**РИПСИМЕ ХАЧАТРЯН**

Старший преподаватель кафедры  
Уголовного права и криминологии  
факультета правоведения Академии  
Образовательного комплекса Полиции РА,  
майор полиции,  
соискатель кафедры уголовного права ЕГУ

### **АНАЛИЗ НЕКОТОРЫХ ФАКТОРОВ, СПОСОБСТВУЮЩИХ ГРУППОВОЙ ПРЕСТУПНОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ**

В статье рассматриваются причины и условия, имеющие важное значение для предупреждения групповой преступности среди несовершеннолетних.

По мнению автора, формирование личности несовершеннолетнего происходит в таких сферах жизнедеятельности, как семейные отношения, образование, работа и досуг, которые оказывают влияние на духовное, физическое и интеллектуальное развитие подрастающего поколения. Следовательно, в указанных сферах и следует искать факторы, оказывающие негативное влияние на процессы, происходящие с несовершеннолетними. В статье представлены основные факторы, отрицательно влияющие на процесс социализации несовершеннолетних и обуславливающие групповую преступность несовершеннолетних.

**Ключевые слова:** несовершеннолетний, групповая преступность несовершеннолетних, отрицательное влияние семьи, факторы, способствующие преступности.

**HRIPSIME KHACHATRYAN**

Senior lecturer at Police Academy of  
Police Educational Complex of RA,  
Department of Law, Chair of Criminal  
Law and Criminology, Police Major

### **ANALYSIS OF SOME FACTORS FOSTERING JUVENILES' GROUP CRIMINALITY**

The study of reasons and conditions having crucial importance for prevention of juveniles' group criminality has been carried out in the article.

According to the author, the juvenile's personality is being formed in such spheres of social activity, as domestic and working relationships, education, leisure, which should affect on juvenile's mental, physical and intellectual development. Therefore, it is necessary to seek the factors, negatively affecting on juveniles' behavior, in mentioned fields.

The main factors negatively affecting on juveniles' socialization have been presented in the article, which also determine the juveniles' group criminality.

**Keywords:** juvenile, juveniles' group criminality, juveniles' socialization, negative impact of family, factor fostering criminality.

**ՀՈՎՍԵՓ ՔՈՉԱՐՅԱՆ**

Հայ-ռուսական պետական համալսարանի  
Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի  
մագիստրանտ

**ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ 205-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ ՆՈՐ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

Հետազոտությունը նվիրված է ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի վերլուծությանը: Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ նշված հոդվածի դիսպոզիցիան ունի շարադրման այնպիսի թերություններ, որոնք դժվարացնում են դրա գործնական կիրառումը: Վերլուծության արդյունքով հեղինակն առաջարկում է խմբագրել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածը, ապա ներկայացնում դիսպոզիցիայի իր տարբերակը:

**Բանալի բառեր.** հարկ, տուրք, պարտադիր վճարներ, հարկերից խուսափելը:

**ОВСЕП КОЧАРЯН**

Российско-Армянский государственный университет,  
Институт права и политики,  
магистрант

**СТАТЬЯ 205 УГОЛОВНОГО КОДЕКСА РА В СВЕТЕ НОВЫХ ЗАКОНОДАТЕЛЬНЫХ  
ИЗМЕНЕНИЙ**

Исследование посвящено анализу статьи 205 Уголовного кодекса РА. Автор приходит к выводу, что диспозиция вышеупомянутой статьи имеет такие недостатки, которые не позволяют правильно применить ее на практике. В заключение автор предлагает изменить статью 205 Уголовного кодекса РА и представляет свой вариант диспозиции статьи.

**Ключевые слова:** налог, пошлины, обязательные платежи, уклонение от уплаты налогов.

**HOVSEP KOCHARYAN**

Russian-Armenian state university,  
Institute of Law and Politics,  
Magister

**THE ARTICLE 205 OF THE RA PENAL CODE IN THE LIGHT OF NEW LEGISLATIVE CHANGES**

The study focuses on the analysis of the article 205 of RA Penal Code. The author comes to the conclusion that the disposition of the above-mentioned article has such disadvantages that do not allow the right practical application of it. As a conclusion the author proposes to change the article 205 of RA Penal Code and presents his version of the article disposition.

**Keywords:** tax, duties, obligatory payments, tax evasion.

**ՀԱՅԿ ԱՎԵՏՅԱՆ**

Հայաստանի Ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող

**ՕՐԵՆՔԻ ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺԻ ԱՐԳԵԼՔԸ “NULLUM CRIMEN SINE LEGE”  
ՍԿՋՐՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Սույն հոդվածում նախ, որպես պատմական ակնարկ, քննարկվում է միայն օրենքի հիման վրա հանցանքի և պատժի նախատեսման սկզբունքը, դրա օրենսդրական ամրագրումները: Այնուհետև անդրադարձ է կատարվում այդ սկզբունքի մասնավոր դրսևորմանը՝ քրեական իրավունքի անկյունաքարային սկզբունքներից մեկին՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ ուժի արգելքին: Նկարագրվում են սկզբունքի դերն ու նշանակությունը, նաև տարբեր երկրների (Հայաստան, Միացյալ Թագավորություն, Գերմանիա) դատարանների և մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումներն այդ սկզբունքի առնչությամբ: Հոդվածում ընդգծվում է դատարանների կողմից նորմերի ճիշտ մեկնաբանման ու կիրառման կարևորությունը, և վերջում հեղինակը հանգում է հետևության, որ, նորմերի ճիշտ մեկնաբանման և կիրառման շնորհիվ՝ իրավունքի սկզբունքները, այդ թվում՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքի հետադարձ ուժի արգելքի սկզբունքը, որոշակի բացառիկ դեպքերում ենթակա են սահմանափակման, եթե դա բխում է իրավունքի գերակայության սկզբունքից և ծառայում է արդարությանը:

**Բանալի բառեր.** օրինականություն, հետադարձ ուժ, ՄԻԵԴ:

**АЙК АВЕТЯН**

Студент магистратуры первого курса юридического факультета Американского Университета Армении.

**ЗАПРЕТ ОБРАТНОЙ СИЛЫ ЗАКОНА В КОНТЕКСТЕ ПРИНЦИПА  
“NULLUM CRIMEN SINE LEGE”**

В данной статье, во-первых, как исторический очерк, обсуждаются принцип предосторожности преступления и наказания только по закону и его законодательные установления. Затем рассматривается частное явление этого принципа, одно из основ уголовного права – запрет обратной силы закона, ухудшающего положение лица. Описывается роль и значение принципа, также судебные решения разных стран (Армения, Соединённое Королевство, Германия) и Европейского Суда по Правам Человека. В статье подчёркивается важность правильного интерпретирования и применения закона судом. В конце автор приходит к выводу, что, в результате правильного интерпретирования и применения закона принципы права, в том числе – запрет обратной силы закона, могут ограничиваться, если это служит правосудию и исходит из верховенства права.

**Ключевые слова:** законность, обратная сила, ЕСПЧ.

**HAYK AVETYAN**

First year student of Law Faculty (LL.M) of American University of Armenia

**PROHIBITION OF RETROACTIVITY OF LAW IN THE CONTEXT OF THE  
“NULLUM CRIMEN SINE LEGE” PRINCIPLE**

This article, first of all, as a historical overview, discusses the principle of “no crime and no punishment without law,” and also its legislative provisions. Then it discusses the particular expression of that principle; one of the cornerstones of criminal law - prohibition of retrospective application of deteriorating law of a person’s legal status. The author prescribes the meaning and the role of the principle and judicial decisions of diverse states (Armenia, UK, Germany) and the European Court of



Human Rights. The article also mentions the obligation of courts to interpret and apply laws in a right way, and eventually, the author concludes, that as a result of right interpretation and application of laws, legal principles can be restricted if it serves to justice and derives from the Rule of Law.

**Keywords:** legality, retroactivity, ECHR.

\* \* \*

**ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ**

Հայ-ռուսական համալսարանի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ,  
 ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

**ԼՈՒՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
 (ՀԱՄԱՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Լռությունն իրավաբանական փաստ է, որը մի դեպքում անմիջապես է առաջացնում իրավական հետևանքներ, մեկ այլ դեպքում՝ իրավական հետևանքներ է առաջացնում միջնորդավորված՝ ենթադրյալ կամ ֆիկտիվ կամահայտնության (համաձայնության կամ անհամաձայնության) միջոցով:

Լռությունը՝ որպես առեղծվածային երևույթ, իրավական կյանքում ավելի շատ ստեղծում է անորոշություն, քան որոշակիություն, ավելի շատ հարցեր է առաջացնում, քան պատասխաններ է տալիս: Ընդհանուր կանոնն այն է, որ լռությունն ինքնին որևէ կամք չի արտահայտում, ո՛չ «հա» է, ո՛չ «չէ»: Բացառիկ դեպքերում լռությունը կարող է կամք արտահայտել՝ 1) պոզիտիվ իրավունքով նախատեսված դեպքերում, 2) գործարքով նախատեսված դեպքերում, կամ 3) կոնկրետ իրավիճակի առանձնահատկություններից ելնելով, երբ՝ ա) իրավունքը կամ գործարքը լռում է լռության մասին, և բ) կոնկրետ իրավիճակում լռությունը ենթադրաբար պետք է մեկնաբանել որպես համաձայնություն կամ անհամաձայնություն: Հեղինակը կարծում է, թե ժամանակակից կյանքում, որտեղ իրավական որոշակիությունը սահմանադրական արժեք է և օրեցօր ընդլայնում է իր գործողության ոլորտը, լռությունից բխող կամքի բովանդակությունը պետք է նախապես որոշել պոզիտիվ իրավունքով կամ գործարքով:

*Լռելայն* համաձայնությունն անհրաժեշտ է տարբերակել *ուղղակի (պոզիտիվ)* համաձայնությունից: *Ուղղակի համաձայնություն ներկայացնելու ձևաչափով կամքի արտահայտումն* ունի մեկ ճանապարհ, այն է՝ ուղղակի կամահայտնությունը (գրավոր, բանավոր կամ կոնկրետ գործողությամբ): *Ուղղակի (պոզիտիվ) համաձայնության բացակայությունը* թեև լռություն է, սակայն լռելայն համաձայնություն չէ: Համաձայնության ակտի բացակայությունն անհամաձայնություն է:

*Առարկություն (անհամաձայնություն) չներկայացնելու ձևաչափով կամքի արտահայտումն* ունի երկու եղանակ՝ ուղղակի և լռելայն կամահայտնություն: Առաջին դեպքում՝ անձը, օրինակ՝ գրավոր հայտնում է առարկություն չունենալու մասին, ինչից ուղղակիորեն տեսանելի է նրա կամքը, երկրորդ դեպքում՝ *իրավիճակի մասին տեղեկացված անձը* լռում է, այսինքն՝ որևէ եղանակով առարկություն չի ներկայացնում, ինչի դեպքում լռությունը դիտվում է որպես պայմանական համաձայնություն:

Իրավական նորմը ձևակերպելիս, եթե օրենսդիրը տրամաբանական վերլուծությամբ եզրակացնում է, որ լռության պարագայում բարձր է անձի համաձայն լինելու հավանականությունը, հակառակ դեպքում նա առարկություն կներկայացնե, ապա գործ ունենք իրավական կանխավարկածի հետ: Իրավական նորմը ձևակերպելիս, եթե օրենսդիրը լռությունը դիտում է որպես կամքի *արտահայտություն (կամահայտնություն)*, ապա գործ ունենք իրավական ֆիկցիայի հետ, քանի որ լռության պայմաններում համաձայնության կամ անհամաձայնության մասին կամահայտնություն օբյեկտիվ աշխարհում գոյություն չունի:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 110 2019

**Բանալի բառեր.** լռություն, իրավական անորոշություն, իրավական ֆիկցիա, իրավական սուբստիտուցիա, իրավական կանխավարկած, լռելյայն համաձայնություն, ուղղակի համաձայնություն, ֆիկտիվ վարչական ակտ, ֆիկտիվ պաշտոնական պարզաբանում:

#### АРТУР ГАМБАРЯН

Заведующий кафедры Теории и истории государства и права Российско-Армянского университета, доктор юридических наук, профессор

### МОЛЧАНИЕ И ПРАВОВЫЕ УСЛОВНОСТИ (ОБЩЕТЕОРЕТИЧЕСКИЙ АНАЛИЗ)

Молчание является юридическим фактом и в одном случае вызывает правовые последствия, а в другом случае вызывает правовые последствия опосредованно – при посредстве волеизъявления (согласия либо несогласия).

Молчание, как таинственное явление, в правовой сфере скорее создает неопределенность, чем определенность, оно больше вызывает вопросы, чем ответы. Общее правило такое, что молчание само по себе не выражает какой-либо воли, оно не является ни “да”, ни “нет”. В исключительных случаях молчание может выражать волю: 1) в случаях, предусмотренных позитивным правом; 2) в случаях, предусмотренных сделкой; 3) исходя из особенностей конкретной ситуации, когда: а) право либо сделка молчит о молчании; и б) в конкретном случае молчание нужно толковать как согласие либо несогласие. Автор считает, что в современном мире, где правовая определенность является конституционной ценностью, день ото дня увеличивает сферу своего действия, содержание воли, исходящей из молчания, надо решать позитивным правом либо сделкой.

Молчаливое согласие необходимо отделять от прямого (позитивного) согласия. Выражение воли в формате прямого согласия, а именно – прямого волеизъявления (письменного, устного либо конклюдентного действия). Отсутствие прямого (позитивного) согласия хотя и является молчанием, однако не является молчаливым согласием. Отсутствие акта согласия является несогласием.

Выражение воли в формате непредставления возражений (несогласия) имеет два способа – прямое и молчаливое волеизъявление. В первом случае лицо, например, письменно, заявляет о том, что не имеет возражений, из чего непосредственно видима его воля, во втором случае – лицо, информированное о ситуации, молчит, следовательно, каким-либо способом не представляет возражений, в случае чего молчание воспринимается как условное согласие.

Если законодатель при формулировании правовой нормы, в результате логического анализа, приходит к выводу, что в случае молчания высока вероятность того, что лицо может быть согласен, в противном случае оно представило бы возражения, то мы имеем дело с правовой презумпцией. Если законодатель при формулировке правовой нормы, молчание воспринимает как выражение воли (волеизъявление), то мы имеем дело с правовой фикцией, поскольку в объективном мире, в условиях молчания, волеизъявления о согласии либо несогласии нет.

**Ключевые слова:** молчание, правовая определенность, правовая фикция, правовая субстанция, правовая презумпция, молчаливое согласие, прямое согласие, фиктивный административный акт, фиктивное официальное разъяснение.

#### ARTUR GHAMBARYAN

Head of the Department of Theory and History of State and Law, Russian-Armenian University, Doctor of Law, Professor

### SILENCE AND LEGAL CONVENTIONS (THEORETICAL ANALYSIS)

Silence is a legal fact, which in one case causes legal consequences, and in the other case, causes legal consequences indirectly - through the expression of the will (consent or disagreement).

Silence, as a mysterious phenomenon, in the legal sphere creates uncertainty rather than

certainty, it causes questions rather than answers. The general rule is that silence by itself does not express any will, it is neither “yes” nor “not”. In exceptional cases, silence may express the will: 1) in cases provided for by positive law; 2) in the cases stipulated by the transaction; 3) on the basis of the particular situation when: a) the right or the transaction is silent about silence; and b) in a particular case, silence should be interpreted as consent or disagreement. The author believes that in the modern world, where legal certainty is a constitutional value, day by day increases the scope of its activities, the content of the will resulting from silence, must be solved by a positive law or a deal.

Tacit consent must be separated from direct (positive) consent. The expression of will in the format of direct consent, namely, direct expression of will (written, oral, or implicit action). The absence of direct (positive) consent, although it is silence, is not a tacit agreement. The absence of an act of consent is a disagreement.

The expression of will in the format of non-submission of objections (disagreement) has two methods - direct and tacit expression of will. In the first case, the person, for example, in writing, declares that he has no objections, from which his will is directly visible, in the second case, the person informed about the situation is silent, therefore, does not represent objections in any way, in which case silence is perceived as conditional consent.

When formulating a legal norm, if the legislator, as a result of a logical analysis, comes to the conclusion that if there is silence, there is a high probability that a person may agree, otherwise, he would submit objections, then we are dealing with a legal presumption. When formulating a legal norm, if the legislator’s silence is perceived as an expression of will, then we are dealing with a legal fiction, since there is no will or disagreement in the objective world, in conditions of silence.

**Keywords:** silence, legal certainty, legal fiction, legal substance, legal presumption, tacit consent, direct consent, fictitious administrative act, fictitious official explanation.

\* \* \*

## ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱԼ

ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

### ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՆԵՐՄԱՆ ԽՆԴՐԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրության առարկա են ներման խնդրանքի իրավունքի սահմանադրական բովանդակությանը վերաբերող որոշ հիմնախնդիրներ՝ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության համատեքստում: Կատարված վերլուծության արդյունքով նշվում է, որ Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումը՝ դատապարտյալի ներման խնդրանքի իրավունքի մասով, բավարար որոշակի չէ հստակ պատկերացնելու համար դատապարտյալների ներման խնդրանքի իրավունքի սահմանադրական բովանդակությունը: Հոդվածի շրջանակում կատարված վերլուծությամբ հիմնավորվել է այն մտեցումը, որ դատապարտյալին ներում շնորհելը պետության կողմից մարդասիրության սկզբունքի դրսևորում է, ուստի չպետք է սահմանափակի՝ դատապարտյալի կողմից կատարված հանցագործության բնույթով և ծանրությամբ պայմանավորված:

**Բանալի բառեր.** ներման խնդրանքի իրավունք, դատապարտյալ, խաղաղության և մարդկության դեմ ուղղված հանցագործություն, ներում, համաներում:

**ԱԿԿ ԿԵՏՅԱՆ**

Главный специалист юридического  
управления Аппарата Премьер-министра РА,  
кандидат юридических наук

**НЕКОТОРЫЕ ЗАМЕТКИ О КОНСТИТУЦИОННОМ СОДЕРЖАНИИ ПРАВА НА ПРОШЕНИЕ  
О ПОМИЛОВАНИИ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИИ РА С ИЗМЕНЕНИЯМИ 2015 Г.**

В рамках статьи предметом исследования стали некоторые проблемы, относящиеся к конституционному содержанию права на просьбу о помиловании в контексте Конституции РА с изменениями 2015 года. В результате произведенного анализа отмечается, что предусмотренное регулирование Конституции по части права осужденного на просьбу о помиловании не является достаточно определенным для ясного представления конституционного содержания права осужденного на просьбу о помиловании. В результате анализа, произведенного в рамках статьи, был обоснован подход, что предоставление помилования осужденному государством является проявлением принципа гуманности, поэтому оно не должно ограничиваться характером и тяжестью преступления, совершенного осужденным.

**Ключевые слова:** право на просьбу о помиловании, осужденный, преступление, направленное против мира и человечества, помилование, амнистия.

**HAYK KESOYAN**

Office of the Prime Minister of the  
Republic of Armenia, legal department,  
chief specialist, Phd

**SEVERAL VIEWS ON THE CONSTITUTIONAL CONTENT OF THE RIGHT TO THE APPEAL  
FOR PARDON WITHIN THE CONTEXT OF THE RA CONSTITUTION WITH AMENDMENTS  
OF 2015**

Several problems in connection with of the right to the appeal for pardon within the context of the RA Constitution with amendments of 2015 are the subject of the research within the framework of the article. It is mentioned within the context of implemented analysis that the prescribed regulation of the Constitution in connection with the right to the appeal for clemency isn't enough definite for the clear understanding of the constitutional content of convict's right to the appeal for clemency. An approach has been justified within the context of the analysis implemented in the article which presents that provision of clemency to convict by state is a sign of the principle of humanity that's why it shan't be restricted by essence and gravity of convict's crime.

**Keywords:** right to the appeal for pardon, convict, crime against peace and humanity, clemency, amnesty.

**ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հայ-ռուսական համալսարան  
 Իրավունքի և քաղաքականության ինստիտուտ,  
 Հայ-ռուսական համալսարանի  
 Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության  
 իրավունքի ամբիոնի դասախոս

**ԱՌԱՎԵԼ ՍԵՐՏ ԿԱՊԻ ՍԿԶՐՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ  
 ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Սույն աշխատանքում հեղինակի կողմից վերլուծվում է առավել սերտ կապի սկզբունքի իրավական էությունը: Կատարվել են միջազգային ընդդատության որոշման նպատակով առավել սերտ կապի սկզբունքի կիրառման համեմատական վերլուծություն և դրա հաստատումը որպես կիրառելի իրավունք: Հեղինակի կողմից հիմնավորվում է, որ առավել սերտ կապի որոշման որոշ չափանիշներ կարող են օգտագործվել ինչպես միջազգային ընդդատության, այնպես էլ կիրառելի իրավունքի որոշման համար:

**Բանալի բառեր.** առավել սերտ կապի սկզբունք, միջազգային ընդդատություն, կիրառելի իրավունք, իրավունքի ընտրություն:

**ЛИЛИТ ХАЧАТРЯН**

Российско-Армянский университет,  
 Институт права и политики,  
 преподаватель в Российско-Армянском университете  
 на кафедре гражданского и гражданско-процессуального права

**ПРИМЕНЕНИЕ ПРИНЦИПА НАИБОЛЕЕ ТЕСНОЙ СВЯЗИ В МАТЕРИАЛЬНОМ И  
 ПРОЦЕССУАЛЬНОМ ПРАВЕ**

В данной работе автором была изучена правовая природа принципа наиболее тесной связи. Был проведен сравнительный анализ применения принципа наиболее тесной связи для определения международной подсудности и его определения в качестве применимого права. Автором обосновывается вывод о том, что некоторые критерии определения наиболее тесной связи могут быть применены как для определения международной подсудности, так и для определения применимого права.

**Ключевые слова:** принцип наиболее тесной связи, международная подсудность, применимое право, выбор права.

**LILIT KHACHATRYAN**

Russian-Armenian University,  
 Institute of Law and Policy,  
 Lecturer at Russian-Armenian University,  
 Department of Civil Law and Civil Procedure Law

**THE APPLICATION OF THE PROPER LAW PRINCIPLE IN MATERIAL AND PROCEDURAL LAW**

The present work analyzes the legal nature of the proper law principle. The author has conducted a comparative study of application of the proper law principle for the purpose of determining international jurisdiction and its choice as applicable law. The author supports the conclusion that certain criteria, applied for the determination of proper law may be used both to determine international jurisdiction and applicable law.

**Keywords:** proper law principle, international jurisdiction, applicable law, choice of law.

**ԱՆԱՀԻՏ ԱՅՎԱԶՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի հայցորդ,  
ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅՑԵԿԱՐԳԵՐԸ**

Սույն հոդվածում հեղինակը մանրազնին ուսումնասիրում է իրավունքի սուբյեկտի հիմնական հայեցակարգային մոտեցումները և սահմանումը ժամանակակից իրավագիտության մեջ: Հեղինակը բացահայտում է իրավունքի սուբյեկտի էությունը և յուրաքանչյուր հայեցակարգի բովանդակությունը, որի համաձայն՝ իրավունքի սուբյեկտն իրավաբանական անձ է՝ բնական, անօտարելի իրավունքներով, պարտականություններով և իրավասուբյեկտությամբ օժտված:

**Բանալի բառեր.** իրավաբանական անձ, իրավունքի սուբյեկտ, իրավասուբյեկտություն, բնական իրավունքներ, սուբյեկտիվ իրավունքներ, իրավաբանական պարտականություններ, իրավագիտություն:

**АНАИТ АЙВАЗЯН**

Соискатель Института философии, социологии и права НАН РА,  
член палаты адвокатов РА, адвокат

**ОСНОВНЫЕ КОНЦЕПЦИИ СУБЪЕКТА ПРАВА**

В данной статье автор обстоятельно рассматривает основные концептуальные подходы к определению субъекта права в современной юриспруденции. Автор раскрывает сущность и содержание каждой концепции субъекта права и выдвигает собственные интерпретации содержания субъекта права, согласно которым субъект права – юридическое лицо, обладающее естественными, неотчуждаемыми правами, обязанностями и правосубъектностью.

**Ключевые слова:** юридическое лицо, субъект права, правосубъектность, естественные права, субъективные права, юридические обязанности, юриспруденция.

**ANANIT AYVAZYAN**

PHD student, Post-graduate researcher  
Of Philosophy, Sociology and Law of NAS RA,  
Member of the Chamber of Advocates of RA, advocate

**MAIN THEORIES OF THE SUBJECT OF LAW**

In this article, the author thoroughly examines the main conceptual approaches to the definition of the subject of law in modern jurisprudence. The author reveals the essence and content of each theory of the subject of law and propounds her own interpretations of the content of the subject of law, according to which the subject of law is the legal entity possessing natural, inalienable rights, responsibilities and legal personality.

**Keywords:** legal person, subject of law, legal personality, natural rights, subjective rights, juridical obligations, jurisprudence.

**ՍԱՐԳԻՍ ԱՐՄԵՆԱԿՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ՀՌՈՄԵԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԴԱՍԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿՈԴԻՖԻԿԱՑԻԱՆ**

Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկել է հռոմեական օրենսդրության կոդիֆիկացիայի (համակարգման) հետ կապված հարցերը, ինչպես նաև կոդիֆիկացիայի դերն ու նշանակությունը մայրցամաքային իրավունքի զարգացման գործում:

**Բանալի բառեր.** հռոմեական իրավունք, օրենսդրություն, կոդիֆիկացիա, ֆիզեստներ, եվրոպական իրավունք, իրավաբանական տեխնիկա:

**САРГИС АРМЕНАКЯН**

Соискатель Института философии,  
социологии и права НАН РА

**КОДИФИКАЦИЯ РИМСКОГО КЛАССИЧЕСКОГО И ПОСТКЛАССИЧЕСКОГО  
ЗАКОНОДАТЕЛЬСТВА**

В данной статье подробно рассматриваются вопросы, касающиеся кодификации (систематизации) римского законодательства, а также роли и значения кодификации в развитии континентального права.

**Ключевые слова:** римское право, законодательство, кодификация, дигесты, европейское право, правовая техника.

**SARGIS ARMENAKYAN**

Phd student of the  
Institute of Philosophy, Sociology  
and Law of NAS RA

**CODIFICATION OF THE ROMAN CLASSICAL AND POST-CLASSICAL LEGISLATION**

In this article the author thoroughly discusses issues concerning the codification (systematization) of the Roman legislation, the role and importance of the codification in the development of the Continental Law.

**Keywords:** Roman Law, legislation, codification, digests, European Law, legal technique.

**ՀՀ ՂԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆՂԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՑՆԵՐԸ**

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

**Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար:**